

# ՊԱՏՄԱՌԻԹՅՈՒՆ

1

2002

9VI  
մ-30

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ИСТОРИЯ HISTORY

1

2002

3310



ՏՆՕՐԵՆ՝ ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՎԵՏ ԸԱՀՈՒՄԻ

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԳ՝ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վ. Բ.  
ԴԻԼՈՅԱՆ Վ. Ա.  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ն. Հ.  
ՂԼԵՉՅԱՆ Վ. Գ.  
ՄԵԼԿՈՆՅԱՆ Ա. Ա.  
ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Հ.

ДИРЕКТОР МКРТЧЯН СОКРАТ

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ  
БАРХУДАРЯН В.  
ДИЛОЯН В.  
ОГАНЕСЯН Н.  
ГЛЕЧЯН В.  
МЕЛКОНЯН А.  
МКРТЧЯН Л.

DIRECTOR MKRTCHYAN SOKRAT

EDITORIAL COUNCIL  
BARKHUDARYAN V.  
DILOYAN V.  
HOVHANNISYAN N.  
GHLECHYAN V.  
MELKONYAN A.  
MKRTCHYAN L.

Յրատարակչության տնօրեն՝ ՄԱՇԱ ՄԵԼՍԱԿԱՆՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՐԿՍԱՐՅԱՆ  
Սրբագրիչ՝ ՆՎԱՐԳ ՓԱՐՍԱՌԱՅԱՆ  
Համակարգչային ձևավորող՝ ԼԱԼԱ ՀՈՎՍԵԹՅԱՆ  
Կազմի ձևավորող՝ ՆՈՒՆԵ ԱՐԱՋՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ, բուրժի օֆսեթ, լափսը՝ 70x100/16, ծավալը՝ 12 տպ. մամուլ, տպաքանակը՝ 500

Հայաստանի Հանրապետություն, Երևան 375010, Վարդանանց փակուղի 8,  
«ՏԱԿԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՆԻՐ», «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» հանդես  
Հեռ. 54-89-32, 54-05-17, ֆաքս 54-06-07  
E-mail: zangak@arminco.com

Պարզելի՛ ընթերցող ..... 8

**ՀՈՂՎԱԾՆԵՐ**

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
Հայ արևելագիտության զարգացման հիմնախնդիրները ..... 9

ՎԱՆՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ  
Ներսես Աշտարակեցիքի և հայկական պետականության  
վերականգնման հիմնահարցը ..... 26

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ  
Հայաստանի Հանրապետության տեղը և դերը  
Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային  
քաղաքականության ոլորտում ..... 34

ԱԼԲԵՐՏ ԽԱՈՍՏՅԱՆ  
Կ.Պոլսի հայ գաղթավայրը օսմանյան հարկային  
համակարգում (XVI-XVIII դդ.)..... 45

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ  
Ստեփանոս Դաշտեցու քաղաքական ու դավանական  
դիրքավորման գնահատության հարցի շուրջ ..... 55

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ  
Հայ-վրացական տարածքային խնդիրները և Օսմանյան Թուրքիան 1917-1918 թթ... 62

ՎԱԿԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ  
Ալեքսանդրապոլի ազատագրումը  
թուրքական օկուպացիայից (1921 թ. ապրիլ) ..... 77

ԺԵՆՅԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Ծաղկազարդի տոնը ժողովրդական ու եկեղեցական ծիսակարգում..... 86

ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ  
Յոհաննես Լեփսիուսի հայանապաստ գործունեության  
գնահատականի հարցի շուրջ..... 92

ՍՈՆՅԱ ՄԻՐՁՅԱՆ  
Հայ նշանավոր գերդաստաններ, Խատիսյաններ ..... 103

**ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
Ռուսահայերի օգնությունը հայ գաղթականներին  
Առաջին աշխարհամարտի տարիներին ..... 108

**ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ**  
Հայկական (Արևելյան) Լեգեոնի (1916-1920 թթ.)  
կազմավորման պատմությունից ..... 116

**ՍԱՍՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ**  
Հիմնությունների դիրքորոշումը և կաթողիկոսական  
դատությունները (1950-ական թվականներ) ..... 122

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ**

Լիթանի կաթողիկոսական փոխանորդ եզնիկ վրդ. Ներկարարյանի  
դրությունը Բաղեշի կուսակալությանը, ծանոթ. Մ.Ավետիսյան ..... 133

**ԳԻՏԱՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆՅՈՒԹԵՐ**

**ՐԱՍ ՔՈՍՅԱՆ**  
Մատչեպետը և Թուրքիա III ..... 139

**ՌԻԲԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**  
Գրան Մեծ ..... 144

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ԱԼԵՐԻ ՂԵՉՅԱՆ**  
Համաշխարհային պատմության նոր ժամանակները» թեմայի ուսուցումը ..... 159

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ**  
Ղ.Սիրոզյան, Հովհաննես Մրբուզ Ջուղայեցի ..... 171

**ԼԵՐԵՐ ԲՅՈՒՐԵՉՅԱՆ, ՎԱՀՐԱՍ ՍԻՄՈՆՅԱՆ**  
ատմություն: Հայոց պատմությունը համաշխարհային  
ատմության համատեքստում: Դասագրքեր IX և X դասարանների համար ..... 177

**ԱՆՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ**  
Դրք «ամենացեղական պանական ցեղասպանության մասին» ..... 182

Dear Reader ..... 8

**ARTICLES**

**Nikolay Hovhannisyan**  
Problems of Development of Armenian Oriental Studies:  
New Times, New Demands ..... 9

**Walter Diloyan**  
Nurses Ashtaraketsy and Problem of the Restoration  
of the State of Armenia ..... 26

**Vahan Bayburtian**  
The Place and Role of the Republic of Armenia in the Regional Policy  
of the Islamic Republic of Iran ..... 34

**Albert Kharatian**  
The Armenian Settlement of Stambul in Ottoman System of taxation ..... 45

**Paruir Muradyan**  
On the Estimation of Stephanos Dashtetsy's  
Political and Confessional Position ..... 55

**Ashot Melikian**  
The Territorial Problems Between Armenia and Georgia  
and the Policy of Turkey in 1917-1918 ..... 62

**Vladimir Ghazaketsian**  
Liberation of Alexandrapol from the Turkish Occupation (April, 1921) ..... 77

**Jenya Khachatryan**  
Palm Sundy in Armenian Folk and Christian tradition ..... 86

**Ashot Hayruni**  
About Johannes Lepsius Activity in Favor of Armenian people ..... 92

<b>Sonya Mirzoyan</b> Famous Armenian Families - Khatisyans .....	103
<b>Avetis Harutunyan</b> The Armenian Colony in Russia and Help Organization of the Armenian Refugees during World War I .....	108
<b>Samvel Pogosyan</b> From the History of the Organization of Armenian (Eastern) Legion (1916-1920) .....	116
<b>Amatuni Virabian</b> The Position of the Authorities and the Elections of the Catholicos of All Armenians in 1950s .....	122

**DOCUMENTS AND MATERIALS**

Vicar of the Catholicosate of Akhtamar Archimandrite Eznik Nerkararian about the Volences in Regard to the Armenians in the Vilayet of Baghesh and the Indifference of the Authorities (A document published by Maro Avetisyan) .....	133
--	-----

**SCIENTIFIC-POPULAR MATERIALS**

<b>Aram Kosyan</b> Hatshepsut and Tutmos III .....	139
<b>Ruben Manaseryan</b> Tigranes the Great .....	144

**METHODS OF TEACHING HISTORY**

<b>Valeri Ghlechyan</b> Training of the Theme "The New Times of the World History" in the 7 <sup>th</sup> Year of Secondary Schools of the Republic of Armenia .....	159
--	-----

**BOOK REVIEWS**

<b>Walter Diloyan</b> H. Mirzoyan: Johannes Mrkuz of Djugha. Published by Yerevan University Press. Yerevan, 2001, 271 p .....	171
<b>Albert Khurkhchian, Vahram Simonyan</b> History. The History of the Armenian People in the Context of World History. School-Book of the IX (303 p.) and X Classes (303 p.) of the Secondary Schools ....	177
<b>Walter Diloyan</b> N. Hovhannisyan: The Armenian Genocide—Armenocide: causes, commission, consequences, Yerevan, "Zangak-97", Press, 108 p .....	182

## ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ

Բազում դարերի փորձություններով անցած հայ ժողովուրդը հասավ իր բաղձալի նպատակին՝ ձեռք բերեց անկախություն: Այժմ՝ աշխարհաքաղաքական բարդ ու դժվարին պայմաններում, մեր երկիրը ձեռնամուխ է եղել ազգային պետության կայացման գործին: Անցումային ժամանակաշրջանում աննպաստ պայմաններում հայտնվեցին գիտությունը և մշակույթը: Ազգային հարուստ ժառանգությունն ու ավանդույթները, ստեղծված հզոր ներուժը պահպանելու և այն ժամանակի ոգուն համահունչ զարգացնելու համար մեծ ջանքեր են գործադրվում: «Տաթև գիտակրթական համալիրի» նախաձեռնությամբ հրատարակ իջնող «Պատմություն» հանդեսը այս ուղղությամբ կատարվող մի համեստ քայլ է:

Արդի բեկումնային ժամանակաշրջանում պատմական գիտությունը մեծ առաքելություն ունի՝ նորովի և քննական հայացքով իմաստավորելու հազարամյակների մեր անցյալը, մասնավորապես նոր և նորագույն դարաշրջանների իրադարձությունները: Պատմական անցյալը, դրա փորձի ու բյուրեղացած դասերի իմացությունը մեծապես օգնում են ներկան հասկանալու և ապագան կանխատեսելու: Հետևաբար սեփական պետությունը կառուցող քաղաքացին պարտավոր է քաջատեղյակ լինել իր ժողովրդի անցած ուղուն: Ազգային պատմությունը, հատկապես համաշխարհային պատմության համատեքստում, ձևավորում, դաստիարակում է երիտասարդ սերնդին՝ դառնալու իր հայրենիքի նվիրյալ ու արժանավոր զավակ: Ահա թե ինչու հանդեսը անդրադառնալու է նաև հայոց պատմության հետ առնչվող ընդհանուր պատմության իրողություններին:

Հանդեսը ծնունդ է առնում նաև ազգային պատմության առանցքային հարցերն ու գիտելիքները քարոզելու, տարածելու նպատակով: Այդ միտումով և ընթերցողների առավել լայն շրջանակների հետ հարաբերվելու համար այն ունենալու է պատմագիտական մասնագիտական երևույթները գիտահանրամատչելի եղանակով ներկայացնելու հատուկ բաժին:

Հանդեսի գլխավոր խնդիրներից մեկը լինելու է օգնությունը կրթական համակարգին: Այդ եղանակով մեծ տեղ է հատկացվելու դասագրքերի, մեթոդական ձեռնարկների ստեղծման, առհասարակ ուսուցման հիմնախնդիրներին, որին, հուսով ենք, իրենց եռանդուն մասնակցությունը կբերեն պատմաբան մանկավարժները:

Ծրագրվում է հայ գաղթավայրերի և սփյուռքի պատմության հարցերի լուսարանում և ակնկալվում արտերկրի մասնագետների հետ ստեղծագործական համագործակցություն:

«Պատմություն» հանդեսը չի զուգորդելու հրատարակի վրա գտնվող և ժամանակի քննությունը բռնած պարբերականներին: Դրանք, առանց բացառության, ավելի լայն ընդգրկում ունեն և պատմությանը համագոր ու դրան հավասար անդրադառնում են նաև հայագիտության մյուս ճյուղերին:

Հանդեսը հայցում է պատմաբանների, հարակից գիտությունների ներկայացուցիչների, մանկավարժների, կրթական ոլորտի աշխատողների և ընթերցող հասարակայնության գործակցությունը:

Բարի երթ մարթենք «Պատմություն» հանդեսին:

«Տաթև գիտակրթական համալիրի» տնօրեն՝ Սուկրատ Սկրտչյան  
«Պատմություն» հանդեսի խմբագրական խորհուրդ

## ՆՈՒՎԱԾՆԵՐ

### ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ,  
ՆՈՐ ՊԱՅԱՆՋՆԵՐ

ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Արևելագիտությունը կամ, եվրոպական հորջորջումով, օրիենտալիստիկական հանդիսանում է հումանիտար գիտությունների ամենաէական, ինքնատիպ և կարևոր բնագավառներից մեկը: Ժամանակակից փոկում պատմագիտական, քաղաքագիտական, բանասիրական, տեքստաբանական և աղբյուրագիտական խորքային և ամբողջական ուսումնասիրությունները թերի և ոչ լիարժեք կլինեն, եթե հաշվի չառնվեն այդ հիմնախնդիրների արևելագիտական ասպեկտները:

Դարեր շարունակ արևելագիտությունը չի համարվել որպես գիտության ուրույն, առանձին ոլորտ: Միայն XVI-XVII դարերից սկսած՝ այն առանձնանում է ընդհանուր հումանիտար գիտությունների մեջ որպես ինքնուրույն բնագավառ և դիտարկվում որպես այդպիսին: Այդ ժամանակներից ի վեր Անգլիայում, Ֆրանսիայում, Յուլանդիայում, ապա նաև Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում և այլուր հայտնվում են արևելագետ-օրիենտալիստ մասնագետներ և ձևավորվում

առաջին արևելագիտական գիտական և ուսումնական կենտրոնները:

Այդ հիման վրա արևելագիտությունը, թող արտառոց չթվա, համարվել է զուտ «եվրոպական» կամ «արևմտյան» գիտություն:

Արդյո՞ք ճիշտ է նման մոտեցումը: Ե՛վ այո, և՛ ոչ: Կարծում ենք, որ այստեղ անհրաժեշտ է երկու բան տարանջատել իրարից և չհիփոթել դրանք միմյանց հետ:

Առաջին՝ «արևելագիտությունը»՝ որպես եզր, եվրոպական կամ արևմտյան երևույթ է: Նա եվրոպական միջավայրում է հայտնվել որպես գիտական նոր ուղղության բնորոշիչ և հանդիսանում է եվրոպական գիտական մտքի արգասիք, որի ուսումնասիրության առարկան ոչ թե եվրոպան կամ Արևմուտքն է, այլ, այսպես ասած, այն ամենը, ինչը որ «եվրոպա» կամ «Արևմուտք» չէ: Եթե ասվածին ավելացնենք այն ծանրակշիռ ներդրումը, որ կատարել են եվրոպական արևելագետներն այս բնագավառում, ապա դրանով կսպառվի արևելագիտության եվրոպական գիտական ուղղություն լինելու հանգամանքը:

Երկրորդ՝ արևելագիտությունը դարերից ի վեր՝ մինչև եվրոպական ուսումնասիրողների կողմից հետաքրքրության դրսևորումն Արևելքի նկատմամբ, գոյություն է ունեցել և զարգացել իր ճանապարհով՝ շնորհիվ տեղաբնակ արևելյան ժողովուրդների ծոցից դուրս եկած քանքարավոր գիտնականների պտղաբեր

Հայաստանը՝ նշելով, որ «Հայաստանի պատմությունն ինքնին սկզբից ևեթ պատկանում է նույնքան Արևմուտքին, որքան և Արևելքին: Այդ պատճառով Վերածննդի դարաշրջանի բացումը նրանում կարելի է նույնիսկ մեկնաբանել Վերածննդի շրջանակների անհրաժեշտ ընդլայնում Արևմուտքում»<sup>6</sup>:

Գիտական արևելագիտության զարգացման մեջ կարևոր փուլ պետք է համարել արևելյան էպիգրաֆիկայի առանձնացումը և որպես առանձին առարկայի ուսումնասիրությունը, և դասական արևելագիտության վերածումը բանասիրականից պատմաբանասիրականի:

Այդուհանդերձ, անգամ այդ փոփոխություններից հետո արևելագիտությունը երկար ժամանակ շարունակում էր մնալ նախ և առաջ որպես արևելյան բանասիրություն:

Այս ասպարեզում իսկական հեղաշրջում կատարվեց նոր, հատկապես նորագույն շրջանում, մասնավորապես XX դարի կեսերից սկսած: Դա պայմանավորված էր այն արմատական քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններով, որ տեղի ունեցան ամբողջ աշխարհում: Գաղութատիրության համակարգի փլուզումը, բազմաթիվ անկախ պետությունների կազմավորումը Ասիայում և Աֆրիկայում, նրանց ներգրավումը միջազգային հարաբերությունների ոլորտը որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, նրանց քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների խիստ կենսական հարցերը, ժամանակակից աշխարհում նրանց տեղի և դերի հիմնախնդիրը և այլն, այս բոլորը մեծապես բարդացրին և տարաբնույթ դարձրին առանց այդ էլ համայն մարդկության առջև կանգնած քաղաքական, ազգային-էթնիկական, սոցիալ-տնտեսական խնդիրները: Դրանք պահանջում էին իրենց լուծումները պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 22:

Ակնհայտ էր, որ այդ հիմնախնդիրների լուծումն անհնար էր բանասիրական գիտությունների շրջանակներում՝ դասական արևելագիտության մակարդակով:

Նորաստեղծ պատմական իրավիճակը և միջազգային հարաբերություններում Արևելքի երկրների և ժողովուրդների դերի և նշանակության կտրուկ աճը խթանեց Արևելքի երկրների պատմության, քաղաքականության, միջազգային հարաբերությունների, սոցիալ-տնտեսական, գաղափարաբանական, մարդագրական և այլ հանգուցային հարցերի ուսումնասիրությունը և համապատասխան արևելագիտական ուղղությունների ձևավորումը:

Արևելագիտության բնագավառում դասական բանասիրական ուղղությունը, որը դարեր շարունակ տիրապետող դիրքեր ուներ, իր տեղը զիջեց նոր՝ պատմագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական, սոցիալական, գաղափարաբանական և հարակից ուղղություններին, որոնք հանդիսանում են առաջնային և ստրատեգիական նշանակություն ունեցող ուղղություններ ժամանակակից արևելագիտության մեջ:

Դա, իհարկե, չի նշանակում հրաժարում բանասիրական ուղղությունից: Բանասիրական ուղղությունը պահպանում է և կպահպանի իր կարևորությունը, և ժամանակակից արևելագիտությունը հնարավոր չէ պատկերացնել առանց բարձր զարգացած դասական արևելագիտության, էպիգրաֆիկայի, լեզվաբանության, գրականագիտության և այլն: Խոսքն այդ մասին չէ, այլ այն մասին, որ ժամանակակից աշխարհի հասարակական-քաղաքական զարգացումը, նրա օրինաչափությունների ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջին պլան մղեցին պատմագիտական-քաղաքագիտական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և դրա հետ կապված՝ այդ հիմնախնդիրներն ուսումնասիրող արևելագիտական ուղղությունները:

Ահա պատմական այսպիսի կտրվածքով և արևելագիտական նոր ձևավորված ուղղությունների շրջանակներում պետք է դիտարկել ներկա փուլում հայ արևելագիտության առջև կանգնած խնդիրները և զարգացման հեռանկարները:

\* \* \*

Սակայն մինչ այդ անհրաժեշտ ենք համարում համառոտակի անդրադառնալ հայ արևելագիտության անցած ուղու և զարգացման առանձնահատկությունների վրա, առանց որի հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել ներկա փուլում նրա առջև կանգնած խնդիրների մասին:

Հայ արևելագիտությունն իր պատմական արմատներով գնում է դարերի խորքը: Նա նույնքան հին է, որքան այսպես ասած «զուտ» հայագիտությունը:

Յնում դարեր շարունակ հայագիտությունը և արևելագիտությունը սերտորեն միախառնված էին, և շատ դժվար էր գործնականում անհնար, հայագիտությունը սահմանազատել արևելագիտությունից: Յնում հայագետները նույնքան հայագետ էին, որքան և արևելագետ:

Դա բացատրվում է նրանով, որ պատմական տվյալ դարաշրջանում գիտությունների խիստ մասնագիտացում և բաժանում դեռևս չկար: Դա պետք է տեղի ունենար հետագայում շատ դարեր անց: Տիպարանորեն նման և ազգակից գիտությունների բաժանարար սահմանները հստակ չէին, և որևէ մեկը կարող էր հանդես գալ որպես մի քանի մասնագիտությունների կրող:

Մյուս կողմից, հայ ժողովրդի զարգացումը և գոյությունը շատ բանով կախված էր հարևան երկրների և ժողովուրդների հետ նրա ունեցած փոխհարաբերություններից և փոխազդեցություններից կամ ըստ ժամանակակից տերմինաբանության, միջազգային և ռեգիոնալ հարաբերություններից, աշխարհաքաղաքական իրադրությունից: Այդ հանգամանքը պար-

տադրում էր հայ պատմաբանին մշտապես, խորը և բազմակողմանիորեն ուսումնասիրել հայ ժողովրդի անմիջական և մոտիկ հարևանների պատմությունը, քաղաքականությունը, մշակույթը, լեզուն, օրենքները, անգամ սովորույթները: Դա կենսական անհրաժեշտություն էր: Իսկ քանի որ Հայաստանն աշխարհագրականորեն պատկանում է Արևելքին, և նրա հարևանները Արևելքի զանազան երկրներ և ժողովուրդներ էին, ապա ակամայից հայ պատմաբանը, անկախ այն բանից՝ նա ցանկանում էր դա, թե ոչ, պետք է այս կամ այն չափով լիներ նաև արևելագետ:

Դրա փայլուն օրինակն է մեր պատմահայր Մովսես Խորենացին, որի «Հայոց պատմություն» աշխատությունը ոչ միայն հայ ժողովրդի պատմության անգերազանցելի սկզբնաղբյուր է, այլև հայերի հարևան ժողովուրդների՝ ասորեստանցիների, բաբելացիների, հույների, պարսիկների, վրացիների, ալանների և տարածաշրջանի այլ ժողովուրդների և էթնիկական խմբերի մի յուրահատուկ համրագիտարան:

Բարեբախտաբար, Պատմահայրն այս առումով եզակի երևույթ չէ հայ իրականության մեջ: Ընդհակառակը, հին և միջին դարերի մեր բոլոր պատմիչները վերոնշյալ սկզբունքի անդավաճան հետևորդներն ու մարմնավորողներն էին: Եվ, ամենայն հավանականությամբ, դա է այն գլխավոր պատճառներից մեկը, որ հայ պատմիչների՝ Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Յովհաննես Դրասխանակերտցու, Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու, Արիստակես Լաստիվերցու, Սամվել Անեցու, Առաքել Դավրիժեցու և շատ ու շատ ուրիշների թողոնը, որպես բարձրարժեք և մեծ հեղինակություն վայելող, իսկ երբեմն նաև անփոխարինելի սկզբնաղբյուր, փնտրված է միջազգային հեղինակավոր արևելագետների և արևելագիտական կենտրոնների կողմից:

Դիտարկելով հայ արևելագիտության զարգացման պատմական ուղին՝ նկատելի է մի կարևոր օրինաչափություն: Կախված այն բանից, թե պատմական տարբեր դարաշրջաններում ինչ բնույթի են եղել Հայաստանի հարաբերություններն իր այս կամ այն հարևան երկրի հետ, ինչպես նաև այն հանգամանքից, թե որ պետությունն է տվյալ պատմական դարաշրջանում ունեցել առավել տիրապետող դիրքեր մերձավորարևելյան և կովկասյան տարածաշրջանում, հայ պատմիչների գործերում տիրապետող են դառնում այդ հարևանի կամ երկրի պատմության, քաղաքականության, մշակույթի և այլ հարցերի լուսաբանությունը:

V-VII դարերում հայ պատմիչների գործերում գերակայում էր իրանական թեման, տեղեկություններն Իրանի մասին, որը միանգամայն հասկանալի է: Ըստ այդմ՝ հայ պատմիչների՝ Ազաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու աշխատությունները պարունակում են հարուստ, հաճախ նաև եզակի նյութ և տեղեկություններ իրանական իրականության տարբեր կողմերի մասին: Թեև հարկ է նշել, որ նրանք անգնահատելի նյութ են պարունակում նաև Ասորիքի, Հռոմի և Բյուզանդիայի, Վրաստանի, Աղվանքի և այլ երկրների վերաբերյալ:

VII-XI դարերում հայ պատմիչների գործերում արդեն տիրապետող է դառնում արաբական թեման, որը պայմանավորված էր Իրանի դերի անկումով և տարածաշրջանում նոր կայսրության՝ Արաբական խալիֆայության բարձրացումով, որը ձգվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս, և որին մաս էին կազմում նաև Իրանը, Հայաստանը, Վրաստանը, ամբողջ Մերձավոր Արևելքը, Հյուսիսային Աֆրիկան և այլն: Այս պատմական նոր իրողությունն իր համարժեք արտահայտությունն է գտնում հայ պատմիչներ Սեբեոսի, Ղևոնդի, Թովմա Արծրունու,

Հովհաննես Դրասխանակերտցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Տարոնացու և այլոց գործերում:

Հետագա դարերում՝ թյուրքական քոչվորական տարբեր ցեղերի տարածաշրջան ներխուժումից և պատմության թատերաբեմում հայտնվելուց հետո, նոր փոփոխություն է առաջանում հայագետարևելագետ պատմիչների թեմատիկայում և ուսումնասիրության դաշտում: Առաջին պլան են գալիս թուրքագիտական հարցերը՝ կապված հայ ժողովրդի գոյատևության հետ: Այդ հարցերի վերաբերյալ հավաստի տեղեկություններ են թողել Կիրակոս Գանձակեցին, Մատթեոս Ուռհայեցին, Արիստակես Լաստիվերցին և շատ ուրիշներ:

Հայ պատմիչների այս մեծարժեք աշխատությունները, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի արժեք, ասորերենից, հունարենից, պարսկերենից, արաբերենից կատարված թարգմանչական գործերի հետ միասին հանդիսանում են այն հիմքը, որի վրա խարսխված է հայ արևելագիտությունը, և որի վրա հետագայում՝ նորագույն շրջանում, բարձրացավ ժամանակակից հայ արևելագիտության կառույցը:

Ստացվել է այնպես, որ արևելյան գանազան ժողովուրդների պատմության որոշ շրջաններ անհնար է ամբողջությամբ և խորությամբ լուսաբանել առանց հայ պատմիչների գործերի և նրանցում պարունակվող եզակի տեղեկությունների:

Իրանի հայտնի պատմաբան և բանասեր Սաիդ Նաֆիսիի հաստատմամբ՝ անհնար է առանց հայկական աղբյուրների ամբողջապես վերականգնել Իրանի հին և միջնադարյան պատմությունը և գրել Իրանի ամբողջական պատմությունը<sup>7</sup>:

Այս կամ այն չափով նույնը կարելի է ասել նաև Արաբական խալիֆայությանը, Օսմանյան կայսրությանը, Կովկասին, վրացիներին, աղվաններին, քրդերին և

<sup>7</sup> Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և ժողովուրդներ, հ. VIII, Իրան, Երևան, 1975, էջ 140:

այլ ժողովուրդների պատմությանը և մշակույթին վերաբերող հայկական միջնադարյան աղբյուրների վերաբերյալ:

Հայ պատմիչների ընդհանուր բնույթի աշխատություններին զուգահեռաբար, միջին դարերում հայ հեղինակները ավելի ու ավելի հաճախ են հրապարակ հանում ուսումնասիրություններ՝ նվիրված առանձին երկրների կամ ժողովուրդների պատմությանը: Դրանց թվին են պատկանում Գրիգոր Ակնեցու «Պատմութիւն վասն ազգին նետողաց», Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց», Խաչատուր աբեղայ Ջուղայեցու «Պատմութիւն Պարսից», Երեմիա Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ Ղե տարւոյ Օսմանցոց թագաւորացն» և այլն:

Հայկական աղբյուրների կարևորությունը հարևան արևելյան ժողովուրդների պատմության տեսանկյունից կայանում է առաջին հերթին նրանում, որ շատ հայ պատմիչներ եղել են իրենց նկարագրած դեպքերի ակնատեսները և մանրամասն ու բարեխղճորեն գրի են առել այն ամենը, ինչ որ տեսել են: Այստեղից էլ նրանց հավաստիությունը, որը հետագայում հաստատվել է մասնագետ գիտնականների կողմից, աղբյուրների համեմատական-քննական ուսումնասիրության ժամանակ:

Երկրորդ՝ հայկական աղբյուրները պարունակում են հարուստ և բազմատեսակ նյութ, շատ արժեքավոր տեղեկություններ ոչ միայն քաղաքական դեպքերի և ռազմական արշավանքների մասին, այլև, որ շատ կարևոր է, հայերի հարևան արևելյան ժողովուրդների և երկրների ներքին կյանքի, տնտեսության, հարկերի և հարկային համակարգի, պետական կառուցվածքի և կառավարման, ժողովրդի վիճակի, մշակույթի և այլ կարևոր հարցերի մասին:

Դրանք շատ հաճախ անփոխարինելի տեղեկություններ են, որոնք մեծ արժեք են ներկայացնում արևելագիտության համար: Պատահական չէ, երբ ակադեմիկոս

Վ.Վ. Բարտոլդը նշում է, որ «եվրոպական գիտնականները XIX դարի սկզբներին հետաքրքրվում էին զլխավորապես հայկական պատմագիտական գրականությամբ, որտեղ նրանք հույս ունեին նյութեր գտնել Առաջավոր Ասիայի վերաբերյալ»<sup>8</sup>:

Հայ արևելագիտությունն անմասն չմնաց արևելագիտական կենտրոնների կազմավորման համաշխարհային գործընթացից, որ սկիզբ առավ XVII-XVIII դարերում Եվրոպայում և այնուհետև մեծ թափ ստացավ աշխարհում XIX-XX դարերում: Հայկական գիտական կենտրոններ ձևավորվեցին սկզբում բուն Հայաստանից դուրս, ապա՝ նաև Հայաստանում:

Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղում 1815 թ. Մոսկվայում հիմնված Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որը մեծապես խթանեց ոչ միայն հայկական, այլև ռուսական արևելագիտության զարգացմանը: Ակադեմիկոս Յ.Ա. Օրբելու բնութագրմամբ՝ Լազարյան ճեմարանը՝ «այդ հայկական ոչ մեծ ուսումնական հաստատությունը դարձավ ռուսական արևելագիտության խոշորագույն ուսումնական և գիտական կենտրոններից մեկը»<sup>9</sup>:

Այդ ճեմարանի անվան հետ են կապված այնպիսի հայտնի և միջազգային ճանաչում ստացած ռուս արևելագետների անունները, ինչպես Ն.Ալեքսանդրովը, Խ.Բարանովը, Վ.Գորդլևսկին, Վ.Մինորսկին և ուրիշներ:

Լազարյան ճեմարանի հետ է կապված Ս.Նազարյանցի, Գ.Խալաթյանցի, Ն.Եմինի, Ք.Պատկանյանի, Լ.Մսերյանցի և այլոց գիտական գործունեությունը: Այս գիտնականների զրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ իրանագիտության, թուրքագիտության, արաբագիտության, քրդագիտու-

<sup>8</sup> Бартольд В.В., История изучения Востока в Европе и России, с. 291.

<sup>9</sup> Стів Базинянц А.П., Лазаревский институт восточных языков, М., 1959, с. 3.

թյան և արևելագիտության այլ բնագավառների վերաբերյալ, որի շնորհիվ հայ գիտական արևելագիտությունը բարձրացավ մի նոր՝ բարձր աստիճանի:

Բարձր գնահատելով հայ արևելագետների ծառայությունները և գիտական վաստակը՝ ակադեմիկոս Վ.Բարտոլդը՝ XX դարի խոշորագույն արևելագետներից մեկը, նշում է, որ «Ռուսական գիտությունը հայագի և վրացական գիտնականներին է պարտական ինչպես հայկական և վրացական շրջանակներում մշակված գիտական հայացքների Ռուսաստանում տարածվելու համար, այնպես էլ հետագայում եվրոպական գիտության մեթոդների հիման վրա այդ հայացքների ճշգրտման համար»<sup>10</sup>:

Հայագիտական կենտրոններ են ձևավորվում նաև եվրոպական երկրներում՝ Իտալիայում, Ավստրիայում, Յուգոսլավիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, որտեղ հայագիտական ուսումնասիրությունների հետ համատեղ կատարվում են նաև արևելագիտական հետազոտական աշխատանքներ:

Խիստ բեղմնավոր եղավ, մասնավորապես, Մխիթարյան միաբանության գործունեությունը Վենետիկում և Վիեննայում: Մխիթարյան հայրերի՝ Մ.Չամչյանի, Ղ.Ալիշանի, Ղ.Ինժիճյանի, Գ.Այվազովսկու և այլոց աշխատություններում հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի հետ միասին քննարկվել են Իրանի, Թուրքիայի, արաբական երկրների պատմության հարցերը:

Աստիճանաբար գիտական կենտրոնի է վերածվում Էջմիածինը, որտեղ, հատկապես Գևորգյան ճեմարանի հիմնադրումից հետո, կատարվում են նաև արևելագիտական բնույթի աշխատանքներ:

Այսպիսին են ընդհանուր գծերով հայ արևելագիտության զարգացման հիմնական ուղղությունները և առանձնահատկությունները մինչև XX դարի երկրորդ

տասնամյակի վերջը, երբ վերականգնվեց հայոց պետականությունը, և բոլորովին նոր պայմաններ ստեղծվեցին հայ արևելագիտության զարգացման համար:

Կարելի է ասել, որ ծանրակշիռ է հայ արևելագետների վաստակը և ներդրումը պատմական այդ ժամանակաշրջանում Մերձավոր և Միջին Արևելքի հին, միջնադարյան և նոր շրջանի պատմության, բանասիրության և մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

\*\*\*

Արևելագիտությունը Հայաստանում պատմության մեջ առաջին անգամ պետական հովանավորության պայմաններում սկսեց զարգանալ 1920-ական թվականներից՝ խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո: Այդ իշխանության գործունեությունը իրավամբ արժանացել է հակասական գնահատականների, որի գլխավոր մեղավորն ինքը՝ վարչակարգն էր և նրա հակասական քաղաքականությունը:

Մի կողմից առկա էին քաղաքական խիստ սահմանափակումներ, հետապնդումներ և հալածանքներ, ազատությունների ոտնահարում, ամբողջատիրական վարչակարգ, իսկ մյուս կողմից՝ մշակույթի և գիտության անսխալընթաց վերելք և ծաղկում: Այս ֆենոմենը դեռևս սպասում է իր անկողմնակալ հետազոտողին, մի հարց, որի լուսաբանությունը, սակայն, չի մտնում ներկա հոդվածի խնդիրների մեջ:

Կարելի է ասել, որ Խորհրդային Հայաստանում գիտության բոլոր ճյուղերի՝ թե ավանդական և թե նորաստեղծ, զարգացման համար ստեղծվեցին առավել նպաստավոր պայմաններ, այդ թվում և արևելագիտության համար:

Արևելագիտության զարգացումը դրվում է կազմակերպական նոր հիմքերի վրա, որով նա դադարում է հայագիտության աղախինը լինելուց և դառնում է գիտության ինքնուրույն ճյուղ՝ ուսումնասիրության իր սեփական դաշտով: Իհարկե,

<sup>10</sup> Бартольд В.В., История изучения Востока в Европе и России, с. 293.

սրանից չպետք է եզրակացնել, թե նա կապերը խզում է մայր գիտության հայագիտության հետ: Բնավ: Արևելագիտությունը դառնում է հայագիտության բնական դաշնակից գիտություն, և նրանք միասին, համատեղ լուծում են հայ ժողովրդի և հայոց պետության առջև կանգնած հիմնախնդիրները՝ հայագիտական և արևելագիտական մակարդակներով:

Սկզբնական շրջանում՝ 1920-1930-ական թվականներին, Հայաստանում նոր մակարդակով արևելագիտության զարգացման մեջ առաջնային էր 1919 թ. հիմնված Երևանի պետական համալսարանի դերը, որը ստանձնել էր ոչ միայն գիտական դարբնոցի դժվարագույն ֆունկցիան, այլև գիտական ուղղությունների ձևավորման և զարգացման ազգային-պետական նշանակություն ունեցող պարտականություն:

Եվ հիմա, հետադարձ հայացք նետելով, կարող ենք ասել, որ Երևանի պետական համալսարանը պատվով է կատարել իր այդ դերը:

1923 թ. մեծագույն լեզվաբան, ակադեմիկոս Յ.Աճառյանի նախաձեռնությամբ սկսվում է արևելագիտական որոշ առարկաների, լեզուների և գրականության դասավանդումը Երևանի պետական համալսարանում: Նա ինքը դասավանդում էր արաբերեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներ, սանսկրիտ, արևելյան լեզվաբանության պատմություն և այլն:

Նշանակալի էր նաև խոշորագույն պատմաբան, ակադեմիկոս Յ.Մանանդյանի դերը, որի աշխատություններում հայ ժողովրդի պատմության հանգուցային հարցերի ուսումնասիրությունը աղերսվում էր հարևան երկրների և ժողովուրդների, մասնավորապես հույների, հռոմեացիների, պարսիկների և արաբների պատմության հետ:

Հայաստանում արևելագիտության ձևավորման և զարգացման մեջ մեծ է նաև ակադեմիկոս Գ.Ղափանցյանի և ուրիշ գիտնականների դերը:

3310


1940 թ. Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի կազմում բացվում է արևելագիտության բաժին և հիմնվում արևելյան լեզուների և գրականության ամբիոն, որը գլխավորում է ակադեմիկոս Յ.Աճառյանը: Այդ պահից արևելագիտական կադրերի պատրաստումը դրվում է նոր հիմքերի վրա և տարվում պլանավորված կարգով:

Հայաստանում գիտության, այդ թվում և արևելագիտության համար պատմական նշանակություն ունեցավ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնումը 1943 թ.: Ուշագրավ է, որ նրա առաջին պրեզիդենտը եղավ համաշխարհային համբավ վայելող հայագետ և արևելագետ Յովսեփ Օրբելին:

Թեև նա Հայաստանի ակադեմիան ղեկավարեց ոչ շատ երկար ժամանակ՝ մինչև 1947 թ., սակայն նրա գտնվելը հայոց գիտության շտաբի ղեկավարի պաշտոնում խիստ բարերար եղավ հունանիտար բոլոր գիտությունների, այդ թվում և արևելագիտության զարգացման համար:

1947 թ. նրան այդ պաշտոնում փոխարինեց XX դ. մեծագույն գիտնականներից մեկը՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, որը ակադեմիան ղեկավարեց շուրջ կես դար: Այդ տարիները եղան Հայաստանում գիտության ծաղկման տարիներ, և Հայաստանը նվաճեց զարգացած գիտության երկրի համբավ: Իսկ դրանում իրենց համեստ ներդրումն ունեցան նաև հայ արևելագետները:

XX դարի կեսերից նախկին Խորհրդային Միությունում սկսվում է արևելագիտության, առաջին հերթին նրա պատմագիտական, քաղաքագիտական և տնտեսագիտական ուղղությունների բուռն զարգացումը: Այդ դրական երևույթն անմիջականորեն կապված էր Ասիայում և Աֆրիկայում ծավալված ազգային-ազատագրական շարժումների և հակազաղութային պայքարի ուժեղացման, իմպերիալիզմի գաղութային համակարգի փլուզման,



նախկին զաղութների կողմից քաղաքական անկախության նվաճման, աշխարհում տեղի ունեցած արմատական և հեղափոխական բնույթի փոփոխությունների և դրա հետ կապված հորհրդային Միության արևելյան քաղաքականության աննախադեպ ակտիվացման հետ:

Սառը պատերազմի տարիներին առևտրային աշխարհի հետ վտանգավոր առճակատման մեջ գտնվող և, ըստ էության, համաշխարհային տիրապետության ձգտող ԱՄՆ-ից հետո աշխարհի երկրորդ գերտերությունը ԽՍՀՄ-ը իր արևելյան քաղաքականության իրականացման համար կարիք էր զգում արևելագետ մասնագետների, որոնց ուսումնասիրության արդյունքները և հանձնարարականները պետք է ծառայեին այդ գերխնդրի իրագործմանը:

Այդ խնդրի իրագործմանն էր նպատակաուղղված հորհրդային Միությունում, հատկապես նրա արևելյան հանրապետություններում, արևելագիտական նոր կենտրոնների ստեղծումը: Խորհրդային կառավարությունը ելուն էր այն իրողությունից, որ այդ հանրապետություններում կային արևելագիտական աշխատանքների ավանդույթներ, նրանց բնակչությունը գիտեր Արևելքը, ծանոթ էր արևելյան ժողովուրդների սովորույթներին, ավանդույթներին, նիստուկացիին և այլն, հանգամանքներ, որոնք պետք է դյուրացնեին արևելագիտական ուսումնասիրությունները և ավելի հավաստի դարձնեին նրանց գիտական հետազոտությունների արդյունքները և իշխանություններին ներկայացվող հանձնարարականները:

Ահա այս նկատառումներով 1950-1970-ական թվականներին ուժեղացվում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը Մոսկվայում և նրա բաժանմունքը Սանկտ Պետերբուրգում, հիմնվում են արևելագիտության նոր ինստիտուտներ խորհրդային արևելյան մի շարք հանրապետություններում՝ Ուզբեկստանում, Տաջիկստանում,

Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում, կազմավորվում առանձին արևելագիտական հետազոտման խմբեր Ուկրաինայում, Ղազախստանում, Թուրքմենիայում և երկրի այլ կենտրոններում:

Այդ քայլն իրեն լիովին արդարացրեց, քանի որ նա մեծ, կարելի է անգամ ասել վճռորոշ դեր խաղաց արևելագիտական բարձրորակ և բազմապրոֆիլ կադրերի պատրաստման և արևելագիտական ուսումնասիրությունների աշխուժացման և ընդարձակման գործում նախկին խորհրդային ամբողջ տարածքում: Այդ տարիներին ձևավորվեց շատ հզոր խորհրդային արևելագիտական դպրոց:

Այդ պրոցեսի մեջ ներգրավվեց նաև Հայաստանը: 1954 թ. մարտին Հայաստանի ԳԱ նախագահության որոշումով պատմության ինստիտուտի կազմում ստեղծվեց Մերձավոր և Միջին Արևելքի պատմությունը և տնտեսությունն ուսումնասիրող խումբ, որտեղ հավաքվեցին հանրապետության տարբեր հաստատություններում աշխատող հայ արևելագետները, այդ թվում նաև հայտնադարձ մասնագետները:

Չորս տարի անց՝ 1958 թ. հոկտեմբերին, վերոհիշյալ խմբի հիմքի վրա Հայաստանի կառավարության և գիտությունների ակադեմիայի նախագահության համատեղ որոշումով ստեղծվեց Հայաստանի Խորհրդային Հանրապետության գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորը: Դա Հայաստանում առաջին ինքնուրույն արևելագիտական ակադեմիական գիտական կենտրոնը եղավ, որի հիմնադիրը և առաջին վարիչը հանդիսացավ ակադ. Մ.Գ. Ներսիսյանը:

Շատ բեղմնավոր եղավ սեկտորի գործունեությունը, որն ընդգրկում է 1958-1971 թթ.: Հստակ կերպով հաստատվեցին հայ արևելագիտության ուսումնասիրության աշխարհագրական սահմանները, և որպես այդպիսին՝ ընտրվեց Մերձավոր և Միջին Արևելքը: Նա մեծապես նպաստեց արևելագիտական նոր և բարձրորակ կադ-

րերի պատրաստմանը, արևելագիտական գրադարանի ստեղծմանը, որը մինչև այժմ միակն է հանրապետությունում և այլն:

Հաշվի առնելով արևելագիտության գիտական նվաճումները, կուտակված գիտական փորձը և արևելագիտական կադրերի առկայությունը՝ 1971 թ. մայիսին ԽՍՀՄ ԳԱ նախագահության, Հայաստանի կառավարության և Հայաստանի ԳԱ նախագահության որոշմամբ՝ արևելագիտության սեկտորը վերակազմավորվեց Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի":

Արևելագիտության ինստիտուտի ստեղծումով հայ արևելագիտությունը բարձրացավ նոր մակարդակի:

Նրա կազմում ձևավորվեցին Արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և քրդագիտության բաժինները, որոնց հետագայում ավելացան Հին Արևելքի, կովկասագիտության և բյուզանդագիտության բաժինները: Բոլոր այդ ուղղությունների գծով կատարվել և շարունակում են կատարվել լուրջ գիտահետազոտական աշխատանքներ, որոնք մեծ ճանաչում բերեցին հայ արևելագիտությանը: Եթե հակիրճ կերպով ներկայացնելու լինենք կատարված աշխատանքները, ապա հետևյալ պատկերն է ստացվում:

Արաբագիտության բնագավառում գերակշռող է եղել արաբական երկրներում, մասնավորապես՝ Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում, Հորդանանում և այլն, ծավալված ազգային-ազատագրական շարժումների, արաբական երկրների անկախության նվաճման, նրանց սոցիալ-քաղաքական զարգացման ուղիների ուսումնասիրությունը: Դրա կողքին իրենց արժանի տեղն են գտել միջագ-

" Ինչպես նշվեց, արևելագիտության սեկտորի առաջին վարիչը եղավ ակադ. Մ.Գ.Ներսիսյանը, իսկ 1959-1971 թթ. պրոֆ. Գ.Գ.Ինճիկյանը: Արևելագիտության ինստիտուտի առաջին տնօրենը 1971 թ. դարձավ ակադ. Գ.Խ.Սարգսյանը, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1994 թ.: 1995 թվականից ցայսօր այդ պաշտոնը զբաղեցնում է տղերքիս հեղինակը:

գային և միջարաբական հարաբերությունների, իսլամի դերի, գաղափարախոսության, արաբական աղբյուրների, ինչպես նաև արաբական երկրների հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը:

Վերոհիշյալ խնդիրներն իրենց արտացոլում են գտել Ն.Յ. Հովհաննիսյանի, Ա.Ն. Տեր-Ղևոնդյանի, Յ.Ս. Սարգսյանի, Ա.Ա. Բայրամյանի, Յ.Կ. Թուրյանցի, Յ.Խ. Թովուզյանի, Ե.Յ. Նաջարյանի, Յ. Ս. Ժամկոչյանի, Ը.Լ. Կարամանուկյանի, Կ.Խ. Սամվելյանի, Ե.Ա. Աբգարյանի, Պ.Յ. Սարաջյանի, Յ.Ս. Գրիգորյանի և այլոց մեծագրական ուսումնասիրությունների մեջ:

Ինստիտուտում մշտապես մեծ նշանակություն է տրվել թուրքագիտության զարգացմանը: Հայ թուրքագետներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են Օսմանյան կայսրության և Թուրքական Հանրապետության պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, ազգային բուրժուազիայի ձևավորման և այլ հանգուցային հարցերի լուսաբանության վրա: Առանձնահատուկ տեղ է գրավել Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը: Այդ հարցերի լուսաբանությանն են նվիրված Մ.Գ. Ներսիսյանի, Մ.Կ. Ջուլալյանի, Ե.Ղ. Սարգսյանի, Յ.Գ. Ինճիկյանի, Զ.Ս. Կիրակոսյանի, Ա.Խ. Սաֆրաստյանի, Ռ.Գ. Սահակյանի, Ռ.Պ. Կոնդակչյանի, Ա.Յ. Փափազյանի, Յ.Ս. Կորխմազյանի, Ռ.Ա. Սաֆրաստյանի և մյուսների մեծագրական ուսումնասիրությունները:

Իրանագիտության բնագավառում ուսումնասիրությունները տարվել են հիմնականում երեք ուղղություններով՝ Իրանի պատմություն, իրանական բանասիրություն և հայ-իրանական պատմամշակութային հարաբերությունների հետազոտում: Այդ հարցերն իրենց լուսաբանությունն են գտել Յ.Գ. Փափազյանի, Յ.Ս. Եգանյանի, Վ.Ա. Բայբուրդյանի, Ա.Գ. Ստամբուլյանի, Յ.Յ. Մովսիսյանի, Ա.Կ. Կոզմոյանի, Ա.Յ. Ստեփանյանի,

Օ.Ա. Արզումանյանի, Է.Շ. Խուրշուդյանի, Լ.Յ. Շեխոյանի, Ա.Ա. Բուդաղյանի, Գ.Մ. Նալբանդյանի աշխատություններում:

Հայաստանում հնուց ի վեր մեծ է եղել հետաքրքրությունը քրդերի, նրանց պատմության, բանահյուսության, հայ-քրդական փոխհարաբերությունների նկատմամբ, որը դարձել է Հայաստանի քրդագետների ուսումնասիրության գլխավոր թեման: Դրան ավելացավ նաև քրդերի ազատագրական պայքարի ուսումնասիրությունը Իրաքում և այլն: Այս հարցերն իրենց արտացոլումն են գտել Հաջիե Ջեդիի, Ամինե Ավդալի, Շ.Խ. Միոյանի, Մ.Յ. Խանոյանի, Խ.Մ. Չատուկի, Գ.Ս. Ասատրյանի, Ա.Պ. Փուլադյանի, Կ.Ա. Չաչանիի, Ջալիլիե Ջալիլի, Օրդուխանե Ջալիլի և մյուս քրդագետների ուսումնասիրություններում:

Այդ ժամանակաշրջանում բուռն թափով զարգացավ հայ կովկասագիտությունը և բյուզանդագիտությունը՝ որպես հայագիտությունից անջատված ուղղություն: Առանձնապես պետք է նշել վրացագիտության զարգացումը՝ Վրաստանի քաղաքական և էթնիկական պատմության, մշակույթի, հիմն վրացական և հիմն հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, վերջիններիս պատմաբանասիրական վերլուծությունը, Վրաստանի և Հայաստանի միջնադարյան պատմության համեմատական հետազոտումը, Աղվանքի, չերքեզահայերի պատմությունը և այլ հարցեր: Դրանց լուսաբանությանն են նվիրված Պ.Մ. Մուրադյանի, Պ.Ա. Չոբանյանի, Յ.Գ. Մարգարյանի, Ա.Յ. Հակոբյանի, Յ.Ս. Խառատյանի, Կ.Գ. Ավետյանի մենագրական աշխատությունները:

Բյուզանդագիտության բնագավառում ևս արձանագրվեցին ուշադրության արժանի նվաճումներ: Բյուզանդական ուսումնասիրությունները տարվում են երեք ուղղություններով՝ հույն հեղինակների երկասիրությունների հայկական թարգմանությունների, բյուզանդական հեղինակ-

ների գործերի և հայ-բյուզանդական քաղաքական, էթնիկական և եկեղեցադավանաբանական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Այդ թեմատիկային են նվիրված Յ.Մ. Բարթիկյանի, Կ.Մ. Մուրադյանի, Ա.Ա. Բոզոյանի, Ե.Գ. Ջաղացպանյանի, Ա.Կ. Մաթևոսյանի աշխատությունները:

Իսկ ինչ վերաբերում է Հին Արևելքի ուսումնասիրությանը, ապա այս թեմատիկան իր մեջ ներառում է սեպագիր և մեհենական քաղաքակրթությունների ուսումնասիրությունը, այդ թվում այնպիսի հարցերի, որոնք ուղղակիորեն առնչվում են նաև Հայկական լեռնաշխարհի և հայոց էթնոգենեզի հանգուցային հարցերի հետ: Դա հուրի-ուրարտական, ասուրբաբելական, շումերական, խեթական, լուվիական արեալն է, այդ տարածաշրջանի քաղաքական և ռազմական պատմության ուսումնասիրությունը, սեպագիր և մեհենական աղբյուրների վերծանումն ու մեկնաբանումը, հնագույն լեզուների օրինաչափությունների և առնչությունների և այլ հարցերի լուսաբանումը: Դրանք իրենց արտացոլումն են գտել Գ.Խ Սարգսյանի, Ն.Վ. Հարությունյանի, Վ.Ն. Խաչատրյանի, Մ.Լ. Խաչիկյանի, Ա.Վ. Քոսյանի, Ն. Մկրտչյանի և այլոց մենագրություններում:

Արևելագիտության ինստիտուտն այն եզակի ինստիտուտներից է, որ ձեռնամուխ եղավ թեմատիկ մատենաշարերի հրատարակմանը, ինչպես «Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա» և «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ»: Բավական է նշել, որ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարից արդեն հրատարակվել է 20 հատոր: Նրանց էջերում հանդես են եկել ոչ միայն Հայաստանի, այլև արտասահմանյան բազմաթիվ ականավոր արևելագետներ:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը պատվով կատարեց իր առջև դրված գիտական խնդիրները և դարձավ

Խորհրդային Միության ճանաչված և քարծր հեղինակություն վայելող կարևոր արևելագիտական կենտրոններից մեկը<sup>12</sup>:

\*\*\*

Արևելագիտության զարգացման համար սկզբունքորեն նոր շրջան սկսվեց 1990-ական թվականների սկզբներից, որը կապված էր Խորհրդային Միության փլուզման և 1991 թ. անկախ Հայաստանի Հանրապետության կազմավորման հետ: Դադարեց գոյություն ունենալ նաև ԽՍՀՄ գիտությունների ակադեմիան որպես նախկին խորհրդային բոլոր հանրապետությունների գիտությունների ակադեմիաները միավորող միասնական կառույց:

Այդ բոլորի հետևանքով հանրապետական գիտությունների ակադեմիաների և նրանց կազմի մեջ մտնող գիտահետազոտական ինստիտուտների համար ստեղծվեց նոր կարգավիճակ: Նրանք այլևս ինքնուրույն են, և իրենք են որոշում իրենց զարգացման խնդիրները:

Նոր կարգավիճակ ստեղծվեց նաև հայ արևելագիտության և նրա առաջատարը հանդիսացող Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի համար: Ինչպես որ Հայաստանի գիտությունների ակադեմիան վերածվեց գիտությունների ազգային ակադեմիայի, այնպես էլ արևելագիտության ինստիտուտը դարձավ ազգային ինստիտուտ:

Նախկինում Խորհրդային Միության և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի գոյության ժամանակ, արևելագիտության զարգացման հիմնական խնդիրները որոշվում և ուղղությունները սահմանվում էին ոչ թե երևանում, այլ Մոսկվայում:

Ճիշտ է, որոշ չափով հաշվի էր առն-

վում տեղական ինստիտուտների կարծիքը, սակայն հիմնական ուղղությունները նախօրոք սահմանվում և վերջնականապես հաստատվում էին Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի համապատասխան բաժանմունքների և նախագահության կողմից:

Այդպես էր պարագան կապված բոլոր հանրապետությունների բոլոր ինստիտուտների հետ:

Հայաստանի անկախության նվաճումից հետո իրավիճակն արմատականորեն փոխվեց: Այժմ երևանում են որոշվում արևելագիտության, ինչպես նաև մյուս հումանիտար գիտությունների, զարգացման հիմնական ուղղությունները և խնդիրները՝ ելնելով առաջին հերթին անկախ Հայաստանի պահանջներից և կարիքներից: Թեմատիկայի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի՝ որպես անկախ պետության հանգամանքով:

Կարծում ենք, որ սա որակապես նոր կարգավիճակ է, որը մի կողմից նրան տալիս է ազգային գիտության իմաստ այդ բառի լավագույն իմաստով, իսկ մյուս կողմից՝ բարձրացնում նրա պատասխանատվությունը իր առաքելությունը կատարելու տեսանկյունից:

Փոխվեց նաև հայ արևելագիտության ֆունկցիոնալ գործառույթը: Եթե նախկինում նա, որպես խորհրդային արևելագիտության բաղկացուցիչ մաս, սպասարկում էր Խորհրդային Միության գիտական և քաղաքական շահերը, ապա այժմ նա կոչված է ծառայել և, իրոք, ծառայում է հայոց պետությանը՝ սպասարկելով նրա գիտական և քաղաքական շահերը և պահանջները:

Սակայն չպետք է կարծել, թե այդ փոփոխությունները մեխանիկական էին: Նրանք մեխանիկական չէին և չէին էլ կարող լինել, քանի որ ԽՍՀՄ-ի՝ ժամանակակից աշխարհի գերտերություններից մեկի առջև բոլորովին այլ գիտական և քաղաքական խնդիրներ էին կանգնած, իսկ նորանկախ Հայաստանի առջև, որի կարգա-

<sup>12</sup> Այդ շրջանում Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի գործունեության մասին մանրամասն տե՛ս Оганесян Н.О. Становление и развитие востоковедения в Советской Армении, в кн. „Востоковедение центры в СССР/Азербайджан, Армения, Грузия, Украина/... М., „Наука“, 1988, с. 45-72:

վիճակն անհամեմատելի է նախկին  
խորհրդային Միության կարգավիճակի և  
հետապնդած քաղաքականության հետ,  
բոլորովին այլ խնդիրներ են կանգնած:

Նշելով հայ արևելագիտության  
ֆունկցիոնալ նոր գործառույթի մասին՝  
մենք նկատի ունենք առաջին հերթին այն  
հանգամանքը, որ անկախ Հայաստանում  
նա հանդիսանում է ստրատեգիական ուղի-  
ղության գիտություն: Դա պայմանավոր-  
ված է նրա ուսումնասիրության օբյեկտով  
և Հայաստանի անկախ պետություն լինե-  
լու հանգամանքով: Իսկ դա նոր խնդիրներ  
է դնում հայ արևելագիտության առջև և  
նոր պահանջներ ներկայացնում նրան:

Հայ արևելագիտությունն այսօր Հա-  
յաստանում միակ ձևավորված գիտական  
ուղղությունն է, որ ուսումնասիրում է ան-  
կախ Հայաստանի անմիջական հարևաննե-  
րի՝ Թուրքիայի, Իրանի, արաբական երկր-  
ների, Վրաստանի, Ադրբեջանի ոչ միայն  
պատմությունը և մշակույթը, այլև, առաջին  
հերթին, նրանց քաղաքականությունը Հա-  
յաստանի հանդեպ, անդրկովկասյան և մեր-  
ձավորարևելյան աշխարհաքաղաքական  
հիմնախնդիրները, մոտեցումները տարա-  
ձառյալաբանային խնդիրներին և այլն:

Արևելագիտությունն այդ հարցերի ու-  
սումնասիրությունն իրականացնում է Ռու-  
սաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպական միության  
և այլ երկրների մերձավորարևելյան և  
անդրկովկասյան քաղաքականության հա-  
մատեքստում:

Արևելագիտական այս հետազոտու-  
թյուններն իրենց բնույթով ստրատեգիա-  
կան են և խիստ կարևոր Հայաստանի ար-  
տաքին քաղաքականության տեսանկյու-  
նից: Դրանք կարող են նպաստել մեր հան-  
րապետության արտաքին քաղաքական  
հարցերի մշակմանը, իրագործմանը և  
ճիշտ կողմնորոշմանը:

Բայց միայն դրանով չի սահմանա-  
փակվում նրանց նշանակությունը:  
Արևելագիտական հետազոտություններն  
այսօր կարևոր են Հայաստանի ազգային

անվտանգության հայեցակարգի մշակ-  
ման և ազգային անվտանգության ապա-  
հովման առումով:

Ժամանակակից փուլում հայ արևելա-  
գիտության առջև կանգնած ազգային-պե-  
տական և ստրատեգիական կարևոր նշա-  
նակություն ունեցող հարցերի լուծումը  
փոփոխություն առաջ բերեց հայ արևելա-  
գիտության թեմատիկայում պրոբլեմների  
առաջնայնության առումով: Անխուսափե-  
լիորեն առաջին պլան մղվեցին քաղաքա-  
գիտական, տնտեսագիտական, զաղա-  
փարաբանական, կրոնի, քաղաքակրթու-  
թյունների երկխոսության, տարածաշրջա-  
նային հարաբերությունների և գլոբալ  
զարգացումների հիմնախնդիրները:

Կարևոր նշանակություն է ձեռք բերել  
Հայաստանը՝ որպես մերձավորարևելյան-  
անդրկովկասյան աշխարհաքաղաքական  
տարածաշրջանային գործոն լինելու, նրա  
դերի և տեղի կարևորագույն հարցի գի-  
տական լուսաբանությունը:

Դրա հետ միասին մենք չպետք է թու-  
լացնենք մեր աշխատանքները Արևելքի  
երկրների և ժողովուրդների հին և միջնա-  
դարյան պատմության, բանասիրության և  
մշակույթի ուսումնասիրության ուղղու-  
թյամբ, որը Հայաստանի անկախ պետու-  
թյուն դառնալու շնորհիվ ոչ միայն չի կորց-  
րել իր արդիականությունը, այլև, ընդհակա-  
ռակը, ձեռք է բերել նոր իմաստ և կարևորու-  
թյուն մեզ համար: Այժմ, քան երբևիցե, շատ  
կարևոր է դառնում Մատենադարանի  
արևելյան գանձերը ավելի մեծ ծավալնե-  
րով աշխարհին ներկայացնելու անհրաժե-  
տությունը: Կարծում ենք, որ այս բոլորն ու-  
նի ոչ միայն մշակութային նշանակություն,  
այլև ձեռք է բերում քաղաքական իմաստ:

Հայ արևելագիտության առջև կանգ-  
նած կարևոր խնդիրներից է նրա ուսում-  
նասիրությունների աշխարհագրական  
սահմանների ընդլայնումը: Դա, բացի այլ  
հանգամանքներից, թելադրված է Հայաս-  
տանի պետական շահերով և արտաքին  
քաղաքականության խնդիրներով:

Հայտնի է, որ հայ արևելագետների  
ուսումնասիրությունների տեսադաշտում  
ավանդաբար հիմնականում Մերձավոր  
Արևելքը և Անդրկովկասն են: Դա միանգա-  
մայն հասկանալի և բացատրելի է, քանի  
որ այդ տարածքը Հայաստանի կենսատա-  
րածքն է, և մենք պարտավոր ենք առաջին  
հերթին իմանալ և պարզաբանել, թե ինչ է  
կատարվում մեզ անմիջականորեն շրջա-  
պատող տարածքում, և դա ինչպես կարող  
է անդրադառնալ Հայաստանի աշխարհա-  
քաղաքական իրադրության վրա:

Սակայն անկախությունից հետո Հա-  
յաստանի համար այդ սահմանները նեղ  
են գալիս, և մենք չենք կարող սահմանա-  
փակվել միայն Մերձավոր Արևելքով և  
Անդրկովկասով: Հայաստանի համար  
ավելի ու ավելի մեծ նշանակություն են  
ձեռք բերում հարաբերությունների զար-  
գացումն այնպիսի երկրների հետ, ինչպես  
Պնդկաստանը, որի հետ մենք ունեցել ենք  
հարուստ պատմամշակութային կապեր,  
Չինաստանը, Ճապոնիան և արևելյան այլ  
երկրներ, որոնք իրենք իրենց հերթին  
նույնպես ցուցաբերում են որոշակի հե-  
տաքրքրություն Հայաստանի նկատմամբ:

Դա անհրաժեշտ է դարձնում նշված  
և այլ երկրներ ներառել հայ արևելագի-  
տության ուսումնասիրությունների ոլոր-  
տը: Իհարկե, դա կապված է որոշակի  
դժվարությունների, առաջին հերթին  
լեզվիմացության և համապատասխան  
մասնագետների առկայության հետ:  
Ամենայն հավանականությամբ, անհրա-  
ժեշտ կլինի Երևանի պետական համալ-  
սարանում սկսել հնդկերենի, չինարենի  
և ճապոներենի դասավանդումը և հա-  
մապատասխան մասնագետների պատ-  
րաստումը: Կարելի է մտածել նաև վերը  
նշված երկրներ հայ երիտասարդ մաս-  
նագետներ ուսումնասիրության ուղար-  
կելու մասին, որն այժմ հնարավոր է լու-  
ծել պետական մակարդակով, այդ երկր-  
ների և Հայաստանի միջև գիտության և  
մշակույթի բնագավառում համագոր-

ծակցության համաձայնագրերի շրջա-  
նակներում:

Կարելի է ասել, որ հայ հնդկագետնե-  
րի, չինագետների և ճապոնագետների  
պատրաստումն այսօր արդեն հայ  
արևելագիտության դուռն է թակում:

Նոր պայմաններում, երբ հայ արևելա-  
գիտության առջև կանգնել են նոր խնդիր-  
ներ, բացառիկ նշանակություն է ձեռք բե-  
րում ընդհանրապես արևելագիտական  
կադրերի պատրաստման հարցը: Այս բնա-  
գավառում քիչ բան չի արվել, առաջին  
հերթին շնորհիվ Երևանի պետական հա-  
մալսարանի արևելագիտության ֆակուլ-  
տետի: Նրա բազմաթիվ շնորհալի շրջա-  
նավարտներ հաջողությամբ աշխատել և  
շարունակում են աշխատել արևելագի-  
տության ասպարեզում:

Սակայն արևելագիտական կադրերի  
պատրաստման հարցում կան լուրջ խն-  
դիրներ:

Անհրաժեշտ է կատարելագործել դա-  
սավանդումը, բարձրացնել ուսանողու-  
թյան արևելյան լեզուների՝ արաբերենի,  
թուրքերենի և պարսկերենի, ինչպես նաև  
Եվրոպական լեզուների իմացության մա-  
կարդակը, որը միշտ չէ, որ բավարարում է:  
Դա հարցի մի կողմն է:

Հարցի մյուս և վերին աստիճանի  
կարևոր կողմը պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի պրոֆի-  
լի փոփոխության հարցն է: Նա հիմնակա-  
նում բանասիրական թեքում ունի և իր շր-  
ջանավարտներին պատրաստում է որպես  
հայկական դպրոցի ուսուցիչներ: Դա չի  
կարող բավարարել այսօրվա պահանջնե-  
րը՝ կապված այն հանգամանքի հետ, որ  
այսօր Հայաստանին պետք են այնպիսի  
արևելագետներ, որոնք ի վիճակի լինեն  
լուրջ ուսումնասիրություններ կատարել  
արևելագիտության այն բնագավառնե-  
րում, որոնք ունեն ստրատեգիական նշա-  
նակություն:

Այս խնդիրը ճիշտ լուծելու համար  
անհրաժեշտ է արևելագիտական ֆակուլ-

տետը դարձնել պատմագիտական բնույթի, առաջնային տեղ հատկացնել պատմագիտական, քաղաքագիտական և տնտեսագիտական տարբեր առարկաների, այդ թվում և միջազգային և ռեգիոնալ հարաբերությունների, մասնատիպ այլ առարկաների ավելի ընդլայնված և խորացված դասավանդմանը:

Դա ավելի հուսալի բազա կստեղծի ոչ միայն արևելագիտությունը, այլև Հայաստանի արտաքին քաղաքականության հետ առնչություն ունեցող բոլոր հաստատությունները համալրելու բարձրորակ և լավ պատրաստվածություն ունեցող ապագա մասնագետներով:

Արևելագիտության առջև կանգնած կարևոր խնդիրներից է արևելագիտական գրադարանների ստեղծումը և նրանց մշտական հարստացումը մասնագիտական գրականությամբ: Գիտական ինֆորմացիայի բոլոր տեսակի աղբյուրներ՝ արխիվային նյութեր, պաշտոնական փաստաթղթեր, հրատարակություններ, պարբերական մամուլ, ինտերնետային ցանցում առկա տեղեկատվություն և այլն, այդ բոլորը պետք է մատչելի լինեն արևելագետներին ուղղակիորեն և չմիջնորդավորված: Այս հարցը կենտրոնական հարցերից մեկն է ժամանակակից փուլում:

Այս կապակցությամբ կցանկանայինք նշել, որ շատ հարուստ արևելագիտական գրադարան ունի ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, որը պարունակում է մոտ 60 հազար միավոր գրականություն հայերեն, անգլերեն, արաբերեն, գերմաներեն, թուրքերեն, եբրայերեն, պարսկերեն, ռուսերեն, քրդերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով: Եվ թեև նա յուրաքանչյուր տարի համալրվում է որոշակի քանակությամբ գրականությամբ, այդուհանդերձ, դա բավարար չէ: Անհրաժեշտ է այդ կարևոր աշխատանքը դնել պլանավորված հիմքի վրա:

Նոր ժամանակները նոր խնդիրներ են դնում ոչ միայն արևելագիտության և

արևելագետների առջև և պահանջում նրանցից որոշակի վերակառուցում՝ կապված Հայաստանի անկախ հանրապետության գոյության և նրա առջև կանգնած հույժ կարևոր տարաբնույթ խնդիրների հետ, այլև համաձայն խնդիրներ են առաջադրում նաև հայոց պետությանը:

Պատկերավոր կերպով ասած՝ գիտությունը, այդ թվում և արևելագիտությունը, միակողմանի երթևեկությամբ պողոտա չէ: Նա երկկողմանի երթևեկություն է: Արևելագիտությունը միայնակ՝ առանց պետական աջակցության, չի կարող լուծել իր առջև կանգնած խնդիրները: Ուրեմն պետությունը և պետք է փոխի իր դիրքորոշումը գիտության հանդեպ, կրավորական և հայեցողական դիրքորոշումից անցնի գիտությանն ակտիվորեն աջակցելու և նրա հետ սերտորեն համագործակցելու քաղաքականության: Պատմական փորձը վկայում է, որ ուժեղ են կամ ուժեղանում են այն երկրները, որտեղ հաստատվում է դաշինք գիտության և պետության միջև, որտեղ պետությունը իր ներքին և արտաքին քաղաքականությունը կառուցում է գիտության տվյալների և հանձնարարականների վրա:

Հայաստանի իշխանությունները պետք է և՛ խոսքով, և՛ գործով ընդունեն արևելագիտության ստրատեգիական կարևորությունը և համագործակցեն նրա հետ:

Միսալ կլինեն ասել, թե ընդհանրապես համագործակցություն չկա արևելագիտության և իշխանական կառույցների միջև: Այդպիսի համագործակցություն կա, մասնավորապես ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ: Սակայն համուն արդարության հարկ է նշել, որ դա ավելի շատ անձնական նախաձեռնություն է, քան թե համակարգված գործողության արդյունք է և, բնականաբար, չի կարող բավարար համարվել: Ուստի անհրաժեշտ է այս հարցում ունենալ մշակված և ծրագրավորված քաղաքականություն, որից կշահեն թե՛ Հայաստանի արտաքին քաղաքականությունը և թե՛ արևելագիտությունը:

Պետք է անցնել կառավարության կողմից արևելագիտությանը ուղղակի պատվերներ և հանձնարարություններ տալու քաղաքականությանը: Մենք ի նկատի ունենք, մասնավորապես, Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության համար հետաքրքրություն ներկայացնող այս կամ այն հարցի վերաբերյալ հայ արևելագետների մեծագրական ուսումնասիրություններ, հոդվածներ և վերլուծական տեղեկանքներ պատվիրելու խնդիրը:

Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանի արտաքին քաղաքականության, պաշտպանական, տնտեսական և այլ գերատեսչությունները օգտագործեն հայ արևելագետների (ինչպես նաև մյուս գիտությունների) ներուժը հանրապետության առջև կանգնած կենսականորեն կարևոր խնդիրների լուծման համար:

Եվ, վերջապես, արևելագիտությունը՝ որպես ստրատեգիական ուղղության գիտություն, իշխանությունների հոգատարության, մասնավորապես ֆինանսական աջակցության կարիքն է զգում:

Այդ մասին հատուկ նշվեց այս տարի մարտ ամսին կայացած ՀՀ ԳԱԱ նախագահության միստում, որտեղ լսվում էր արևելագիտության ինստիտուտի հաշվետվությունը ինստիտուտի կատարած գիտահետազոտական աշխատանքների մասին: Նախագահության որոշման մեջ բարձր գնահատական տրվեց հայ արևելագետների աշխատանքներին, շեշտվեց հայ արևելագիտության ստրատեգիական ուղղություն լինելու հանգամանքը և, ելնելով այդ հանգամանքից, որոշվեց դիմել հանրապետության պատկան մարմինների ամենալայն աջակցությանը, այդ թվում և ֆինանսական, ցույց տալ արևելագիտության հետագա զարգացմանը:

Հավատացած ենք, որ հայ արևելագիտության հետագա զարգացումը, նրա նյութական և ֆինանսական ամրապնդումը, կրթված և պատրաստված աշխատակիցներով համալրելը հոգուտ Հայաստանի երրորդ հանրապետության է և կծառայի նրա առջև կանգնած բազմաթիվ խնդիրների հաջող լուծմանը մեր դաժան ժամանակներում՝ գլոբալիզացիայի դարաշրջանում:

**Problems of Development of Armenian Oriental Studies:  
New Times, New Demands**

Nikolay Hovhannisyan

SUMMARY

A new stage had begun in the development of the Armenian Oriental Studies (AOS) at the beginning of 1990s, after the dissolution of the Soviet Union and the emergence of independent Republic of Armenia.

AOS had been institutionalized as an independent national scientific direction whose main tasks are not anymore defining in Moscow, as it were during the Soviet times, but in Yerevan. From this period AOS started to serve both the scientific and political interests of Armenia, connected first of all with its foreign policy and national security, i.e. it obtained strategical significance, implementing strategical functions. An important change took place also in the priorities of AOS's problems. Now the dominating problems are the study of history, policy, economy, international and regional relations, geopolitical situation in the Middle East and Transcaucasia, etc.

The author underlines the idea that the further development of AOS and fulfillment of its tasks, largely depends upon the establishment of close cooperation between the science and state powers in the sense of using by the powers of the results of the scientific research works of the Armenian orientalists, from one hand, and the support, including financial, of AOS from the state, from the other hand.









**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԵՎ  
ՂԵՐԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՈՒ**

**ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՂՅԱՆ**

Խորհրդային Միության փլուզման հետևանքով նորանկախ պետությունների, այսպես կոչված, «հարավային գոտու» ստեղծումը, որն իր մեջ ընդգրկում էր Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորաստեղծ հանրապետությունները, լուրջ տեղաշարժեր մտցրեց Իրանի աշխարհաքաղաքական իրողությունների մեջ: Նախ՝ այդ երկրի և Ռուսաստանի միջև գոյանում էր բուֆերային մի գոտի, որի հետևանքով վերանում էին երկու երկրների միջև ցամաքային սահմանները: Դրա կարևորությունն Իրանի համար պայմանավորված էր նրանով, որ առ այսօր նրա քաղաքական էլիտայի մեջ քիչ չէ այն մարդկանց թիվը, որոնց քաղաքական մտածողությունը իներցիայի ուժով այնպիսին է, որ Ռուսաստանն ու Իրանը, անկախ ներկա իրողություններից, ավելի շուտ պատմական մրցակիցներ են, քան դաշնակիցներ: Այդ գործիչները թերահավատ են, որ Ռուսաստանը վերջնականապես հրաժարվել է կայսերապաշտությունից, ամբողջատիրական սկզբունքներից և տարածքային նվաճողականության գրգիռներից: Սակայն, չնայած դրան, Անդրկովկասի և հատկապես Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետությունների նկատմամբ իրենց քաղաքականությունը մշակելիս ԻԻՀ քաղաքական գործիչները ի սկզբանե սկսեցին վարել վերին աստիճանի զգույշ գիծ՝ հայտարարելով, որ Իրանը «գիտակցում ու ընկալում է» Ռու-

սաստանի հատուկ շահերը հիշյալ երկրներում:<sup>1</sup> Այնուհետև՝ Իրանի համար չափազանց կարևոր էր, որ թե՛ Անդրկովկասի և թե՛ Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետությունները դեռևս հնագույն ժամանակներից սկսած կազմել են, այսպես կոչված, «իրանական աշխարհի» բաղկացուցիչ մասը, իսկ նրանց բնակիչները դարեր շարունակ դաստիարակվել են իրանական մշակույթի, գրականության և ավանդույթների անմիջական ազդեցության ներքո: Այդ երկրներից մեկի՝ Տաջիկստանի բնակչությունը խոսում է պարսիկների միննույն ֆարսի լեզվով և էթնիկական առումով ցեղակից է Իրանի ժողովրդին: Իսկ Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը և Ուզբեկստանը դավանում են իսլամը, ուստի և հոգևոր-կրոնական կապերի մեջ են գտնվում Իրանի հետ: Ինչ վերաբերում է Հայաստանին և Վրաստանին, ապա նրանք Իրանի հետ կապվում են վաղեմի մշակութային ավանդույթներով<sup>2</sup>: Ուստի նորանկախ հանրապետությունների հետ հարաբերություններ իրականացնելիս՝ ԻԻՀ քաղաքական շրջանները խուսափում էին «իսլամական հեղափոխություն» արտահանելու քայլերից և առաջ մղում հարևան ժողովուրդների հետ հոգեկան ու մշակութային հարազատության և պատմականորեն նրանց «միասնական ընտանիքի» պատկանելության վերաբերյալ կոնցեպցիան: Իրանական քաղաքական գործիչները սկսեցին շեշտել նաև Իրանի հարուստ մշակութային ժառանգության դերը որպես ռազմավարական գործոն:

**Խորհրդային Միության փլուզումով**

<sup>1</sup> St'u Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство, под редакцией Р. М. Авакова и А. Т. Лисова, М., 2002 г.; К. Гаджиев, Геополитика Кавказа, М., 2001 г.  
<sup>2</sup> Доктор Аббас Малеки, Иран и Туран: к вопросу об отношениях Ирана с государствами Центральной Азии и Закавказья, «Центральная Азия и Кавказь», 5(17), 2001 г., стр. 114.

ոչ միայն վերանում էր վերջին երկու հարյուրամյակների ընթացքում Իրանի անվտանգությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող պետությունը, այլև չքանում էր հյուսիսային հարևանների հետ Իրանի հարաբերությունների հնուց ի վեր գոյություն ունեցող ասիմետրիան<sup>3</sup>:

Այլ կերպ ասած՝ հյուսիսում Իրանի համար ստեղծվում էր անվտանգության մի հաստատուն գոտի, մասնավորապես նկատի ունենալով, որ Իրանը, համեմայն դեպս այսօր, ավելի հզոր է և ռազմական առումով ավելի ուժեղ Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի հանրապետություններից: Անշուշտ, այլ հարց է, որ Հյուսիսային Կովկասում ծավալվող իրադարձությունները, հատկապես ռուսական զորքերի արյունահեղ բախումները չեզնչեցին հետ, տարածաշրջանային այլ էթնիկական կոնֆլիկտները և այլև, խիստ մտահոգում են Իրանին, որովհետև նրանցից յուրաքանչյուրը կարող է աճել ու ծավալվել և խիստ բացասական ազդեցություն ունենալ ԻԻՀ ներքին իրադրության վրա՝ այն ապակայունացնելու իմաստով:

Բոլոր դեպքերում, հանդիսանալով միջինարևելյան աշխարհաքաղաքական միջավայրի նյութական ու մարդկային ռեսուրսներով, արդյունաբերական ներուժով և ռազմական հնարավորություններով առաջատար պետություններից մեկը, ԻԻՀ-ն հնարավորություն ստացավ տարածաշրջանային, քաղաքականության բնագավառում վարելու վերին աստիճանի մեծ լիցք պարունակող, եռանդուն ու գործուն մի քաղաքականություն:

Նշված իրողությունները, անտարակույս, չէին կարող իրենց ուժգին ազդեցությունը չունենալ իրանցիների ներկա սերնդի աշխարհայացքի և միջազգային հարաբերությունների զարգացման նկատ-

մամբ նրանց հայացքների ձևավորման ընթացքի վրա<sup>4</sup>: Օրինակ՝ մի շարք վերլուծաբաններ նկատել են, որ Խորհրդային Միության փլուզումը նոր մղում հաղորդեց ԻԻՀ պանիրանիստական-ազգայնական մտածողություն ունեցող քաղաքական վերնախավի մի շարք ազդեցիկ ներկայացուցիչների պատվախնդրությանը, որը ոչ միայն երազում էր, այլև գործնականում քայլեր էր ձեռնարկում ԻԻՀ-ն վերածելու տարածաշրջանի ձգողության կենտրոնի<sup>5</sup>: Քաղաքական այդ շրջանակներում կային մարդիկ, որոնք գտնում էին, որ Անդրկովկասի մի շարք տարածքներ նախկինում գտնվել են Իրանի կազմում և այժմ պետք է «վերադարձվեն»: Սակայն իրանական ղեկավարության մեծագույն ծառայությունն այն է, որ նա տուրք չտվեց այդ դատողություններին և նպաստեց այդ վտանգավոր սինդրոմի հաղթահարմանը, որի հետևանքով և Իրանը ընթացավ ժամանակակից աշխարհի իրողությունների հունով:

Անկասկած, Հարավային Կովկասի տարածաշրջանում ԻԻՀ-ն քաղաքականությունը եղել և մնում է հետևյալը. տարածաշրջանի երկրները «եվրակենտրոն» կողմնորոշումից շրջել դեպի «ասիական կողմնորոշումը»:

Վերոհիշյալ իրողությունների համատեքստում ո՞րն է Հայաստանի Հանրապետության տեղն ու դերը ԻԻՀ տարածաշրջանային քաղաքականության ոլորտում: Մինչև այս հարցին պատասխանելը նախ պետք է նշել, որ ի սկզբանե ԻԻՀ-ն Հարավային Կովկասի երկրների հետ իր ռազմավարական շահերը սկսեց զարգացնել ինչպես քաղաքականության ու անվտանգության բնագավառներում, այնպես էլ տնտեսության ասպարեզում<sup>6</sup>: Ընդ որում, ԻԻՀ

<sup>4</sup> St'u Fuller Graham E. Turkey Faces East, New Orientations Toward the Middle East and the Old Soviet Union. Santa Monica, CA: Rand, 1992, p.45-46.  
<sup>5</sup> St'u Svante Cornell, Iran and the Caucasus, Sweden, Upsala University, 1998.

<sup>6</sup> St'u Herzig Edmund: Iran and the Former Soviet South. London, The Royal Institute for International Affairs, 1995, p. 2.

կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ Անդրկովկասը հանդիսանում է իր արտաքին քաղաքականության առաջնային կամ նախապատվելի ուղղություններից մեկը<sup>6</sup>:

ԻԻՀ-ն առաջին պետություններից մեկն էր, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը և նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: Հենց սկզբից թեհրանը Հայաստանի Հանրապետության հետ միջպետական հարաբերություններին տվեց առաջնայնություն և մեծ կարևորություն: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Հայաստանը և Իրանը սահմանակից պետություններ են: Ընդ որում, նրանց սահմանները խաղաղության ու բարեկամության սահմաններ են: Խորհրդային Միության տարիներին նրանք միմյանցից բաժանված էին քաղաքական համարյա անանցանելի սահմաններով: Անկախության ձեռքբերումով Հայաստանն Իրանի հետ հայտնվեց նույն տարածաշրջանում և անմիջականորեն ընդգրկվեց տարածաշրջանային քաղաքական կյանքի մեջ: Հայաստանն ու Իրանը ներկա աշխարհի իրողություններում ունեն բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ, բազմապիսի ընդհանրություններ, պատմական ավանդական կապեր և այլն: Նրանք տարածաշրջանի այն հազվագյուտ պետություններից են, որոնք չունեն տարածքային վեճեր, քաղաքական բնույթի պրոբլեմներ և երկկողմանի հարաբերությունները մթազնող այլ խնդիրներ: Թեհրանում քաջ գիտակցում են նաև, որ Հայաստանը որոշակի դերակատարություն ունի տարածաշրջանային քաղաքական կայունության ամրապնդման գործում, առավել ևս Իրանի ազգային անվ-

տանգությունն ապահովելու առումով:

Իրանի ներկա ղեկավարության համար, որն իր արտաքին քաղաքականության հարցերում կարևորագույն ուղեմիշ է ճանաչում «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքը, ոչ պակաս կարևորություն ունի այն, որ Հայաստանը Իրանի միակ սահմանակից քրիստոնյա պետությունն է: Նրա հետ բարիդրացիական հարաբերությունների զարգացումը կարող է օրինակելի մոուշաձև հանդիսանալ իսլամի և քրիստոնեության խաղաղ գոյակցության ցուցադրման կամ «քաղաքակրթությունների երկխոսության» սկզբունքի կոնկրետ դրսևորման համար, փարատելու համար Արևմուտքում լայնորեն տարածված այն տեսակետը, որ իրանական «հեղափոխական բնույթի ֆունդամենտալիզմը» տոգորված է կրոնական այլամերժության ու հարձակողական ռևանշիզմի ոգով:

Պակաս կարևոր չէ նաև Հայաստանի դերակատարությունը Իրանի կողմից իր քաղաքական մեկուսացումը հաղթահարելու գործում: ԻԻՀ-ն, վարչակարգը համարելով «ահաբեկչական», «ռազմաշունչ ֆունդամենտալիստական» և նրան մեղադրելով «իսլամական հեղափոխությունը» այլ երկրներ արտահանելու (այդ թվում նաև զենքի օգնությամբ) հետևողական քաղաքականություն իրականացնելու մեջ, Արևմուտքի երկրները նրա նկատմամբ վարում են քաղաքական մեկուսացման և պատժամիջոցներ իրականացնելու քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետության նպաստավոր աշխարհագրական դիրքը, այսինքն՝ այն հանգամանքը, որ նա գտնվում է Կովկասի, Սևծովյան ավազանի և Մերձավոր ու Միջին Արևելքի խաչմերուկում և ունի ճյուղավորված կապեր ԱՊՀ երկրների և մասնավորապես Ռուսաստանի հետ, չափազանց արժեքավորում է նրա նշանակությունը որպես տարածաշրջանային համագործակցության կարևորա-

<sup>6</sup> St'u Edmund Hering, Iran and the former Soviet Union, London, 1996.  
<sup>7</sup> St'u Oliver Roy, The Iranian Foreign Policy Toward Central Asia, Tauris, 1999.

գույն հանգույց: Իրանի կողմից Հայաստանը դիտվում է որպես մի տարածք, որի վրայով նա կարող է դուրս գալ դեպի սևծովյան նավահանգիստները, իսկ այնուհետև՝ Եվրոպա և Ռուսաստան: Նկատի ունենալով, որ եվրոպական երկրների հետ Իրանի ցամաքային առևտրի մեծագույն մասը իրականացվում է Թուրքիայի վրայով՝ Հայաստանը կարող է դառնալ այդ առևտրի համար այլընտրանքային ճանապարհ: Պատահական չէ, որ Հայաստանի հետ Իրանի հարաբերություններում ռազմավարական կարևոր ուղղություններից մեկը կոմունիկացիաների և հաղորդակցության ճանապարհների զարգացումն է: Քանի որ Իրանը Անդրկովկասի հետ կապող Թավրիզ-Ջուլֆա-Երևան-Թիֆլիս երկաթուղին արդեն տարիներ է, ինչ չի աշխատում, Իրան-Եվրոպա գծով բեռնափոխադրումներն իրականացնելու համար ԻԻՀ-ն հաջողությամբ օգտագործում է Մեդրի-Երևան ավտոմայրուղին, որի վերակառուցման աշխատանքներին Թեհրանը մասնակցություն ցուցաբերելու պատրաստակամություն է հայտնել դեռևս 90-ական թվականների սկզբներին: Մասնավորապես դեռ այն ժամանակ կնքվել է մի համաձայնագիր, ըստ որի՝ Իրանը ցանկություն է հայտնել մասնակցելու Քաջարանի թունելի կառուցմանը, որը նշանակալիորեն կկրճատի Մեդրի-Երևան ավտոճանապարհը և ձմռանը այն կդարձնի անվտանգ:

Ինչպես հայտնի է, հայ-իրանական հարաբերությունների սկզբնավորման տարիներին Հայաստանի ցամաքային ճանապարհների շրջափակումը ճեղքելու և դեպի արտաքին աշխարհ դուրս գալու կենսական նշանակություն ունեցող խնդիրը լուծելու համար 1992 թ. Արաքսի վրա՝ Մեդրու Ազարակ ավանի դիմաց, տեղադրվեց ժամանակավոր զինվորական նավահանուրջ (պոստոնային կամուրջ), որը իսկապես Հայաստանի համար հանդիսացավ «կյանքի ճանապարհ»: Նրա շահա-

գործման հանձնումով սկսվեց Հայաստանի տարածքով իրանական բեռնատար մեքենաների տրանզիտային անցումը դեպի Սև ծով և հակառակ ուղղությամբ: 1992 թ. մայիսի 14-ին ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև կնքվեց միջպետական համաձայնագիր Արաքսի վրա համատեղ մշտական կամրջի նախագծման և կառուցման վերաբերյալ: Շնորհիվ Ավստրալիայի հայության դրամական աջակցության, հայկական կողմի համար գործնականում լուծվեց կամրջի շինարարության ֆինանսավորման խնդիրը: 1995 թ. դեկտեմբերին մշտական կամրջի շինարարությունն ավարտվեց, իսկ Հայաստանի և Իրանի կողմից նրա պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1996 թ. հունվարի 9-ին: Իրականացավ հայ և պարսիկ ժողովուրդների դարավոր երազանքը՝ «մայր Արաքսի» վրա ունենալու երկու երկրները միմյանց միացնող կամուրջ: Արաքսի ջրերի վրա սլացող այդ գեղեցկուհին չի կարելի անվանել այլ կերպ, քան «Բարեկամության կամուրջ»:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացման դեռ արշալույսին կողմերը սկսեցին ծրագրեր մշակել նաև կոմունիկացիաների զարգացման ուղղությամբ՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը ցամաքային երկիր է և զուրկ է արտաքին աշխարհ դուրս գալու հարմար կոմունիկացիաներից: Այդ բնական անհարմարությանն ավելանում է նաև նրա հարևանների կողմից քաղաքական նպատակներով իրագործվող տրանսպորտային շրջափակման մշտական հավանականությունը: Նման պայմաններում, անշուշտ, կենսական անհրաժեշտություն է դառնում Իրանը Հայաստանի հետ կապող երկաթուղագծի շինարարությունը, որն ի վիճակի կլինի Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ ապահովել հուսալի տրանսպորտային կապ:

Նկատի ունենալով, որ այդ հարցի լուծումը հավասարապես համապատաս-

խանում է երկու երկրների երկրաքաղաքական և տնտեսական շահերին՝ 1992 թ. մարտի 11-ին Երևանում Իրանի հաղորդակցության ճանապարհների և փոխադրումների նախարարության պատվիրակության և Հայաստանի համապատասխան գերատեսչության միջև սկսվեցին բանակցություններ, որոնց նպատակն էր համակողմանի քննարկման ենթարկել երկու երկրները երկաթուղային գծերով կապելու հարցը: Ընդ որում, քննարկումների ժամանակ հատուկ շեշտվում էր, որ անկախ այն բանից, որ հայտնի իրադարձությունների պատճառով Երևան-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը փակվել է և չի գործում, և բացման հեռանկարները ևս մոտ ապագայում չեն երևում, Հայաստանը Իրանի հետ կապող երկաթուղագիծը նույնիսկ Հայաստանի երկաթուղիների ապաշրջափակման դեպքում կարող է հանդիսանալ այլընտրանքային և մեկընդմիջտ լուծել Հայաստանի հավանական տրանսպորտային շրջափակման հարցը իր հարևանների կողմից: Վերոհիշյալ բանակցությունների ժամանակ քննարկվեցին մի շարք տարբերակներ. օրինակ՝ Մարանդ-Մեղրի, Ջուլֆա-Մեղրի (64 կմ) և Ալանդար-Մեղրի (45 կմ) տարբերակները: Տարբերակներից մեկով նախատեսվում էր Մեղրիից երկաթգիծ կառուցել կամ դեպի Երասխավան, կամ դեպի Ջերմուկ՝ հետագայում Մարտունի-Շորժա գծին միանալու պայմանով:

Միանգամայն ակնհայտ է, որ երկաթուղային այդ ծրագրի իրականացման դեպքում Հայաստանը հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ ոչ միայն մուտք գործել դեպի հուսայի կոմունիկացիաները և դուրս գալ «լայն աշխարհ», մասնավորապես դեպի Պարսից ծոց, Հնդկաստան, Միջին Ասիա, Հինաստան, արաբական երկրներ և այլն: Դրանով Իրանը ևս լուծում կտար իր հեռահար նպատակներից մեկին՝ ստեղծել ԱՊՀ երկրներին և Սև ծովի ավազանին

կապող կոմունիկացիաների մի ցանց: Այդ հարթության վրա Հայաստանի դերն ու նշանակությունն Իրանի համար՝ որպես կամուրջ դեպի հյուսիս և արևմուտք, կարող է էապես բարձրանալ և դառնալ որոշիչ գործոն երկու երկրների տնտեսական և աշխարհաքաղաքական համագործակցության ամրապնդման համար:

Այս ծրագրի իրագործումը և՛ Հայաստանի, և՛ Իրանի համար դառնում է առաջնահերթ անհրաժեշտության խնդիր նաև այն պատճառով, որ Թուրքիայի ակտիվ նախաձեռնությունները Կարս-Ախալքալք-Մարաբղա երկաթուղու կառուցման ուղղությամբ հանդիսանում է Հայաստանը և Իրանը տարածաշրջանային իրողությունների շրջանակից դուրս բողոնելու մի տարբերակ, ինչպես և Բաքու-Ջեյհան նավթամուղի նախագիծը:

ԻԻՀ-ն կարևոր նշանակություն է տալիս նաև ՀՀ-ի հետ օդային հաղորդակցությունը զարգացնելու հարցին՝ դա համարելով ռազմավարական ու տնտեսական առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր: Պատահական չէ, որ դեռևս 1993 թ. իրանական կողմը նախաձեռնեց երկու երկրների միջև օդային կապի իրականացումը, որը հետագայում տարեցտարի կատարելագործվեց:

Իրանի և Հայաստանի միջև հարաբերություններում ռազմավարական նշանակություն ունեն նաև էներգետիկայի բնագավառում եղած ծրագրերը: 1997 թ. շահագործման հանձնվեց Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտահաղորդման գիծը: Իսկ մինչ այդ՝ 1995 թ., ստորագրվեցին միջկառավարական համաձայնագրեր Արաքս գետի վրա համատեղ ջրամբարտակի և հիդրոէլեկտրակայանի կառուցման, ինչպես նաև Իրան-Հայաստան գազամուղի (Թավրիզ-Մեղրի) շինարարության վերաբերյալ, որը ենթադրվում էր շարունակել դեպի Վրաստան և այլ երկրներ: Կասկածից վեր է, որ այդ գազատարը Հայաստանի համար կարող է հանդիսանալ

էներգետիկ անկախության կարևորագույն գործոն: Նրա իրագործումը ոչ պակաս կարևորություն ունի նաև Իրանի համար, որը հնարավորություն կստանա Հայաստանում, գազամուղի շարունակման դեպքում նաև Վրաստանում, գուցե և այլ երկրներում, ձեռք բերել ազդեցության հավելյալ լծակներ: Նախագծի իրականացման առաջին էտապում նախատեսվում էր Հայաստան մղել տարեկան 1 միլիարդ խոր. մետր գազ: Իսկ հետագայում աստիճանաբար ծավալները պետք է ավելանային: Այսպիսի ունենալով, որ Իրանի հյուսիսային գազամուղային խողովակաշարը (Ասթարա-Թավրիզ) անցնում է Հայաստանի սահմաններից ընդամենը 60 կմ հեռավորության վրա՝ հիշյալ ծրագրի իրականացումը տեխնիկական տեսակետից մեծ դժվարություններ չի ներկայացնում: Նրա նախագծային արժեքը կազմում է 120-150 միլիոն դոլար: Իրանի և Հայաստանի շինարարական ընկերություններից պահանջվում է ընդամենը մեկ տարի, որպեսզի սկսեն ու ավարտեն այդ աշխատանքը: Իրանական և միջազգային ընկերությունները պատրաստել են նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորում և առաջարկել են նրա ֆինանսավորման հնարավոր սխեմաներ: Սակայն այդ նախագիծը, որը տարածաշրջանի և մասնավորապես Հայաստանի համար ունի չափազանց կարևոր ռազմավարական և տնտեսական նշանակություն և հանդիսանում է նրա տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներից մեկը, առայժմ չի շարժվում տեղից: Դրա պատճառներից մեկը, թերևս կարևորագույնը, որոշ պետությունների կտրուկ բացասական վերաբերմունքն է այդ նախագծի նկատմամբ:

Ինչպես հայտնի է, Իրանը սերտորեն համագործակցում է Հայաստանի հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում: Առհասարակ Թեհրանը պատրաստ է միջազգային կազ-

մակերպություններում Երևանի հետ հանդես գալ ընդհանուր կամ համաձայնեցված դիրքերից: Կյանքը համոզիչ օրինակներով ցույց է տվել, որ Իրանը այդ համագործակցությունից քաղել է որոշակի քաղաքական օգուտներ: Քիչ չեն նաև այն փաստերը, երբ ԻԻՀ-ն օգտվել է հայ սփյուռքի աջակցությունից՝ Արևմուտքում իրանապաստ իմիջ ստեղծելու համար:

Հանձին Հայաստանի՝ Իրանը տեսնում է նաև հուսալի դաշնակից թյուրքական նացիոնալիզմի, ինչպես նաև թուրքականության ու համաթուրքականության դեմ: Չպետք է մոռանալ, որ ներկայումս Իրանի վրա կախվում է լրջագույն մեկ այլ սպառնալիք ևս՝ Կովկասի և Կենտրոնական Ասիայի թյուրք բնակչության ազգայնական տրամադրությունները: Թյուրքական նացիոնալիզմի պոռթկումը կարող է ուղղակի ներգործություն ունենալ Իրանի թյուրքալեզու բնակչության վրա, որոնց թիվը, ըստ որոշ տվյալների, ներկայումս հասնում է մոտ 20 միլիոնի: Ուստի Իրանի քաղաքական շրջաններում քիչ է այն մարդկանց թիվը, որոնք գտնում են, որ «Իրանի և Թուրանի» պայքարը ոչ միայն չի ավարտվել, այլև գնում է դեպի սրացում, և Իրանը պատմական առաքելություն ունի համաթուրքականության դեմ պայքարում:

Գաղտնիք չէ, որ ժամանակ առ ժամանակ Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները, իսկ ավելի հաճախ ադրբեջանական ազգայնական կուսակցությունները, առաջ են քաշում «Միացյալ Ադրբեջանի» կամ «Երկու Ադրբեջանների» միավորման հարցը՝ նկատի ունենալով Իրանական Ատրպատական ու Ադրբեջանի Հանրապետությունը: Նրանք Ատրպատականը հայտարարում են Իրանի կողմից «բռնագրավված տարածք» և կոչ են անում ազերիներին համախմբվել այն ազատագրելու համար: Չգտելով շահար-

© Доктор Аббас Малекі, Иран и Туран, стр. 115.  
 © St'u Azerbaijan - Iranian relations Far Center Monitoring Group, Baku, 1996.

կել Իրանի ազգաբնակչության մոտ մեկ երրորդը կազմող ազերիների լեզվական և կրոնադավանական ընդհանրությունը Ադրբեջանի Հանրապետության ազերի բնակչության հետ՝ Բաքուն փորձեր է անում անջատվողական տրամադրություններ հրահրել Իրանական Ատրպատականում:

Գեռնս 1993 թ. Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հայտարարել է. «Իրանն ապագայում կմասնատվի. նրա տարածքում կստեղծվեն հինգ առանձին պետություններ՝ Քրդստան, Բելուջիսթան, արաբների, ֆարսերի և թուրքերի պետություններ: Ողջ Ադրբեջանը կդառնա միասնական (իմա՝ Իրանական Ատրպատականը և Ադրբեջանի Հանրապետությունը - Վ.Բ.), և այսպիսով ծնունդ կառնի 40 միլիոն ազերի բնակչությամբ մի երկիր»<sup>10</sup>: «Ադրբեջանը, - մեկ այլ առիթով հայտարարել է Էլչիբեյը, - թուրք և ամերիկացի բարեկամների օգնությամբ կվերածվի տարածաշրջանի ամենազարգացած երկրի»<sup>11</sup>:

Էլչիբեյի հակաիրանական դիրքորոշումը ժամանակին հանգեցրեց Երևանի նկատմամբ Թեհրանի առավել բարյացակամ վերաբերմունքին<sup>12</sup>, թեև պետք է նշել, որ իսլամական աշխարհի որոշ երկրներ Թեհրանից պահանջում էին չաջակցել Երևանին, այլ հօգուտ Ադրբեջանի ճնշում գործադրել նրա վրա<sup>13</sup>: Այդ շրջանում փորձեր կատարվեցին դարաբաղյան հակամարտությանը հաղորդել կրոնական երանգ: 1993 թ. ապրիլի 13-ին Թեհրանում ՀՀ դեսպանության շենքի առջև կազմակերպվեց «Թեհրանի համալսարանի ազերի ուսանողների», սակայն իրականում թուրք ազգայնականների մի խոշոր հանրահավաք, որի ընթացքում հնչեցին պան-

<sup>10</sup> «Լրագիր», 8 մարտի, 1995 թ.:  
<sup>11</sup> «Քեյխան», Լոնդոն, 11 հունիսի, 1992 թ.:  
<sup>12</sup> Էսմա Բեգիջանյան, Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001 թ., էջ 69:  
<sup>13</sup> Նույն տեղում:

թուրքիստական անսանձ կոչեր: Կրքերը հանգստացնելու համար ԻԻՀ նախագահ Աբբար Հաշեմի Ռաֆսանջանին Էլչիբեյին ուղղեց մի նամակ, որտեղ քննադատական խոսքեր էին պարունակվում Հայաստանի հասցեին: Ենթադրվում է, որ այդ նամակի իսկական հասցեատերը ոչ թե Բաքուն էր, այլ «դար-ալ-իսլամը» (իսլամական աշխարհը), որին անհրաժեշտ էր տալ ԻԻՀ կողմից իսլամի շահերը անվերապահորեն պաշտպանելու խոստումներ:

«Երկու Ադրբեջանների» միավորման կարգախոսը, սակայն, միայն Էլչիբեյի մենաշնորհը չէր: Դա թուրք ազգայնականների քաղաքական հավատամքն է կամ թուրքականության ազգային իղծերից մեկը: Այսպես՝ նախագահ Չեյդար Ալիևի քաղաքական խորհրդական Վաֆա Գուլուզադեմ Ջորջ Վաչինգտոնի անվան ինստիտուտում կայացած միջինարևելյան քաղաքականությանը նվիրված գիտաժողովում արել է հետևյալ հայտարարությունը. «25 միլիոն ազերի բնակիչ ունեցող Իրանը սարսափում է սահմանակից հզոր և անկախ Ադրբեջանից, քանի որ Իրանի ազերիների շրջանում օր օրի ուժգնանում են ազգայնական տրամադրությունները: Թեև Բաքուն չի կարող պաշտոնապես պահանջել երկու Ադրբեջանների միացումը, այնուամենայնիվ, նրանք վաղ թե ուշ կմիանան»<sup>14</sup>:

Անտարակույս թուրք-ազերիական ազգայնականության դրսևորումները չեն կարող չանհանգստացնել Թեհրանին: Ահա թե ինչու վերջինս անհանգստանում է տարածաշրջանում իր հանդեպ թշնամաբար տրամադրված պետությունների դիրքերի ամրապնդումից, որոնք հարմար առիթի դեպքում թուրքական նացիոնալիզմը կարող են օգտագործել երկրի անվտանգությանն ու կայունությանը սպառնացող գործունեություն ծավալելու համար: Այդ պարագաներում Հայաստանը, որը մշտապես հանդիսացել է թուրք ռազ-

<sup>14</sup> «Լրագիր», 11 օգոստոսի, 1995 թ.:

մաշունջ նացիոնալիզմի գոհը, կամա թե սկամա հանդես է գալիս որպես Իրանի դաշնակից՝ պանթուրքիզմի վտանգի դեմ:

Ավելորդ չենք համարում հատուկ շեշտելու հետևյալ հանգամանքը, այսպես կոչված, «Հյուսիսային և Հարավային Ադրբեջանների միավորման» հարցադրումը ոչ մի ռեալ հիմք չունի: Ատրպատականի ազերի բնակչությունը իր հոգեկան կերտվածքով, հայրենիքի մասին իր մոտեցումներով և այլն էապես տարբերվում է Ադրբեջանի Հանրապետության ազերի բնակչությունից: Նա իրեն համարում է համաիրանական քաղաքական ընդհանրության անբաժանելի մասը և իր մեծ մասով հակված է այն տեսակետին, որ հենց «մայր հայրենիքից»՝ Իրանից, կտրված Ադրբեջանի ազերի «եղբայրներն ու քույրերը» իրենք պետք է միանան Իրանին և դառնան իրանական պետականության անբաժանելի մասը: Հետաքրքրական փաստ. 1997 թ. հունիսի 28-ից 30-ը Լոս Անջելեսում տեղի ունեցած «Համայն աշխարհի ազերիների համագումարը», հակառակ պանթուրքիստների ու Բաքվի վարչախմբի սպասելիքների, արձանագրեց, որ Արաքսից այն կողմ գտնվող Ադրբեջանը (իմա՝ Ադրբեջանի Հանրապետությունը - Վ. Բ.) ինքը պետք է միավորվի Իրանի հետ:

Այս հետնախորքի վրա միանգամայն հասկանալի է դառնում ԻԻՀ-ի վարած քաղաքականությունը Դարաբաղի հարցի կապակցությամբ: Այն խարսխված էր հավասարակշռելու հիմքի վրա՝ նախապատվություն չտալով հակամարտության կողմերից որևէ մեկին:

Այսպիսով կասկածից վեր է, որ տարածաշրջանում Իրանը հանդես է գալիս թուրքական ռազմաշունջ ազգայնականության զսպողի դերում: Անշուշտ, այդ քաղաքականությունն այն լծակներից մեկն է, որն ի վերջո թույլ չի տալիս Թուրքիային ու Ադրբեջանին Հայաստանի դեմ ստեղծելու միասնական թուրքական ճակատ: Հետևաբար՝ Իրանը այն պետու-

թյուններից է, որից անմիջականորեն կախում ունի տարածաշրջանի անվտանգությունը:

Հարկ է նշել, որ ԻԻՀ-ն կենսականորեն շահագրգռված է Հայաստանն ընդգրկել իր տարածաշրջանային քաղաքականության մեջ ոչ միայն երկկողմ, այլև բազմակողմ հարաբերությունների հիմքի վրա: Որպես այդ հիմնարար սկզբունքի գործնական իրականացում՝ դեռևս 90-ական թվականների կեսերին ծնունդ առավ եռակողմ Իրան-Հայաստան-Թուրքմենստան, Իրան-Հայաստան-Ռուսաստան համագործակցությունը: Թեև դրանցից առաջինը նկատելիորեն խամրել է և չի դրսևորում կենսունակության նշաններ, սակայն երկրորդը, ընդհակառակը, գտնվում է վերելքի շրջանում: Համագործակցության երեք կողմերը բազմիցս հայտարարել են, որ իրենց համագործակցությունը ուղղված չէ որևէ այլ պետության դեմ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ Իրան-Հայաստան քաղաքական հարաբերությունների մակարդակը գիջում է առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակին: Գոյություն ունեցող իրավապայմանագրային դաշտում նույնպես դեռևս բացակայում է երկկողմ հարաբերությունների քաղաքական մակարդակն ու բնույթը հաստատող որևէ փաստաթուղթ: Այս հանգամանքը, փաստորեն, զոհացնում է Իրանին, որը, այնուամենայնիվ, շահագրգռված է մահնեղական Ադրբեջանի հետ լավ հարաբերությունների պահպանման մեջ: Չպետք է մոռանալ նաև, որ Ադրբեջանում տարածված կրոնը իսլամի շիիթական ուղղությունն է, և Իրանում Ադրբեջանը համարում են Իրանից հետո աշխարհում «երկրորդ շիիթական պետությունը»:

Կասկածից վեր է, որ Իրանը խանդով է վերաբերվում եվրոատլանտյան ուղղությանը Հայաստանի կապերը խորացնելու քաղաքականությանը: Թեհրանը մտահոգ է նաև այն բանի համար, որ Արևմուտքը

մտադիր է տարածաշրջանի և Իրանի միջև բաժանարար գիծ քաշել: Սակայն Թեհրանը պետք է ըմբռնումով մոտենա և գիտակցի, որ Հայաստանի գերազանց հարաբերությունները Իրանի հետ չպետք է խոչընդոտ հանդիսանան երրորդ երկրների հետ Երևանի հարաբերությունների զարգացման համար:

Հայաստանը Հարավային Կովկասի այն հանրապետություններից մեկն է, որը կարևորում է Իրանի ներգրավվածությունը Կովկասում և համարում է, որ տարածաշրջանում կայունության որևէ համակարգի ստեղծումը ամբողջական չի լինի առանց Իրանի մասնակցության և նրա շահերը հաշվի առնելու: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս շեշտվեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի 1999 թ. դեկտեմբերի 8-ին ԻԻՀ կատարած աշխատանքային այցի ժամանակ, երբ բանակցությունների հիմնական թեմա հանդիսացավ տարածաշրջանային անվտանգության համակարգ ստեղծելու վերաբերյալ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից Ստամբուլում եԱՀԿ գազաթափողովին ներկայացված առաջարկը:

Ինչպես նշվեց վերևում, ԻԻՀ-ն ՀՀ-ի հետ իր ռազմավարական շահերը զարգացնում էր նաև տնտեսության ասպարեզում: Առհասարակ Հարավային Կովկասի նորանկախ հանրապետությունների հետ տնտեսական հարաբերությունների զարգացումը հանդիսանում էր ԻԻՀ նախագահ Ռաֆսանջանիի (1989-1997 թթ.) քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Հակառակ Արևմուտքի կողմից Իրանին ներկայացվող մեղադրանքների՝ կրոնական էքստրեմիզմը Կենտրոնական Ասիայի և Կովկասի երկրներ արտահանելու փորձերի մեջ<sup>15</sup>, Իրանը ամեն կերպ ձգտում էր զարգացնել իր տնտեսական համագործակցությունը «հարավային գոտու» երկրների հետ: Այդ տեսակետից հատկապես

<sup>15</sup> St'u Fuller Graham E. Turkey Faces East, p. 45-46.

մեծ ծավալում ստացան Իրան-Հայաստան տնտեսական հարաբերությունները: ԱՄՆ-ի կողմից շրջափակման մեջ գտնվող երկրի համար, բնականաբար, արտաքին շուկաների հարցը ստանում էր առաջնակարգ կարևորություն, առավել ևս, որ իրանական ներքին շուկան արդեն ձեռք էր բերել կրիտիկական զանգված և կարիք ուներ արտաքին նոր շուկաների:

Իրան-Հայաստան առևտրատնտեսական կապերը խթանելու նպատակով ԻԻՀ կառավարության նախաձեռնությամբ ստեղծվեց երկու երկրների տնտեսական հարաբերությունները համակարգող պետական մի կառույց: Այդ նույն նպատակին էր ծառայելու նաև իրանահայ գործարար շրջանների կողմից կազմակերպված «Իրան-Հայաստան առևտրական պալատը», որի մեջ ընդգրկվեցին ինչպես հայ, այնպես էլ իրանցի մեծ թվով գործարարներ:

Կարճ ժամանակամիջոցի ընթացքում Հայաստանն ու Իրանը դարձան միմյանց համար կարևորագույն առևտրատնտեսական գործընկերներ: 1997 թվականին՝ 1994 թ. համեմատությամբ, Հայաստանի ապրանքաշրջանառությունն Իրանի հետ ավելացավ մոտ երեք անգամ:

1997-1998 թվականներին Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունները հասան մի հանգրվանի, երբ անհրաժեշտություն զգացվեց քանակական չափանիշներից անցում կատարել դեպի որակական չափանիշները: Սակայն պետք է խոստովանել, որ տնտեսության բնագավառում Իրանի հաջողությունները Անդրկովկասում, այդ թվում նաև Ռուսաստանում, ներկա պահին բավականին համեստ են, որը բացատրվում է տարածաշրջանի տնտեսական զարգացման խոշոր նախագծերի ինվեստավորման բնագավառում նրա սահմանափակ հնարավորություններով: Ուստի ԻԻՀ-ի և ՀՀ-ի տնտեսական հարաբերությունները դեռևս գերազանցապես սահմանափակվում են

առևտրի շրջանակներում, և գոյություն չունի լայնամասշտաբ արտադրատնտեսական համագործակցություն արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության բնագավառներում, և առհասարակ բացակայում է ինտեգրացման գործընթացը: Չնայած այն բանին, որ հարկ չկա չափազանցելու Իրանի խաղացած դերը Անդրկովկասում, սակայն միաժամանակ պետք է խոստովանել, որ, այնուամենայնիվ, նա որոշակի ներդրում ունեցավ տարածաշրջանի տնտեսական զարգացման և քաղաքական կայունացման գործում:

1997 թ. մայիսի 23-ի նախագահական ընտրություններում համոզիչ հաղթանակ տանելով՝ Սեյեդ Մոհամադ Խաթամին ընտրվեց ԻԻՀ 5-րդ նախագահ: Բարեփոխումներ իրականացնելու ալիքի վրա իշխանության հասած նոր նախագահի քաղաքական և տնտեսական ծրագիրը ընդհանուր գծերով հանգում է հետևյալին. Իրանի քաղաքական կյանքի ժողովրդավարացում, «իսլամական քաղաքացիական հասարակության» և իրավական հասարակարգի ստեղծում, բոլոր տերությունների հետ երկխոսության զարգացում<sup>16</sup>:

Նախագահ Խաթամին վերանայման ենթարկեց նաև երկրի արտաքին քաղաքականության ռազմավարությունը, որի հետևանքով «իսլամական հեղափոխության արտահանման» դրույթը իր տեղը զիջում էր «քաղաքակրթությունների երկխոսությանը» և լարվածության թուլացմանը: Խաթամին կողմնորոշվում է դեպի «մեծ քաղաքակրթությունների ժառանգորդներ» հանդիսացող Արևմուտքի երկրները:

Իրանական որոշ քաղաքագետների կարծիքով, Խաթամիի կառավարման տարիներին «անկախ պետությունների» հետ հարաբերությունները Իրանի համար

<sup>16</sup> Khatami: We Must Recognize the West. „Salaam”. Thursday, 6.05.1997.

առաջնային կամ նախապատվելի չեն, որ այդ հանրապետությունները Իրանի համար «ոչ մի հետաքրքրություն ո՛չ տնտեսական և ո՛չ էլ քաղաքական առումով, չեն ներկայացնում»<sup>17</sup>:

Սակայն 2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցի ընթացքում Իրան թե՛ ԻԻՀ կրոնապետ առաջնորդ Սեյիդ Ալի Խամենեյի և թե՛ նախագահ Մոհամադ Խաթամիի հետ հանդիպումների ժամանակ իրանական կողմը կարևորում էր Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունների զարգացումը և խորացումը՝ նշելով, որ այդ հարաբերությունները միտված են տարածաշրջանային կայունության և խաղաղության հաստատմանը:

Փոխըմբռնման և փոխադարձ հարգանքի մթնոլորտում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ՀՀ և ԻԻՀ նախագահները քննարկեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, տնտեսական, մշակութային բնագավառներին, ինչպես նաև տարածաշրջանային ու միջազգային խնդիրներին վերաբերող հարցեր:

Կողմերը ՀՀ նախագահի ԻԻՀ կատարած այցը գնահատեցին որպես երկու պետությունների հարաբերությունների ընդլայնման նոր փուլի սկիզբ:

ՀՀ նախագահի այցի ընթացքում ստորագրվեցին թվով 10 փոխըմբռնման հուշագրեր և մի շարք համաձայնագրեր: Երկու երկրների նախագահները քննարկեցին և մտքեր փոխանակեցին տարածաշրջանի վերջին իրադրությունների, այդ թվում նաև դարաբաղյան կարգավորման գործընթացի վերաբերյալ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը կարևորեց ԻԻՀ դերը այդ գործընթացին: Երկու պետությունների նախագահները հաստատեցին բացառապես խաղաղ միջոցներով դրա լուծմանն իրենց աջակցությունը, որը կհանգեցնի տարա-

<sup>17</sup> St'u Доктор Аббас Малеки, Иран и Туран, стр. 115.

ծառըջանում կայուն և պատվաբեր խաղաղությանը:

Արտահայտելով իրենց ծգտունը տարածաշրջանում հարատև խաղաղության, կայունության և անվտանգության ամրապնդման նկատմամբ՝ կողմերը գնահատեցին քաղաքակրթությունների երկխոսության վերաբերյալ ԻԻՀ նախաձեռնությունը որպես ազգերի միջև բարեկամական մթնոլորտ և փոխըմբռնման դաշտ ստեղծելու արդյունավետ գործոն:

Հայ-իրանական բանակցությունների ժամանակ մշտապես շեշտվում էր, որ երկու ժողովուրդների անցյալն ու աշխարհագրական դերերը պարտադրում են ընդլայնելու Հայաստան-Իրան համագործակցության շրջանակները:

ՀՀ նախագահի պաշտոնական այցը ԻԻՀ հանդիսանում է համոզիչ վկայություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունն Իրանում ունի բարձր վարկանիշ և պետական հեղինակություն:

Մեր երկու երկրների միջև մեկ տասնամյակից ավելի գոյություն ունեցող բարեկամությունը, հարաբերությունների անկեղծությունը և կառուցողական ոգին վկայում են, որ և՛ Հայաստանը, և՛ Իրանը լի են քաղաքական կամքով և վճռականությամբ մեր պետությունների միջև փոխշահավետ կապերը վերընթաց գծով զարգացնելու համար:

**The Place and Role of the Republic of Armenia in the Regional Policy of the Islamic Republic of Iran**

Vahan Baybourtian

**SUMMARY**

Following the collapse of the Soviet Union, Iran started to expand interests in the South Caucasus in political, security, as well as economic areas.

Immediately after the establishment of diplomatic relations with the Republic of Armenia Iran prioritized relations with the newly independent country attaching special importance to them.

The given article focuses on Iran's approach vis-a-vis Armenia as a regional partner in the framework of multifaceted cooperation.

Tehran considers Armenia a reliable ally in its stand against the Turkish nationalism, and Turkism and Pan-Turanism as well.

In the article a special emphasis is laid on the point that Iran constitutes significant factor in the scheme of regional stability and security. It also notes that the Republic of Armenia has gained and enjoys high prestige and respect in the Iranian government and public circles.

The official visit of the Armenian President Robert Kocharian to the Islamic Republic of Iran gave a new impetus to the advancement of Armenian-Iranian relations.

**4. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԳԱՂԱՍԿԱՅԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XVI-XVIII դդ.)**

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Օսմանյան կայսրության պատմության մեջ 4. Պոլսի գրավումով և այն պետության մայրաքաղաքը դարձնելուն զուգընթաց, սկսվում է միլեթների (կրոնական հանրություններ) ձևավորման գործընթացը, որ տևում է ամբողջ XIV-XVI դդ. և փլուզման եզրին է հասնում թանգիմաթի բարեփոխումների դարաշրջանում, XIX դարի 2-րդ քառորդին: Եթե մի կողմ թողնենք միլեթների ազգային, կրոնական, մշակութային և այլ տարբերությունները, ապա պետք է նկատել, որ միայն տնտեսությունը և սրանից բխող հարաբերություններն էին, որ մի հայտնի չափով ընդհանրական հող էին ստեղծում օսմանյան բոլոր հպատակների՝ մահմեդականների և ոչ մահմեդականների համար: Կայսրության ամբողջ բնակչությունն այդ իմաստով բաժանվում էր երկու հիմնական հարկատու և ոչ հարկատու խմբերի: Ոչ մահմեդական հանրությունների մեջ միայն կղերական դասն էր համարվում ոչ հարկատու և այդպիսով, մտնում օսմանյան ասկերի դասին տրվող առանձնաշնորհումների շրջանակի մեջ: Բուն օսմանյան հասարակությունը կազմված էր երկու մեծ խմբերից՝ ռազմաբյուրոկրատական գործառույթներ իրականացնող ասկերիների դասից (այդ թվում և մահմեդական հոգևորականությունը) և հարկատու դասից (ռայաներ): Որպես կա-

նոն, ոչ մահմեդական ժողովուրդները համարվում էին ռայաներ՝ հոգևորականության վերոնշյալ բացառությամբ: Մահմեդականները կազմում էին բնակչության արտոնյալ մասը՝ իբրև պետական-պաշտոնական կրոն դավանողներ:

4. Պոլսի հայ համայնքի առաջնորդը (1540-ից հիշվում է իբրև պատրիարք), և գավառական առաջնորդները այս պայմաններում հանդես էին գալիս որպես տեղական միլեթաշիններ, որոնցից ամեն մեկը պատասխանատու էր իր հատվածի ժողովրդի ֆինանսական (հարկեր, տուրքեր) և իրավական (կտակ, պսակ, ամուսնություն, գույքային հարաբերություններ) պարտականությունների և իրավունքների իրացման համար: Ընդսմին, հոգևոր գլուխները և՛ մայրաքաղաքում, և՛ գավառներում միավորում էին իշխանության միասնության սկզբունքները՝ կատարելով միաժամանակ հոգևոր և քաղաքացիական գործադիր գործառույթներ: Այսպիսի համատեղումը համապատասխանում էր օսմանյան քաղաքական ու կրոնական կառույցների փոխհարաբերակցությանը, որտեղ հստակ սահմանագատում չկար օրենսդիր, գործադիր և կրոնական իշխանությունների միջև: Իրենց իրականացրած հոգևոր ու աշխարհիկ գործառույթների համար համայնքների, այդ թվում և հայ համայնքի գլխավորները պատասխանատու էին օսմանյան պետության առջև: Հայ պատրիարքների իրավունքներն ու պարտականությունները բավական հստակ

<sup>1</sup> История Востока. III. Восток на рубеже средневековья и нового времени XVI-XVIII вв., М., 1999, с. 77.





լով ըստ ամենայնի, բավական դժվար է եղել ծանր հարկերը վճարելը: Մի վավերագրում երախտագիտությամբ է հիշվում քյուրեկճի հարկը վճարող տիրացու Հարությունը, որը, «մէկ տարուան քիւրեկճուն ստակին նեղութենէն մեզ ազատեաց իւր վրայ առնելով և յառաջս եկեղեցոյս (Պալաթի Ս. Հրեշտակապետի եկեղեցու – Ա.Խ.) 5 (100) դրուշ և այժմ 95 (300) դրուշ»<sup>27</sup>: Պետք է կարծել, որ հարկի տարեկան չափը Պալաթի թաղում եղել է ոչ պակաս, քան 300 դուրուշ, եթե տիրացուն ամբողջությամբ է վճարել հարկը<sup>28</sup>:

4. Պոլսի հայերի տարեկան հարկերի մեջ դարավոր տևականություն ուներ **մուքաթա** (**մաքթու**, **մախթու**) հարկը: Մուքաթա հասկացությունը օսմանյան հարկային տնտեսական համակարգում գործածվել է ոչ միանշանակ իմաստով: Հարկը գանձվում էր հողի կամ սեփականության այլ տեսակներից՝ տներից, խանութներից, շինություններից և այլն: Այնու-

հետև, մուքաթան վճարում էին ամբողջական հարկատու միավորները՝ որպես տարեկան հարկ: Նախապես մուքաթան ընկալվում էր իբրև առանձին ֆինանսական-վարչական միավոր, որ վճարելու էր մեկ կամ մի քանի որոշակի հարկեր<sup>29</sup>: Հատկանշական է, որ սուլթան Մեհմեդ Ֆաթիհը 4. Պոլիսը բռնի վերաբնակեցնելիս գաղթականներին տվել է որոշակի արտոնություններ, այդ թվում և վերացնելով նախապես բնակարանների դիմաց գանձվելիք հարկը՝ մուքաթան: Այդ բնակարանները բռնագաղթածներին հանձնվեցին որպես մյուլթ՝ սեփականություն<sup>30</sup>: Այս հարկը գանձվում էր նաև խասերի՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի դիմաց: XV դ. 4. Պոլսի և Ղալաթիայի միջև գտնվող մշակովի այգիների վարձակալները ամեն մի դյունյում<sup>31</sup> հողի դիմաց վճարել են 12 աքչե մուքաթա<sup>32</sup>:

Որպես առհասարակ սեփականությունից գանձվող հարկ՝ մուքաթա են վճարել 4. Պոլսի հայ արհեստավորներն ու առևտրականները՝ տարեկան հարկի ձևով: Այդ տուրքը վճարել են նաև 4. Պոլսի վեց հայ համայնքները, որ սովորաբար վերահսկում էր պատրիարքարանը և որի միջոցով էլ այն մուտք էր գործում պետական գանձարան: Եվ պատրիարքի տեղապահները՝ վեքիլները, այստեղից էին ստանում համայնքում իրենց տնտեսական ազդեցության սնուցիչ հյութերը: «Ալթը ցեմաթում» նրանք էին տնօրինում մուքաթան և առհասարակ, մյուս հարկերը հավաքելու գործը, եկամուտներ բաշխելու և իրացնելու բարեպատեհ հնարավորությունները: Պոլսահայերի մեջ այդ վեքիլները մուքաթան հավաքելիս կատարում էին նույնը դերը,

<sup>27</sup> Аграрный строй Османской империи, XV–XVII вв., с. 206–207.

<sup>28</sup> Պերպլեթան Հ., Խթամպուլի հայ բնակչությունը քաղաքին գրավում են մինչև Ֆաթիհ Մեհմետ Բ–ի մահը, «Հանդես ամսօրեայ», 1962, թիվ 5–8, էջ 222:

<sup>29</sup> Հողահարկ, միջին քայլով 40 քայլ տարածություն:

<sup>30</sup> Аграрный строй Османской империи, с. 206–207.

ինչ հարկահավաք վարձակալները XVII դարում (իլթիզամի ինստիտուտ) կամ մուլթազիմները (էմիլները) մահմեդական հասարակության մեջ, իբրև պաշտոնյաներ<sup>33</sup>:

Եվ հենց վարձակալության այս համակարգն էր, ի դեպ, որ իբրև արտատնտեսական հարկադրական ուժ, առավելագույնի էր հասցնելու գյուղացիական տնտեսությունների հարստահարումը՝ աչքի առաջ ունենալով միայն եկամուտների ստացումը: Պետական հողերը վարձակալության տալը արագացրեց XVII դ. հարկատու գյուղացիական տնտեսություններից՝ մուքաթաների քայքայումը: Կոչի բեյը նկատում է մուքաթաների անշքացումը իլթիզամի գիշատչական հարվածներից, որ չէր հապաղել իր կործանարար հետևանքները թողնել օսմանյան ամբողջ տնտեսության վրա: «Մեծ վեզիր Ռյուսթեմ փաշան... նվիրական շարիաթին հակառակ, կայսերական խասերը և մուքաթաները, որոնք իսլամական բեյթ–ուլ մալեր են, սկսեց իլթիմազի տալ: Եվ որովհետև պատվավոր էմիլները (խասերի կառավարիչները – Ա.Խ.) մերժեցին իլթիզամ վերցնել, այդ իլթիզամները անցան անարժան և անբարոյական հրեա էմիլների ձեռքը, իսկ այդ հանգամանքը պատճառ դարձավ կայսերական խասերի և մուքաթաների գյուղերի քայքայմանը»<sup>34</sup>:

4. Պոլսի հայոց պատրիարքարանը իրականացնում էր նաև կայսրության վարչատարածքային կազմի մեջ մտնող հայ համայնքների մուքաթայի հավաքումն ու պետական գանձարան մուտք անելը: Պատրիարքարանին ենթակա վիճակների կազմավորման գործընթացը, նրա իրավասությունների աստիճանական ընդարձակումը օսմանյան պետությանը ենթակա գավառներում, այս իմաստով պետք է դիտել իբրև մուքաթայի հարկման աշխարհագրության ընդլայնման պատմություն: Իսկապես, կայսրության մեջ

որոշակի որևէ տարածքի հայաբնակ վայրից մուքաթայի գանձումը պատրիարքարանի կողմից, նշանակում էր, որ հոգևոր–վարչական տեսակետից այդ վայրի հայադավան բնակչությունը իր առաջնորդով հանդերձ, ենթարկվում է 4. Պոլսի պատրիարքարանին: Իրենց իշխանությունը ապագա վիճակների վրա տարածելիս, պատրիարքներն այդ ամենից առաջ հիմնավորում էին նրանով, որ սուլթանը իրենցից է պահանջում այդ վայրերի մուքաթան: 4. Պոլսի պատրիարքների հետ մրցակցությունից առանձնապես հպարտանալու բան չունեցող և դառնացած Սիմեոն կաթողիկոսը գրում է, թե «Պոլսոյ պատրիարգուքն մախային միշտ և մռմռային անդադար, զի ի կողմն արկցեն (Թուրքիայում գտնվող էջմիածնական վիճակները – Ա.Խ.) որպեսզի և գնորին առաջնորդն ինքեանք առաքեսցեն... պատճառելով, թէ թագաւորն թէֆթիշ առնէ (վերահսկում է – Ա.Խ.) և զմախթուն խնդրէ ի մէնջ...»<sup>35</sup>:

Պատրիարքը այս հարկը հավաքում էր նաև օսմանյան տիրապետության տակ ընկած, բայց առաջնորդական վիճակների մեջ չմտնող վայրերից և՛ երկրի եվրոպական և ասիական մասերից: «Իսկ ի մասին Ռումելիի քանգի չիք առաջնութիւն բաց ի յերւեմէ և ի Թեքրտաղի զոմն ի վարդապետաց մուգադաճի անուամբ կոնդակաւ առաքէ (պատրիարքը – Ա.Խ.) անոր որոյ շրջեալ ի քաղաքս և ի գիւղօրէս յորս գտանին բնակիչք հայոց և յՈւլահ և ի Պուղտան և երբեմն անոր ևս մինչև ի Սուչով. հաւաքեալ զմուգադայս... բերէ ի Ստանպօլ առ պատրիարգն»<sup>36</sup>,— գրում է Ղ. Ինճիճյանը:

Մուքաթան կոչվում էր նաև պատրիարքների (կամ կաթողիկոսների) տված հարկը (նախ միանվագ՝ սուլթանից պատրիարքական պերաթ ստանալու համար, ապա տարեկան), որ հանդիպում է նաև դապալա և միրի ձևերով: Այսպես՝ Եղիագար Այնթապցին, անշուշտ, հակասական

<sup>33</sup> Османская империя и страны..., с. 69.

<sup>34</sup> Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և..., էջ 226:

<sup>35</sup> Սիմեոն Երեանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 237:

<sup>36</sup> Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 117:



կում էր արտադրությունից ռենտա ստանալու ձևերի ու նորմերի ապահովում, այդ համակարգը արդեն XVI դ. վերջերին և XVII դ. սկզբներին ի հայտ էր բերել իր քայքայիչ հակասությունները: Գավառներում կենտրոնացած բարձրաստիճան պաշտոնությունը և սրա միջոցով՝ մայրաքաղաքի վերնախավը ոչինչ չէր կարող հակադրել գյուղատնտեսության անկմանը, որը վերջին հաշվով թիմարի, օսմանյան ռազմահողատիրական հարաբերությունների տնտեսական բովանդակության սպառման հետևանքն էր: Մնում էր միայն բարձրացնել հարկերը, որ փաստորեն ստեղծում էր միևնույն փակ շրջանը, գյուղատնտեսության ոչ արդյունավետությունը ստիպում էր եկամուտների չափը պահպանելու համար բարձրացնել հարկերը, իսկ հարկերի բարձրացումը հասցնում էր գյուղացիական ռայաների տնտեսությունների, և ի վերջո, ամբողջ տնտեսության ստագնատիկ վիճակին կամ քայքայմանը:

XVIII դարում ևս, վերը նշված գործընթացի խորացումը, ինչպես և պետության մղած շարունակական պատերազմները օսմանյան իշխող վերնախավին, ստիպում էին ծանրացնել հարկային լուծը, դրամի բազմապատիկ արժեզրկումը ինչ-որ կերպ փոխհատուցելու համար: Թիմարի և ռազմահողատիրական հին համակարգի փլուզումն արագացնում էր գավառներում արմատակալած և արդեն իր կենտրոնախույս դիրքով առանձնացող տեղական ֆեոդալական դասը՝ իր հերթին ուռճանալով գյուղացիական տնտեսությունների հարստահարումներն ու ժողացնելու հաշվին և խոչընդոտելով մայրաքաղաքի և գավառների տնտեսական հարաբերությունների ու հաղորդակցության զարգացումը:

4. Պոլսի հայ համայնքին ևս վիճակված էր ապրել այս պայմաններում մայրաքաղաքի մնացած բնակչության հետ միասին կրելով տնտեսական ծանր փորձությունները:

### Armenian Settlement of Istanbul in Ottoman System of Taxation

Albert Kharatian

#### SUMMARY

Armenians of Ottoman capital as well the inhabitants who were non muslim, had paid a number of taxes such as: kharaj /jizye/, avariz – i divaniye /a military tax with its varieties kurekci bedel – i, /the tax discharging from Navy service/, mukataa /taxes from the private property and the whole taxing unit/, ispence/agrarian tax, resm – i arus/ tax for a fride/. Owing to the depreciation of akche and the general fall of Ottoman economy the taxes were continually increasing in size. Up to the end of the 16<sup>th</sup> century the size of 40–50 akche jizye and avariz got as far as 240–300 correspondingly. Among annual taxes of Istanbul’s Armenians, the tax mucataa had prolonged for centuries. This tax, as an integrated tax unit, had paid not only separate houses, but also 6 Armenian communities of Istanbul.

### ՍՏԵՓԱՆՈՍ ԳԱՇՏԵՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԳԱՎԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԳՅԱՆ

Ա իշտ է, Ստեփան Գաշտեցու մատենագիտական ժառանգության ուսումնասիրությանը նվիրված մենագրական աշխատություն չկա, իսկ նրա գործերից շատերը, մանավանդ եկեղեցադավանական բովանդակության, տակավին կարոտ են հրատարակության, այնուամենայնիվ, XVII-XVIII դարերի դարագլխի այս հեղինակին չուսումնասիրված մատենագիրների ցանկին չի կարելի դասել:

Ստեփան Գաշտեցու գործերի առավել ամփոփ և ըստ էության բնութագրության փորձ կատարել է նոր ժամանակների անվանի պատմաբաններից ակադ. Աշոտ Հովհաննիսյանը՝ իր բնությունն ավարտելով տիրապետող սոցիալ-դասակարգային մտայնության հետևյալ բանաձևումով. «Գաղութահայ միջավայրում Գաշտեցու երկերը մի հայտնի չափով արտացոլում էին իրանական բռնատիրությանը սպասարկող հայ եկեղեցական և խոջայական տարրերի դեմ քաղաքի ներքնախավերում կուտակված տրամադրությունները: Այնուամենայնիվ, քաղաքական իր դիրքորոշումով Գաշտեցին դեռ շարունակում էր հաճել հայ բանավարությունների հին՝ արևմտաեվրոպական շավիղներում: Նա երագում է տեսնել հայրենի երկիրը եթե ոչ սեփական իշխանության, գեթ արևմտաեվրոպական կաթոլիկ դինաստիաներից մեկի տիրապետության ներքո: Իրանահայ ժողովրդի տրիբունը չէ նա իր հակաճառություններով ու քառյակներով, այլ պապական միսիոներների ետև կանգնած պետությունների

և սրանց հայ մեծարողների մոլորաշավիղ տեսաբանն ու դեմագոգ հրապարակագիրը... Նա չնձարեց նոր այն հեռանկարը, որի կոնտուրները գծագրվում էին Օրիի գիտակցության մեջ՝ սկսած այն օրից, երբ վերջինս հրաժեշտ տվեց Արևմտյան Եվրոպային՝ հայերի քաղաքական բախտը հյուսիսի մեծ պետության հետ կապելու համար»<sup>2</sup>:

Հանգուցյալ Ռ.Աբրահամյանի թվարկմամբ՝ Ստ.Գաշտեցին քանչորս անուն երկի հեղինակ է՝ գրված այլևայլ թեմաներով ու ժանրերով (պատմություն, ջատագովություն, ժամանակագրություն, քառյակներ, թեջմիսներ, հանելուկներ, երգիծանք, վարժանք և այլն)<sup>3</sup>: Ա. Հովհաննիսյանի տված բնութագրությունը հիմնականում կառուցված է այս հեղինակի «Համառոտ ձեռնարկ վիճարանութեան ընդդեմ հերժուածողաց ազգին Հայոց» ընդհանուր խորագիրն ունեցող երեքմասնյա աշխատության վրա («Մաղախ փշրանաց», «Կոչնակ ճշմարտութեան» և «Խնդիր ուղղութեան»)։

Հարկավ իրողություն է, որ Նոր Ջուղայում Հայոց ուղղափառ եկեղեցու քահանա Տեր Բարսեղի ընտանիքում ծնված, «դաստիարակեալ և սնեալ ի եկեղեցոց Հայոց և մախանձայոյ ճշմարտութեան, սիրօ սիրոյ և միաբանութեան, ցանկացող արդարութեան և ճշմարտութեան» դպիր Ստեփանոսը ազգային եկեղեցու սպասավոր չի դառնում, ավելին՝ անթարսյց հանդիմանում է նրա վարդապետությունից դուրս եղած դավանությունները (կաթոլիկ և

<sup>1</sup> Նրան վերաբերող աշխատությունների և հրապարակումների մատենագիտությունը տե՛ս Kevork B. Bardakjian, A. Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920, With an Interdisciplinary History, Detroit, 2000, pp. 66-67, 516.

<sup>2</sup> Աշոտ Հովհաննիսյան, Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 466: Աֆտոսանով պիտի նշենք, որ Ա.Հովհաննիսյանի այս աշխատության Գաշտեցուն վերաբերող էջերը (460-466) չեն ընդգրկվել Գևորգ Բարսակճյանի վերոնշյալ մատենագիտություն: Չեն հիշատակված նաև Մ.Չամչյանի, Վ.Ալիշանի, Հ.Տաշյանի, Հ.Աճառյանի, Գ.Զարպիսյանի, Հ. Տեր-Հովհանյանի և որոշ այլ հեղինակների մոտ եղած տեղեկությունները:

<sup>3</sup> Ռ.Աբրահամյան, Ստեփանոս Գաշտեցի, Հայկ. ՍՍՌ գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հասարակակ. գիտ.), 1936, թիվ 12, էջ 105-106:

<sup>4</sup> Ավանդված է՝ Երևանի Մատենադարան, ձեռ. թիվ 673, 781, 8111, 8746, 9049, 9689 (նկատվում են խորագրային տարբերակներ): Կա և այլ հավաքածուներում:

















































քեթ վերը նշված շահարկումները: Հայրենասիրությունը, սակայն, բարոյականությանը և խղճին ծառայող այդ մեծ անհատին երբեք երկընտրանքի առաջ չի կանգնեցրել, այլ, ընդհակառակը, նրան մշտապես գորավիզ է եղել հայ ժողովրդի ողբերգությունների հանդեպ հանցավոր հանդուրժողականություն որդեգրած գերմանական պետական շրջանների քաղաքականության դեմ իր պայքարում՝ ձգտելով պաշտպանել գերմանացի ժողովրդի՝ այդ քաղաքականության հետևանքով «անարգված» արժանապատվությունը:

## ABOUT JOHANNES' LEPSIUS ACTIVITY IN FAVOUR OF ARMENIAN PEOPLE

ASHOT HAYRUNI

### SUMMARY

The author focuses on Johannes Lepsius's activity for Armenia and the Armenians mainly pointing out nowadays spreaded inappropriate interpretations and evaluation regarding the collection (Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke) of documents on German diplomacy published in 1919 in Potsdam by Lepsius. The study based on adequate documentary materials and thorough analysis gives the opportunity to evaluate the relative historical events realistically and prevent those misunderstandings that could have arisen as a result of the above mentioned interpretations.

Մենք այդ վիճարկողներին խորհուրդ կտալինք մաս փոքր-ինչ ուսումնասիրել Լեփսիուսի կյանքի և գործունեության մասին շրջանները՝ համոզվելու համար, որ մասնաշահարկումները միանշանակորեն հերքելի լինելուց զատ հակասում են մաս փոքրությունների, մարտահրավերների և զոհաբերումների բովում ինքնահաստատված և հայրենասիրության «փորձաքննությունը» բազմիցս, մույնիսկ անհամեմատ ավելի ծանր-իրավիճակներում աներկբայորեն հաղթահարած գործչի կերպարին:

## ՀԱՅ ՆՀԱՆԱՎՈՐ զԵՐԴԱՍՏԱՆՆԵՐ ԽԱՏԻՍՅԱՆՆԵՐ

### ՍՈՆՅԱ ՄԻՐԶՈՅԱՆ

Վերջին դարերում հայ ժողովրդի կյանքում սկսեցին նշանակալի դեր խաղալ առանձին գերդաստաններ ու տոհմեր, որոնք կարծեք թե փոխարինելու եկան հայ պետականության հետ միասին պատմության թատերաբեմից հեռացած հայ ազնվականական դասին: Ժողովրդի ընդերքից ելած այդ գերդաստանները, շնորհիվ իրենց բնածին ընդունակությունների, ընտանեկան հայեցի դաստիարակության, կրթության տենչի, աննկուն աշխատասիրության ու անսպառ եռանդի, նվիրվածության իրենց հայրենիքին, եկեղեցուն և ժողովրդին, հասարակության մեջ հասնելով բարձր դիրքերի, մաս հարստության, անշահախնդիր կերպով ծառայել են իրենց ծնունդ տված ժողովրդին ու հայրենյաց Հայաստանին: Նման հայկական գերդաստանների և տոհմերի փառանքը գլխավորում են Լազարյանները՝ իրենց հայրենամակեր գործունեությամբ: Այդ փառանքում իր պատվավոր տեղն ունի Խատիսյան գերդաստանը:

Մեր տրամադրության տակ գտնվող տվյալներով՝ գերդաստանի պատմությունը սկսվում է Ստեփան Գաբրիելի Խատիսյանով: Թիֆլիսի տոհմական պատվավոր քաղաքացի Ստ. Խատիսյանը ծնվել է 1801 թ.: Երկար տարիներ զբաղեցրել է պետական պաշտոններ<sup>1</sup>: Նվիրատվություններով մասնակցել է ազգային կրթական հաստատությունների, մասնավորապես Ներսիսյան դպրոցի ստեղծմանն ու առաջընթացին:

<sup>1</sup> ՀՀ պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ԱԿԴԱ), ֆ. 200, ց.1, 120, թ. 175:

Ստ. Խատիսյանն ունեցել է չորս որդի՝ Գաբրիել, Հովհաննես, Ներսես և Վստղ: Գաբրիել Խատիսյանը (1831-1896 թթ.) մասնագիտությամբ եղել է բնագետ, զբաղվել է մաս մանկավարժությամբ: Աշակերտել է Խ. Արովյանին, այնուհետև ավարտել է Լազարյան ճեմարանը և Դորպատի համալսարանը: Վերադառնալով Թիֆլիս՝ դասավանդել է Ներսիսյան դպրոցում, բացել է մաս մասնավոր պանսիոն, որտեղ մեծ տեղ է հատկացրել մայրենի լեզվի ուսուցմանը, գրել է մանկավարժական բնույթի աշխատություններ:

Ս. Գ. Խատիսյանի որդիներից ամենանշանավորը եղավ միջնակը Հովհաննեսը (1836-1894 թթ.): Հ. Խատիսյանը մասնագիտությամբ համալսարանավարտ գյուղատնտես էր: 1862-1869 թթ. եղել է Կովկասի գյուղատնտեսության և արդյունաբերության վարչության կոլեգիայի քարտուղար, 1869-ից՝ Կովկասի փոխարքայի հատուկ հանձնարարությունների գծով պաշտոնյա, 1875-ին ընտրվել է Ռուսաստանի տեխնիկական ընկերության Կովկասյան բաժանմունքի իսկական անդամ, միաժամանակ աշխատել է Կովկասի բժշկական ընկերությունում իբրև քարտուղար: 1885-ին նա ստանում է Թիֆլիսի մահանգի և պետական գույքերի վարչության պետական խորհրդականի աստիճան և ընտրվում Կովկասի գյուղատնտեսական ընկերության փոխնախագահ: 1893 թվականին Հ. Խատիսյանը նշանակվում է Թիֆլիսի մահանգի և Ջաքթալայի օկրուգի պետական գույքերի կառավարիչ և գուհահեռաբար Թիֆլիսի մահանգի գյուղացիական գործերի ատյանի անդամ: Հ. Խատիսյանը ճանաչված կովկասագետ ու հողային հարցի մասնագետ էր<sup>2</sup>:

70-80-ական թվականներին նա ղեկավարել է Անդրկովկասի պետական գյուղա-

<sup>2</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 22 սեպտ., 1910 թ.:











մայն դատապարտում ենք այդ տարրերի շովինիստական քաղաքականությունը և մեր ձեռքը մեկնելով տարագիր տաճկահայ ժողովրդին՝ մեր բուռն ցավակցությունն ու համակրությունն ենք հայտնում նրան... Հոգով ու սրտով միանում ենք հայ ժողովրդի պատմական տանջանքին, այրվում նրա կրակով, լացում նրա արտասուքով<sup>38</sup>:

Վրացիների մարդասիրական գործելակերպի մասին է վկայում նաև այն փաստը, որ Պետրոգրադի 1915թ. մարտի 7, 8 և 9-ի երեքօրյա հանգանակության օրերին առանձնահատուկ էր վրաց ուսանողության վերաբերմունքը: Վերջիններս, Կենտրոնական մարմնի տրամադրության տակ դնելով մի խումբ վրացի կազմակերպիչների, օժանդակեցին հանգանակության գործի հաջողությանը: Հանգանակության մի տուփից հանված տոնասկներից մեկում մի վրացի իր ուրախությունն էր հայտնում այն առիթով, որ իրենք հնարավորություն ունեցան հայերին օգնելու<sup>39</sup>:

Պետրոգրադի հանգանակության օրերին հայ գաղթականներին համանման օգնություն էին ցույց տալիս նաև լեհերը<sup>40</sup>:

Ուսաստանի տարբեր ժայրերից գաղթականների համար հանգանակված դրամը ուղարկվում էր Անդրկովկասի տարբեր շրջաններ: 1914թ. դեկտեմբերից մինչև 1916թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում միայն էլ միաձմեռի կաթողիկոսության անունով ստացվել էր 298.558ռ. դրամ<sup>41</sup>: Ընդհանուր առմամբ, հայ գաղթականության օգնության համար ռուսահայ զաղութի կողմից հանգանակվել է 4580000 ռ. (ոսկով)<sup>42</sup>:

<sup>38</sup> Հայաստանի Հանրապետության Հասարակական-քաղաքական փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ /ՀՀ ՀՔՓԿՊԱ, ֆ.1022, ց.2, գ.444, ք.1, նաև «Պայքար», 1915թ. դեկտեմբերի 27, թիվ 4:  
<sup>39</sup> «Հորիզոն», 1915թ. ապրիլի 9:

<sup>40</sup> Նույն տեղում:  
<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.2, գ.1263, ք.1-2, նաև «Արև», 1916թ. հոկտեմբերի 12, թիվ 226:  
<sup>42</sup> «Հայրենիք», 1932թ., թիվ 1, էջ 140:

Ռուս ընթերցող լայն հասարակայնությանը գաղթականների կյանքին և ընդհանրապես հայ մշակույթին ծանոթացնելու գործում մեծ նշանակություն ունեցան մասնավորապես 1916թ. հունվարից՝ շաբաթը մեկ անգամ, Մոսկվայում հրատարակվող «Армянский вестник» և 1916թ. մարտից Օդեսայում լույս տեսնող «Армяне и война» ամսագրերը: Ամսագրերի արժեքը պայմանավորված էր նրանով, որ դրանց թղթակցում էին ռուսական և հայ մշակույթի այնպիսի նշանավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին՝ Մ.Գորկին, Վ. Բրյուսովը, Ի. Բուևինը, Ս. Գորոդեցկին, Ա. և Յ. Վեսելովսկիները, Ն. Մառը, Մ. Կովալևսկին, Ա. Կրիմսին, պրոֆ. Կոտլյարովսկին, Վ. Նեմիրովիչ-Ռանցենկոն, Ֆ. Սոլոգուբը, Մ. Շահինյանը, Ա. Ջիվելեզովը, Ս. Կարա-Մուրզան, Լեոն, Զ. Թումանյանը, Ա. Շիրվանզադեն և ուրիշներ:

Այսպիսով՝ հակառակ ցարիզմի որոշ շրջանների որդեգրած հակահայկական քաղաքականությանը, ռուսական կայսրության ժողովրդական ամենալայն խավերը նյութական ու բարոյական բուռն օգնություն ցույց տվեցին արևմտահայերին՝ նպաստելով վերջիններիս գոյատևմանը:

Վերջում արժե հիշել ռուս մեծաճուն քաղաքական գործիչ, պատմաբան և հրապարակախոս Պ.Ն. Միլյուկովի հետևյալ խոսքերը. «Օգնելով հայ գաղթականներին՝ մենք ոչ միայն փրկում ենք առանձին անձանց կյանքը, մենք նպաստում ենք մի ազգության պահպանմանը, որի գոյությունից է կախված թուրքական շրջաններում մշակութային առաքելության հաջողությունը...»<sup>43</sup>:

<sup>43</sup> Д-р Л.Я. Ошеровский, Трагедия армян-беженцев, Пятигорск, 1915, стр. 23.

The Armenian Colony in Russia and Help Organization of the Armenian Refugees during World War I.

AVETIS HARUTUNIAN

SUMMARY

During the World War I the Turkish Government put into action the execution of the Armenians who was nothing else but a real genocide. Many refugees took shelter in Russia as well.

In the article the hard and helpless conditions of the Armenian refugees and organization of their help in the Armenian colony in Russia is presented on the basis of some new-found documents.























կելի զեղծումներու և ազատութիւններու բոյն եղած են:

10. Երկու նահանգներու սահմանի վրայ ախտաւոր դժգոհութեան մը վերջ դնելու համար Ոզմի հայ գիւղէն յափշտակուած 2000 ոչխարները կամ վերադարձնել տալ, կամ անոնց փոխարէնը անմիջապէս վճարել կառավարութեան կողմէ՝ յառաջիկային տուրքի միջոցով գանձելու պայմանով յանցաւոր աշիրէթէն<sup>4</sup>: Ներումի արժանացնել Ոզմի փախստականները նօրմալ աշխատանքի վերսկսումը հնարաւոր դարձնելու համար այդ գիւղի մէջ, ուր անօրինակ աչառու խստութեան մը երեսին այսօր մնացել են ծերերն ու անկարները:

Մեծայոյս եմ, որ Ձեր վսեմութիւնը, իրազեկ այդ գաւառներու կացութեանց, համախոհ պիտի գտնուի վերի համեստ առաջարկներուն, որոնց կիրառումը ոչ միայն աստիճան մը պիտի ամոքէ արդէն անտանելի դարձած տառապանքները, այլ մանաւանդ պիտի ծառայէ ժողովրդի մէջ վստահութիւն մը ստեղծելու կառավարութեան հանդէպ, որուն այնքան պէտք ունի ինք՝ այս երկրի վերածնման համար:

Այս վստահութեան շնորհի հնարաւոր պիտի դառնայ հետզհետէ փարատել այն չարագուշակ և յամառօրէն անող համոզումը մեր հասարակութեան մէջ, թէ հայահալած քաղաքականութիւնը, պաշտօնեաներու մտայնութեան և ապիկարութեան անելի, արդիւնք է բարձր շրջանակներէ ներշնչուած ուղղութեան մը:

Յանձնելով Ձեզ և Ձեր գործերը բարձրելոյն առաջնորդութեան, կը մնամ աղօթարար:

Կար. փոխ. Աղթամարայ  
Եզնիկ վարդ.

ՀՀ ՊԿՊԱ, ֆ 57, ց.5, գ.38,թթ.9-14: Պատճենը: Ձեռագիր:

<sup>4</sup> Աշիրեթ – քրոյական ցեղերի անվանումը, որոնցից յուրաքանչյուրն ունենում է իր ցեղապետը:

## ՊԻՏՈՒՅԱՆ ԲԱՄԱՑՑՅԵԼԻ ՆՅՅՈՒԹԵՐ

### ՆԱՏՇԵՊՍՈՒԹ ԵՎ ԹՈՒԹՄՈՍ III

ԱՐԱՄ ԲՈՍՅԱՆ

Անցյալի քաղաքական գործիչները, որպէս կանոն, գնահատվում են երկու անգամ, առաջինը՝ իր ժամանակակիցների, այնուհետև՝ սերունդների կողմից: Ժամանակակիցի գնահատականները մեծ մասամբ սուբյեկտիվ են՝ կախված տվյալ անձի նկատմամբ այս կամ այն քաղաքական խմբավորման դիրքորոշումից: Նա կարող է հանիրավի դատաւիտվել կամ, ընդհակառակը, մեծարվել ոչ ըստ արժանիւնի: Այդպիսին է կյանքը: Մերօրյա մասնագետի խնդիրն է, հանգամանորեն վերլուծելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի գերիշխող միտումները, փորձել վերհանել տվյալ գործի իրական ներդրումը ժամանակի զարգացումներում անկախ նրա շուրջը հյուսված ավանդական պատկերից:

Այս նյութի նպատակն է հնարավորին չափ ավելի մատչելի և առարկայական ներկայացնել Նատշեպտոսի և Թուփոս III-ի պատմական դիմանկարները:

Շատերն են լսել Հին Եգիպտոսի պատմության երկու դեմքերի՝ թագուհի Նատշեպտոսի և նրա գահակից ու հետնորդ աշխարհակալ փարավոն Թուփոս III-ի անունները: Առաջինը հայտնի է իր լայն շինարարական գործունեությամբ, երկրորդի օրոք Եգիպտոսի թագավորու-

թյունը հասավ իր ռազմաքաղաքական հզորության գագաթնակետին՝ վերածվելով ժամանակի Առաջավոր Ասիայի հզորագույն տերության:

Նատշեպտոսը փարավոն Թուփոսու I-ի (Ք. ա. 1504-1492 թթ.) դուստրն էր՝ ծնված թագուհի Յախմոսից: Նրա երկու արյունակից եղբայրները մահացել էին դեռ մանուկ հասակում: Հոր մահից հետո փարավոն հռչակվեց օրինական գահաժառանգը՝ Թուփոսու I-ի և գլխավոր թագուհի Մուտնոֆրետի որդի Թուփոսու II-ը (Ք. ա. 1492-1479 թթ.): Նատշեպտոսը դարձավ փարավոնի գլխավոր կինը, այսինքն՝ նրանց որդին պիտի ժառանգեր հոր գահը: Գահակից ամուսինները, այսպիսով, եղբայր և քույր էին՝ հայրական գծով:

Թուփոսու II-ի կառավարումը կարճատև էր: Նա հասցրեց միայն դաժանորեն ճնշել Եգիպտոսից հարավ՝ Նուբիայում (այսօրվա Եթովպիա) բռնկված խռոք ասպատամբությունը և հետ մղել Պաղեստինից դեպի Եգիպտական տիրույթներ ձգտող քոչվոր ցեղերի հարձակումը: Փարավոնը մահացավ ինչ-որ անհայտ հիվանդությունից՝ երիտասարդ տարիքում: Արքայական զուգից ծնվեց արքայադուստր Նեֆրուրան: Իսկ գահաժառանգ հռչակվեց Թուփոսուի հարձ Իսիից ծնված որդին՝ հետագայում փարավոն դարձած Թուփոսու III-ը (Ք. ա. 1479-1425 թթ.):

Հավանաբար, դեռ հոր կենդանության օրոք Թուփոսուը հայտարարվել էր գահակից, սակայն մահից հետո իրադրությունը կտրուկ փոխվեց: Օգտվելով մայրաքաղաք



Թուֆնոսը երիտասարդ, արտակարգ եռանդուն, խիզախ և վերին աստիճանի նպատակասլաց անձնավորություն էր, օժտված քաղաքական գործի բոլոր բարեմասնություններով: Նրա բնավորության այս գծերը լավագույնս ի հայտ եկան Հատչեպտոֆի 22-ամյա տիրապետության (Ք. ա. 1479-1457 թթ.) ավարտից հետո, երբ նա միանձնյա գլխավորեց Եգիպտական թագավորությունը:

Հին Եգիպտոսի պատմությանը նվիրված բոլոր գիտական և գիտահանրամատչելի հրատարակություններում Թուֆնոս III-ի կառավարման շրջանը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Նրանից մեզ են հասել մեծաքանակ գրավոր հուշարձաններ, որտեղ հանգամանորեն նկարագրվում են փարավոնի արտաքին քաղաքական ձեռնարկումները: Այսպես՝ արդեն Հատչեպտոֆի մահվան տարում նա սկսեց աննախադեպ լայն շավիղ ընդգրկող քանանյա գրեթե անընդմեջ արշավանքների մի շարք, որի արդյունքում Եգիպտոսը վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության:

Իր ինքնուրույն կառավարման հենց առաջին տարում Թուֆնոսը ջախջախեց Պաղեստինում և Սիրիայում Զաղեշ քաղաքի գլխավորությամբ ստեղծված խոշոր միությունը: Արագ երթով փարավոնն անձամբ գլխավորեց իր բանակը դեպի Պաղեստին, որտեղ նվաճվեց հզոր պարսպներ ունեցող Մեգիդոն քաղաքը: Դրան հետագա տարիներին հաջորդեցին նորանոր հաջողություններ այսօրվա Սիրիայի տարածքում: Մեկը մյուսի հետևից փարավոնի ձեռքն անցան տասնյակ քաղաք-պետություններ: Սակայն առանց Միտաննիի հետ հարաբերությունները պարզելու անհնար էր վերջնականապես նվաճել սիրիական քաղաք-պետությունները, քանի որ վերջիններս հենվում էին Միտաննիի քաղաքական և ռազմական աջակցության վրա: Փարավոնի բախումը Առաջավոր Ասիայի հզորագույն քաղաքական ուժերից

մեկի՝ Միտաննիի հետ ավարտվեց մեծ հաջողությամբ:

Թուֆնոսի միտաննական արշավանքը փարավոնի աննկուն կամքի և նպատակասլացության փայլուն օրինակն է: Գերադասելով նահանջը մարտադաշտում բախվելուց՝ Միտաննիի արքան զորքով հեռացավ Եփրատի արևելյան ափը: Փարավոնը երկընտրանքի մեջ էր: Կարելի էր վերադառնալ և սահմանափակվել հակառակորդին առանց մարտի փախուստի մատնելու պատվավոր զգացումով: Սակայն Թուֆնոսը այլ կարծիքի էր: Նա պատվիրեց փյունիկյան Բիբլոս քաղաքի նավաշինարարներին կառուցել գետնափեր, որոնք այնուհետև սայլերով Միջերկրականի ափերից փոխադրեցին Եփրատ, որով Եգիպտական զորքը անցավ բուն Միտաննիի տարածք: Միտաննիի արքան զորքով արդեն հասցրել էր հեռանալ: Փարավոնը ասպատակեց միտաննական բնակավայրերը, Եփրատի արևելյան ափին թողեց իր հաղթանակի մասին մի արձանագրություն և վերադարձավ Սիրիա: Երկու տարի անց, այնուամենայնիվ, Թուֆնոսին հաջողվեց մարտի դաշտում հանդիպել Միտաննիի արքային: Փարավոնը հաղթեց և մեծ ռազմավարով վերադարձավ:

Ասիական երկրներում տպավորիչ հաղթանակները փարավոնին լայն միջազգային ճանաչում բերեցին: Ժամանակի բոլոր առաջատար երկրներն ըստ արժանվույն ընդունեցին Եգիպտոսի վերադարձը մեծ քաղաքականություն: Խեթական պետության, Ասորեստանի և Բաբելոնիայի արքաները թանկարժեք ընձաներ առաքեցին Թուֆնոսին՝ ի նշան բարեկամության: Նորաստեղծ տերությունը ներառում էր մի ահռելի տարածք՝ Նեղոսի չորրորդ սահանքից մինչև Հյուսիսային Սիրիա՝ Կարքեմիշի մոտ, շուրջ 3500 կմ: Կարևորում գտնվող Ասոնի տաճարի պատերին փորագրված արձանագրություններում հիշատակվում են Սիրիայում, Պաղեստինում և

Նուրիայում նվաճված շուրջ 600 երկրների և քաղաքների անվանումներ:

Թուֆնոսի տղանդը, որպես քաղաքական գործիչ, հատկապես դրսևորվեց սիրիական և միտաննական արշավանքների ավարտից հետո, նորաստեղծ տերության կառավարման կազմակերպման ժամանակ: Եգիպտոսի բոլոր սեփական տիրույթներից ստեղծվեց մեկ վարչական միավորում, որի ղեկավարը կոչվում էր «հյուսիսային երկրների կառավարիչ»: Այսուհետև նյութական բարիքների համար անհրաժեշտություն չկար ռազմական արշավանքներ կազմակերպել: Նվաճված շրջանները դրվեցին ամենամյա, նախօրոք որոշված հարկի տակ:

Որքան էլ որ երիտասարդ տարիքում Թուֆնոսը կաշկանդվել էր Ասոնի տաճարի քրմերից, նա չնոռացավ վերջիններիս՝ բոլորին հատուցելով ըստ արժանվույն: Հատչեպտոֆի մերձավորները դաժանորեն պատժվեցին, իսկ ովքեր արդեն հասցրել էին դեռ փարավոնուհու օրոք հեռանալ հանդերձյալ աշխարհ, նրանց մասին եղած նյութեղեն հիշողությունները վերացվեցին: Սակայն Ասոնը ամենագոր էր, և Թուֆնոսը իր արշավանքներից ստացված բարիքներից լիովին բաժին հանեց նաև նրան: Ասոնի տաճարում մեկը մյուսի հետևից

ստեղծվում էին նոր, շքեղ կառույցներ: Տաճարի պատերին պատկերվեցին փարավոնից ստացված նվերները՝ ուղեկցող արձանագրություններով:

Կյանքի վերջին տասնամյակը Թուֆնոսն անցկացրեց հանգստի մեջ: Ասիական տիրույթներում հարաբերական խաղաղություն էր: Փարավոնը զբաղված էր երկրի ներքին կյանքով, հիմնականում շինարարական գործունեությամբ: Եվ, իհարկե, թագաժառանգ Ամենհոտեպի դաստիարակությամբ, որին հայրը դեռ կյանքի օրոք դարձրեց գահակից:

Թուֆնոս III-ը ապրեց մինչև 70 տարեկան: Նրա աճյունն ամփոփվեց «Արքաների հովտում», որտեղ գտնվում են փարավոնի նախորդների դամբարանները: Որքան որ ճակատագիրը բարեհաճ էր նրա հանդեպ Հատչեպտոֆի մահից հետո, այնպես էլ այն ուղեկցեց Թուֆնոսին նաև մյուս կյանքում: Փարավոնի մոսիան խուսափեց տարբեր ժամանակների թալանչիներից և պահպանվեց մինչև մեր օրերը: Թուֆնոսը իրենից հետո թողեց ոչ պակաս նպատակասլաց և արժանավոր ժառանգ: Ամենհոտեպ II-ը հաջողությամբ շարունակեց հոր եռանդուն քաղաքականությունը ասիական երկրներում:

HATSHEPSUT AND TUTMOSIS III

ARAM KOSYAN

SUMMARY

The paper deals with one of the most prominent figures of the ancient Egyptian history-pharaoh Tutmosis III (1479-1425 B. C.).

Due to the intrigues conducted by his wife-queen Hatshepsut. Tutmosis had lost his actual power, holding only a nominal one, completely neglected by the queen and the courtiers during the first 22 years of his rule (1479-1457 B. C.)

Only after the death of Hatshepsut Tutmosis was able to express his abilities as a skilful king and army-commander. The consequences of his long-termed expansion into Palestine, Syria and Nubia are well-known Egypt became a leading power in the Near East with the enormous territory of about 3500 km in length from north to south.

# ՏԻՓՐԱՆ ՄԵԾ

(պատմական ակնարկ)

## ՌՈՒԲԵՆ ՄԱՆԱՍԵՐԹԱՆ

Երկրորդից առաջին դարերի սահմանագլխին Հռոմի և Պարթևստանի առաջխաղացման հետևանքով Հայաստանի համար պարզորոշ ուրվագծվեց վտանգավոր գոյավիճակ՝ հայտնվել երկու ծավալապաշտ տերությունների արանքում, դառնալ նրանց նվաճողական նկրտումների առարկա և հակամարտության ուղղված:

Վերահաս վտանգը չէր վրիպել Հայաստանի տեսադաշտից: Ք. ա. 96 թ. Հայաստանում գահ բարձրացած Տիգրան II-ը իր առջև խնդիր դրեց՝ կասեցնել Հռոմի և Պարթևստանի առաջխաղացումը դեպի Հայաստանի սահմանները, թույլ չտալ հռոմեացիներին ու պարթևներին շրջափակել Հայոց թագավորությունը և սպառնալ նրա անկախությանը: Այլ կերպ ասած, Տիգրանի գործունեությունը հետամտում էր Հայաստանի աշխարհաքաղաքական հիմնահարցի լուծման նպատակ: Իր այս պատմական մեծ նպատակին հասնելու համար նա երեսուն տարի անընդմեջ և վճռականորեն պայքարեց՝

Տիգրանի արտաքին քաղաքականությունը ճիշտ չէ բնութագրել որպես նվաճո-

ղական՝ պայմանավորված նյութական շարժառիթներով: Իրականում հայոց արքան իրագործում էր Հայաստանի եռանդուն պաշտպանական ստրատեգիան՝ հակադրվելով Արևելքի բեմահարթակում մեծ տերությունների առաջխաղացմանը: Ավելի ին՝ իր արտաքին քաղաքականությունը իրականացնելիս հայոց արքան հենվում էր հռոմեական նվաճմանը ընդդիմացող հարևան ժողովուրդների աջակցության վրա: Գործելով առավելապես դիվանագիտական միջոցներով՝ Տիգրանը կարողացավ գրեթե ամբողջ Մերձավոր Արևելքը միավորել Հայաստանի շուրջը՝ հզոր տերության մեջ:

\*\*\*

Ք.ա. 113-112 թթ. սկսվեցին պարթևական արքա Միհրդատ II Արշակունու այրուձիի ներխուժումները Հայաստան: Արտաշեսյանները համատ կոիվներում պաշտպանեցին Հայաստանի անկախությունը: «Պարթևները երբեք ուժով չեն գրավել հայերին»,— գրել է հույն հեղինակ Ստրաբոնը: Սակայն որպես խաղաղության պայման՝ հայոց թագավոր Արտավազդը հարկադրված եղավ պարթևներին պատանդ հանձնել գահաժառանգ Տիգրանին: Տիգրան արքայազնը պարթևների մոտ անցկացրեց երկար տարիներ: Պարթևները նպատակ էին դրել նրան հնազանդություն ներշնչել, պատրաստել իրենց քաղաքականության հետևորդ: Պարթևներին արտաքուստ խոնարհ Տիգրան արքայազնը իրականում պահպանում էր նվիրվածությունը անկախ և հզոր Հայոց թագավորության գաղափարին:

Ինչու Ռ.Լ. Մանասերյան, Տիգրան Մեծ, Հայաստանի քաղը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987:

96 թ. Արտավազդ I-ի մահից հետո Տիգրանը կարողացավ վերադառնալ Հայաստան:

Արդեն իր առաջին իսկ քայլով նա մեծ տերություններին ցուցադրեց անկախ ու համարձակ քաղաքականություն վարելու իր վճռականությունը: 94 թ. հայոց թագավորն ավարտեց իր պապ Արտաշեսի կիսատ թողած գործը՝ հայկական հողերի միավորումը: Նա գրավեց և Մեծ Հայքին միացրեց Ծոփքի հայոց թագավորությունը, Ծոփքում գահակալած Զարեհյանների արքայատոհմը մեկընդմիջտ իջավ պատմական ասպարեզից: Հաջորդ քայլով Տիգրանը բարեկամական հարաբերություններ հաստատեց Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի հետ: Պոնտոսի թագավորությունը Հայաստանին սահմանակից էր հյուսիս-արևմուտքից և ընդարձակ տարածքներ էր ընդգրկում Սև ծովի ափերի երկայնքով: Ընդ որում, Տիգրանը կնության առավ Միհրդատի դստերը՝ Կլեոպատրային:

93 թվականին Ծոփքի թագավորության վերացումից հետո հայկական պետության արևմտյան սահմանը դարձավ Եփրատ գետը, որից այն կողմ տարածվում էր Կապադովկիայի թագավորությունը: Կապադովկիան այդ պահին Հռոմի ծավալապաշտ նախաձեռնությունների ոլորտում

<sup>2</sup> Համաձայն Հուստիանոսի՝ առաջին հայ-պարթևական պատերազմում (113-112 թթ.) պարթևների ներխուժմանը դիմակայում էր հայոց արքա Արտավազդը: Գրականության մեջ պատշաճ ուշադրություն չէր դարձվել այն փաստի վրա, որ հայոց գահաժառանգ Տիգրան II-ի պարթևներին որպես պատանդ հանձնելը տեղի ունեցավ հենց այդ պատերազմի հետևանքով, այսինքն՝ Հայաստանում Արտավազդի թագավորելու ժամանակ: Այն-հայտ է, որ Տիգրան Մեծի հայր Տիգրան Առաջինը կարող էր թագավորել միայն Արտավազդ I-ից առաջ, այլ ոչ թե հետո, ինչպես սխալմամբ կարծում էր Հ. Մանանդյանը (Հ. Մանանդյան, Տիգրան II-ը և Հռոմը, Երևան, 1972, էջ 47): Այսպիսով՝ Արտաշեսյանները թագավորում էին հետևյալ հերթականությամբ՝ Արտաշես I (189-160 թթ.), Տիգրան I (150-ական-130-ական թթ.), Արտավազդ I (130-96 թթ.)

էր: Հռոմի սենատը 94-ին այնտեղ գահին հաստատեց իր դրածո և կամակատար Արիոբարզան I Հռոմեասերին: Այս քայլով Հռոմն իր գերիշխանությունն էր տարածում ընդհուպ մինչև Հայաստան՝ նպատակ ունենալով Կապադովկիան դարձնելու Արևելքում իր առաջխաղացման հենակետը: Սակայն դրան դեմ էր կապադովկիական ավագանին:

93 թ. ձեռք բերելով վերջինիս աջակցությունը՝ Տիգրանը արշավեց Կապադովկիա և գահընկեց արեց Արիոբարզանին: Կապադովկիայի գահին Տիգրանը թագավոր նշանակեց տեղացի մեծամեծների ընտրյալին՝ Գորդիոսին: Հայոց թագավորը դարձավ Հռոմից Կապադովկիայի անկախության երաշխավորը:

Տիգրանի այս ելույթը բացահայտ մարտակոչ էր աշխարհակալ Հռոմին, ուժեղ և անսպասելի հարված նրա ծավալապաշտ ծրագրերին Արևելքում: Պերգամոնում՝ փոքրասիական թերակղզու արևմուտքի հելլենիստական թագավորությունում, 131-129 թթ. Արիստոնիկոսի ապստամբությունից հետո արևելյան արքաներից դեռ ոչ ոք չէր համարձակվել գեներալ ուժով մերժել հռոմեական կառավարության որոշումը: Ի պատասխան՝ Հռոմը դեպի Կապադովկիա զորաբանակ շարժեց՝ Արիոբարզանին վերահաստատելու գահին: Բանակի հրամանատար կարգվեց ականավոր զորավար Լ.Կ.Սուլլան: Նրան ընդառաջ Տիգրանը ուղարկեց խոշոր զինուժ: 92 թ. Կապադովկիայում տեղի ունեցավ Հայաստանի և Հռոմի միջև առաջին ուղղակի ըմբոստանը՝ Կապադովկիայի տարածքում հայ-հռոմեական լոկալ պատերազմը: Մեծ և արյունահեղ ճակատամարտում հայկական զորքը պարտություն կրեց: Նրան հետապնդելով՝ Սուլլան դուրս եկավ Եփրատի ափը՝ Հայաստանի արևմտյան սահմանը:

Եփրատի ափին՝ Մելիտենեի (Մալաթիայի) մոտ, հռոմեական զորավարը տե-

ասկցությունն ունեցավ պարթևական արքայից արքա Միհրդատի դեսպան Օրոբազուսի հետ: Առաջին անգամ հարաբերություններ հաստատելով՝ հոռմեացիները և պարթևները պայմանավորվեցին Մերձավոր Արևելքն իրար մեջ բաժանել: Սահմանը պիտի անցներ Եփրատ գետի վրայով: Հատուկ քննարկվեց Հայաստանի դեմ Հոռմի և Պարթևստանի միջև ռազմական դաշինքի կնքման հարցը: Միհրդատ Արշակունուն պարզ էր, որ նա մեծ սխալ գործեց Տիգրանին ազատ արձակելով Հայաստան: Պարթևական աշխարհակալությունն արդեն անհանգստացած էր Տիգրանի անկախ արտաքին քաղաքականությունից և պատրաստ էր Հոռմին օգնություն ցույց տալ Հայաստանի դեմ:

Սուլլայի և պարթևների բանակցությունները Տիգրանի համար պարզորոշ կերպով բացահայտեցին վերահաս սպառնալիքի ամբողջ մեծությունը՝ Հայաստանի շուրջը մեծ տերությունների տիրապետության հաստատման վտանգավոր հետևանքները:

Ք.ա. 91 թ. հայկական բանակը երրորդ անգամ ներխուժեց Կապադովկիա: Արիոբարզանը նորից փախավ Հոռմ: Այդ էր Տիգրանի անմիջական պատասխանը հոռմեա-պարթևական բանակցություններին՝ Եփրատի վրայով Մերձավոր Արևելքի բաժանման մասին: Սակայն այս անգամ Տիգրանի դիրքորոշումը կապադովկիական հարցում կտրականապես ուրիշ էր. արևելքից պարթևական սպառնալիքի ճնշման ներքո արքան հրաժարվեց կապադովկիացիների անկախությունը սատարելուց: Տիգրանը զիջեց Կապադովկիան Միհրդատ Եփատորին: Ընդ որում, նա տեղահան արեց Հայաստան բազմաթիվ կապադովկիացի համայնական գյուղացիների իրենց ողջ գույքով: Հայոց արքայի ծրագրերը պահանջում էին աշխատուժի բազմապատկում: Նա լեցուն էր վճռականու-

թյամբ վերացնել պարթևական հարձակման վտանգը և պիտի պատրաստվեր պարթևների դեմ պատերազմին: 92 թ. Սուլլայի և պարթևների բանակցությունները Տիգրանին պարզորոշ ցույց էին տալիս, որ Հոռմին դիմագրավելու իր փորձերը կարող են անմիջապես խորտակվել պարթևական միջամտությունից:

Անհրաժեշտ էր նախ և առաջ բարեփոխել ռազմական ուժերը: 91-87 թթ. հայոց հեծելազորի կազմում ստեղծվեցին ծանր զրահավորված հեծելազույցներ: Հեծելամարտիկի կործքն ու թիկունքը պաշտպանում էր երկաթյա թիթեղներից ճոշանը: Թիթեղակար զրահով էր պաշտպանված նաև երիվարը: Հեծյալի գլխավոր զենքն էր երկար ու ծանր նիզակը, որը նա հարվածելիս բռնում էր երկու ձեռքով: Կարևորագույն դեր էին կատարում հեծյալ նետաձիգների արագաշարժ ստորաբաժանումները, որոնք վարժ էին դիպուկ նետահարելու՝ սլացող երիվարի վրայից: Պարթևները ի վիճակի չէին խոչընդոտելու հայոց արքայի այդ ռազմական պատրաստությունները: Պարթևստանում արդեն պայթեց վաղուց հասունացող քաղաքական ճգնաժամը (91 թ.): Միհրդատ II արքայից արքան ստիպված էր պաշտպանելու իր գահը երկու հավակնորդներից՝ Օրոդեսից և Գոտոարձեսից (91-87 թթ.), և Տիգրանը լիովին օգտագործում էր այդ բարեպատեհ հանգամանքը: Նա ապահովեց իր թիկունքը ապագա պատերազմում՝ իր գերիշխանությանը ենթարկելով անդրկուրյան երկրներ Վիրքն ու Աղվանքը (90-87 թթ.):

Ք.ա. 86 թ. (անմիջապես Միհրդատ II-ի մահից և Օրոդեսի հաղթանակից հետո) Տիգրանը պարթևների համար անսպասելիորեն ներխուժեց նրանց տիրույթները: Հյուսիսային Միջագետքում՝ Ադիաբենեի մարաքաղաք Արբելայի մոտակայքում, հայոց այրուձին նրա գլխավորությամբ

ծանր պարտության մատնեց հակառակորդին: Պարթևական տիրապետությունը վերացվեց Հայաստանի ամբողջ հարավային և արևելյան սահմանների երկայնքով: Հայաստանի սահմանակից թագավորություններ Կորդուքը, Ադիաբենեն, Օսրոյենեն, Ատրպատականը, որ հպատակ էին պարթևներին և նրանց մատուց էին ծառայում Հայաստան արշավելու համար, ենթարկվեցին հայոց թագավորի գերիշխանությանը:

Տիգրանը հասավ մինչև Էփեսոսն՝ Համադան (Մեծ Մեդիայի մայրաքաղաք), դրանով իսկ նրան հաջողվեց կտրել հաղորդակցության այն ուղին, որը իրար էր միացնում պարթևական տերության երկու կարևորագույն տարածաշրջանները՝ Մարաստանն ու Միջագետքը (Բարեյլոնիան): Հաղթանակի շնորհիվ Հայաստանը մտավ Արևելքի հզորագույն պետությունների շարքը: Ի նշանավորումն իր նոր մեծատիրական դիրքի՝ Տիգրանը ընդունեց «արքայից արքա» տիտղոսը: Իսկ պարթև Արշակունիները՝ մինչև 85 թվականը «արքայից արքա» տիտղոսի կրողները, հարկադրված էին այսուհետև այս տիտղոսը հայոց արքաների ժառանգական իրավունքը ճանաչել:

Պարտության հետևանքով Պարթևստանն իր նշանակությամբ վերածվեց երկրորդական տերության, որին շարունակում էին ցնցել ներքին խլրտումները: 84-ին Տիգրանը հնարավորություն ստացավ անկաշկանդ վերսկսելու Հոռմի ազդեցությունը Արևելքում վերացնելու իր քաղաքականությունը:

Տիգրանը գիտակցում էր, որ աշխարհի ամենագոր պետության՝ Հոռմի առաջադացմանը հնարավոր է դիմակայել միայն այն դեպքում, եթե Հայաստանի շուրջը համախմբվեն Մերձավոր Արևելքի այն բոլոր ժողովուրդները, որոնք հայերի պես ձգտում էին պահպանել իրենց անկախու-

թյունը Հոռմից: Պարթևներին հյուսիսային Միջագետքից դուրս մղելուց հետո Հայաստանը Եփրատի միջին հոսանքում իրեն հարևան ունեցավ հելլենիստական Սիրիային:

Սիրիան երբեմնի Սելևկյան աշխարհակալության կենտրոնը, Արևելյան Միջերկրածովքի ամենահարուստ և բարգավաճ, խիտ բնակեցված երկրներից էր: Սակայն Սիրիայի մեծահարուստ և ինքնավար քաղաքները, որոնցից ամենաառաջնը ու հռչակերտը քաղաքամայր Անտիոքն էր, տառապում էին երկրի ներքին անկայուն, անհիշյալ վիճակից, առևտրական ուղիներում բեղվիմների ավազակություններից, վերջին Սելևկյան թագավորների ավերիչ և երկրի ուժերը սպառող պատակտումներից, ծովահենների ներխուժումներից: Սիրիայի հելլենիստական քաղաքներին հարկավոր էր թագավոր, որն ընդունակ լիներ ապահովելու երկրի խաղաղ ու ապահով զարգացումը և հողատեր քաղաքային բնակչության սեփականատիրական իրավունքները: Միաժամանակ սիրիացիները՝ հույները և արամեացիները երկյուղում էին Հոռմի կրակի տակ ընկնելու վտանգից: Արշակունիներին հաղթելով՝ Տիգրանը ոչ միայն վերացրեց Հայաստանի համար Պարթևստանի հարձակման վտանգը, այլև վերջ տվեց Սիրիայում պարթևական հեծելազորի մինչ այդ մշտական դարձած ասպատակություններին: Կայուն վիճակի վերստեղծման հույսերը Սիրիայի քաղաքները կապեցին Տիգրանի հետ:

Ք.ա. 83 թ. գարնանը Սիրիայի քաղաքների բնակչության ներկայացուցիչները՝ Սիրիայի «Ժողովուրդը» /populus-ը/, գումարվեց վարկաբեկված Սելևկյանների փոխարեն իր համար նոր թագավոր ընտրելու նպատակով: Սկզբնական տարակարծություններից հետո «Ժողովուրդը» Սիրիայի թագավոր միահամուռ ընտրեց

հայոց արքա Տիգրանին: Որպես Սելևյան թագավորության՝ Սիրիայի, Կիլիկիայի, Փյունիկայի օրինավոր գահակալ Տիգրանը մեծ հանդիսավորությամբ մուտք գործեց Անտիոք: Սիրիայի հելլենիստական քաղաքների հոծարական անցնելը Տիգրանի իշխանության ներքո հայոց արքայի խոշորագույն դիվանագիտական հաջողություններից էր: Միջազգային-իրավական տեսակետից «Ժողովրդի»՝ միացյալ քաղաքների հրավերով հայոց թագավորի գահակալելը Սիրիայում՝ հարկ է բնութագրել որպես ունիա՝ միապետական միավորում Հայաստանի և Սիրիայի միջև: Սիրիայում Տիգրանը կառավարում էր որպես տեղական՝ Սիրիայի թագավոր:

Հայոց արքայի իշխանության տարածվելը Արևելյան Միջերկրածովքի երկրների՝ Սիրիայի, Փյունիկիայի և Արևելյան Կիլիկիայի վրա, որոնց Հռոմը վաղուց իր տիրապետության ոլորտն էր համարում, ծանրագույն հարված էր Միջերկրածովյան աշխարհակալությունն ստեղծելու նրա ծրագրերին:

Բնակչության աջակցությունը, Տիգրանի ճկուն, հաշվեկատ քաղաքական գործելակերպը հոռոմեացիներին զրկում էին այստեղ հաստատվելու, դեպի Հայաստան և Արևելքի խորքը առաջխաղացման մատուց ստեղծելու հույսերից:

Տիգրանը Հռոմում արդեն ճանաչվել էր որպես նրա հզոր և վտանգավոր թշնամին Արևելքում: Արտացոլելով ժամանակակիցների վրա Տիգրանի գործած տպավորությունը՝ հոռոմեացի հեղինակները նրա մասին գրել են՝ «մեծագույն թագավոր», «տիրակալում էր մեծ փառքով»: Իսկ Հռոմի մեծ հոետոր և քաղաքագետ Կիկերոնը (Ք.ա. 106-43 թթ.) Տիգրանի մասին ասել էր՝ «նա ինքնին կորովալից էր» /Hic et ipse per se vehemens fuit/:

<sup>1</sup> I Cic., Pro, P.Sestio oratio, 27, 59.

Այսպիսով՝ Ք.ա. 83-ին Տիգրանն իր ձեռքում միավորեց երկու գահ, երկու թագավորություն՝ հայկական և սիրիական: Այսուհետև Տիգրանը հետամուտ էր հայոց ավագանու և Սիրիայի հելլենիստական քաղաքների վերնախավի մերձեցման բարդ խնդրին: Տիգրանը Սիրիայում արագ բարեփոխեց վիճակը. վերականգնեց առևտրական ուղիների անվտանգությունը, իջեցրեց քաղաքների հարկերը, ընդարձակեց քաղաքների ինքնակառավարման իրավունքները (քաղաքներում գործում էին բնակիչների ժողովրդական ժողովներ, որոնք համագործակցում էին թագավորի կողմից նշանակված պաշտոնյաների հետ): Քաղաքների տնտեսական, առևտրական կյանքը վերելք էր ապրում:

Տիգրանը ապահովեց իր նոր սիրիական թագավորության անվտանգությունը ծովահեններից: Լեոնային Կիլիկիայի ծովահենները այդ ժամանակ միավորվել էին և իսկական պետություն ստեղծել: Իր իշխանությանը ենթարկելով Դաշտային Կիլիկիան՝ հայոց արքան դարձավ ցամաքից ծովահենների անմիջական հարևանը և նրանց հարկադրեց իր համար ձեռնառու դաշինքի: Ծովահենները դադարեցրին հարձակումները Սիրիայի քաղաքների վրա, բայց ավելի հաճախ ու հանդուգն ձևով սկսեցին ավերել Իտալիայի և Հռոմին ենթակա երկրների ափերը:

Այսպիսով՝ Տիգրանի հաստատվելը Արևելյան Միջերկրածովքի երկրներում ծովահենային շարժմանը հաղորդեց բացարձակ հակահոռոմեական ուղղվածություն:

Մեծ տերության ստեղծման, հայ ավագանու և Սիրիայի քաղաքային վերնախավի համախմբման խնդիրները պահանջում էին հիմնադրել կառավարման նոր կենտրոն, կազմակերպել նոր արքունիք: Ծայրամասային դարձած Արտաշատը չէր համա-

պատասխանում այսպիսի պահանջներին: Ք.ա. 77 թ. Հայաստանի հարավարևմտյան 'մասում' Ադձնիքում, մեծ տերության աշխարհագրական կենտրոնում Տիգրանը հիմնականում ավարտման հասցրեց նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի շինարարությունը: Տիգրանի մտայնությամբ Տիգրանակերտը իր կառուցների փայլով, արվեստի կոթողների գեղեցկությամբ պիտի մրցակցեր արևելքի մեծաշուք մայրաքաղաքների՝ Սիրիայի Անտիոքի և Եգիպտոսի Ալեքսանդրիայի հետ: Նորաշեն քաղաքը բոլորված էր հզոր պարիսպով, որի մեջ կառուցվել էին թագավորական պահեստներ, զինանոցներ, ախոռներ: Բնակչությունը խայտաբղետ էր, բազմալեզու, գլխավորապես բերված էր Կիլիկիայի հելլենիստական քաղաքներից, Կապադովկիայից և Հյուսիսային Միջագետքից և ապրում էր առանձնակի թաղամասերով: Մայրաքաղաքի պարիսպներից դուրս՝ բլրի գագաթին, բարձրանում էր արքայական պալատը, բլրի շուրջը տարածվում թագավորական մեծ պարտեզը՝ որսատեղերով և ջրավազաններով:

Ք.ա. 69 թ. Տիգրանակերտում ավարտվեց հունական թատրոնի շենքի կառուցումը: Այստեղ արքայի հրավերով եկած հույն դերասանները պիտի ներկայացնեին հունական ողբերգուների ստեղծագործությունները:

Հայ մեծատոհմիկներից Տիգրանը պահանջում էր հաղորդակցվել հունական մշակույթին: Տիգրանը դրանով իսկ ձգտում էր մերձեցնել հայերին ու Սիրիայի հելլենիստական վերնախավին և ի վերջո ապահովել իր նորաստեղծ տերության միասնությունը: Հունական դասական ողբերգությամբ էր հափշտակված Տիգրանի որդին՝ Արտավազդը: Հետագայում գահ բարձրանալով՝ նա համատեղում էր քա-

ղաքականությունը և հունալեզու թատերագրությունը<sup>4</sup>:

Հայաստանն ու Սիրիան միավորվում էին նաև տնտեսական կապերով: 78 թ. Արևելյան Կիլիկիայից հայոց արքան ամբողջությամբ տեղահան արեց հունական քաղաքային բնակչությանը, որին իր գույքով վերաբնակեցրեց Հայաստանում: Հայաստանում հիմնադրվեցին նոր առևտրական ուղիներ, նոր քաղաքներ կառուցվեցին՝ լեցուն տնտեսապես գործունյա, աշխատասեր բնակչությամբ: Նոր քաղաքները առևտրական սերտ կապեր էին պահպանում Սիրիայի քաղաքների ու նավահանգիստների հետ: Տիգրանը մեծացրեց Հայաստանում նաև աշխատավոր, հարկատու գյուղացիության՝ անասնապահների ու երկրագործների քանակը: 78-ին նա նորից գրավեց Կապադովկիայի թագավորությունը՝ փախուստի մատնելով Հռոմի դրածո Արիոբարզանին: Կապադովկիայի գյուղացիությունն իր անասուններով ու գույքով վերաբնակեցվեց Հայաստանի անմշակ շրջաններում:

80-70-ական թթ. զբաղված լինելով Միջերկրական ծովի ափերին իր իշխանության ամրապնդմամբ՝ Տիգրանը նաև եռանդուն միջամտում էր Պարթևստանում կատարվող իրադարձություններին: Արքան չէր կասկածում, որ պարթևները ներքին ճգնաժամը հաղթահարելուց հետո կրկին կարող են դառնալ Հայաստանի վտանգավոր թշնամիներ: Պարթևստանում ճգնաժամային անիշխան վիճակը Տիգրանը խորացնում էր հետևողական, դիվանագիտական քայլերով: Դրանք մեզ ի հայտ են բերում Պարթևստանի փլուզման հստակ և ամբողջական ծրագրի գոյությունը: Տիգրանը դաշինք կնքեց Արշա-

<sup>4</sup> Արտավազդի արտաքին քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Ռ. Մանասերյան, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, «Արեգ» հրատ., 1997:



կան միջամտություն հայցեց՝ գալ իրեն օգնության: Հոռմի հաստատվելը անմիջապես Հայաստանի արևմտյան սահմաններում՝ Փոքր Հայքում և Կապադովկիայում, անընդունելի էր Տիգրանի համար: Սակայն 73-71 թթ. Սելևկյանների և նաբաթեացիների ելույթի, Հայաստանում՝ Ջարեհի ապստամբության պայմաններում Տիգրանը հարկադրված էր չեզոք դիրք գրավել հռոմեա-պոնտական պատերազմի նկատմամբ: Պատերազմ սկսել Հոռմի դեմ, և Պոնտոսից դուրս մղել հռոմեացիներին, հնարավոր էր միայն Սելևկյանների բարձրացրած ապստամբությունը ճնշելուց, տերության ներքին վիճակը կայունացնելուց հետո: Այդ պահին իր գործերը Սիրիայից դուրս բերելը և նրանց Պոնտոս ուղարկելը կնշանակեր Սելևկյանների, իսկ իրականում՝ Հոռմի առջև բացել Սիրիայում իշխելու ճանապարհը, կհանգեցներ մեծ տերության անհապաղ փլուզման: Տիգրանի տերության վերը ներկայացված ներքաղաքական իրավիճակը անտեսվել էր պատմական երկերում, որոնց մեջ 73-71 թթ. հռոմեա-պոնտական պատերազմի հարցում հայոց արքայի դիրքորոշման վերաբերյալ արտահայտվել են սխալ մեկնաբանություններ<sup>6</sup>:

Ք.ա. 71 թ. ամռանը Միհրդատը, վերջնականապես պարտվելով, փախավ Հայաստան: Տիգրանը նրան ընդունեց արքայավայել՝ պատիվներ մատուցելով հատուկ հատկացրած նստավայրում: Հոռմը շուտով պահանջ ներկայացրեց Տիգրանին՝ հանձնել հռոմեացիների երդվյալ թշնամուն՝ Պոնտոսի թագավորին. Տիգրանը մերժեց Հոռմի պահանջը: Սելևկյանների ելույթը ջախջախելուց հետո հայոց արքան մտադիր էր հռոմեացիներից ազատագրել Փոքր Ասիան և վերականգնել Պոնտոսի թագավորությունը:

<sup>6</sup> Օրինակ՝ Հ. Մանանդյան, Տիգրան II-ը և Հոռմը, Երևան, 1940 (1972), էջ 110-111:

Մերժում ստանալուց հետո Լուկուլլոսը Տիգրանի պես չէր կարող իսկույն պատերազմ սկսել: Նա կաշկանդված էր Պոնտոսում՝ պաշարելով Միհրդատին հավատարիմ մնացած սևծովյան հզոր քաղաքները: Հետևաբար՝ Տիգրանը պիտի կայունացներ վիճակը իր տերության մեջ ավելի արագ, քան հռոմեացիները հասցնեին կոտրել Պոնտոսում առափնյա քաղաքների դիմադրությունը, և այնուհետև դիմադրավեր Հոռմին:

Ք.ա. 71 թ. Սելևկյանները, չնայած նաբաթեացիների և Հուդայի պատերազմից դուրս գալուն, զգալի հաջողության հասան հյուսիսային Սիրիայում: Այնտեղ նրանք Տիգրանի դեմ ապստամբության հանցին Սելևկիա Պիերիա խոշոր ծովաքաղաքը: Դա հատկապես վտանգավոր էր, որովհետև Սելևկյան գտնվում էր Սիրիայի մայրաքաղաքի՝ Անտիոքի մոտակայքում: Հոռմի սադրանքով ապստամբություն բարձրացվեց նաև Կորդուքում, իսկ հարավում Կլեոպատրա-Սելենեն վստահորեն ապավինում էր Պտղոմայիսի անառիկ ամբողջություններին:

Հարավ-փյունիկյան ռազմաբեմը և Սիրիան շարունակում էին Տիգրանից պահանջել ուժերի մեծ լարում:

Հայկական զորամասերը գրավեցին պարիսպների չորս շարքով բոլորած Պինական՝ Կորդուքի մայրաքաղաքը, Կորդվաց արքա Ջարբինոսը սպանվեց Տիգրանի հրամանով:

71 թ. աշնանից մինչև 69 թ. գարուն՝ մեկուկես տարվա ընթացքում իրար հետևից Տիգրանը կոտրեց Փյունիկիայի հարավի մեծ ծովաքաղաքների դիմադրությունը: Պտղոմայիսը ընկավ համառ պայքարից հետո, գերված Կլեոպատրա Սելենեն մահապատժի ենթարկվեց: Սելևկյանների ելույթը ջախջախված էր: Հոռմի գործակալ Անտիոքոսը փախավ հռոմեացիների մոտ: Միայն հյուսիսում Սելևկիա ծովաքաղաքը՝

ցամաքից և ծովից հայկական զորքերով շրջափակված, շարունակում էր իր ըմբոստությունը: Բայց նրա ապագայի լուծումը արքան որոշեց թողնել Հոռմի դեմ պատերազմի ավարտին:

Նա վճռեց անհապաղ շարժվել Լուկուլլոսի դեմ, հռոմեացիները կարողացել էին կես տարով շուտ հպատակեցնել Պոնտոսի քաղաքները, և այժմ մեծ ուժեր էին ժողովվում Փոքր Ասիայի արևմուտքում:

Փյունիկյան իր բանակատեղում Տիգրանը տեսակցեց Միհրդատի հետ: Պոնտոսի թագավորին նա ընդունեց մեծ շուքով: Առաջիկա կովի ծրագիրը քննարկվեց երեք օր: Միհրդատի տրամադրության տակ հանձնվեց 10 հազար հայկական ընտիր այրուձի: Սիրիայի հարավից Տիգրանը ելավ արշավի: Նա մտադրվում էր Ամանոսի լեռնանցքով անցնել Կիլիկիա, Կիլիկիայից դուրս գալ Լիկատոնիա՝ փոքրասիական թերակղզու հարավային շրջանը, այնտեղից վճռական գրոհով ընթանալ հռոմեական տիրույթների խորքերը՝ Եփեսոս առափնյա քաղաքի կողմերը, որտեղ նա ենթադրում էր հանդիպելու Լուկուլլոսի ուժերին: Արդեն հայտնի էր, որ Լուկուլլոսը 50000 բանակով (4 լեգեոնով, բյութանական և մակեդոնական օժանդակ զորքերով, 20000 գալաթական և թրակիական դաշնակից հեծելազորով), պատրաստվում է ուղղություն վերցնել դեպի Հայաստանի և հռոմեական ասիական տարածքների միջև կամուրջ ծառայող Կապադովկիա:

Ք.ա. 69 թ. մայիս ամսի կեսին սրընթաց գալով Հայաստանի սահման՝ Եփրատ գետը, Լուկուլլոսը այն անցավ: Հաշվված օրերում նրան հաջողվեց կանխել Տիգրանի հարձակումը: Թշնամու ներխուժման գույժը Տիգրանն ընկալեց արդեն Կիլիկիային մոտենալիս: Լուկուլլոսի բանակը առանց դիմադրության հանդիպելու սրընթաց շարժվում էր

Ծոփքի վրայով դեպի Տիգրանակերտ: Կտրականապես փոխված իրադրության մեջ Տիգրանը գործում էր արագ, վստահ, հաշվի առնելով սաստկացող վտանգի բոլոր կողմերը: Հոռմեական ներխուժումը հղի էր տերության մեջ դրության ապակայունացմամբ: Իր բանակից, որը նա հենց նոր էր առաջնորդել դեպի Փոքր Ասիա, արքան առանձնացրեց զգալի ուժեր՝ Սիրիայում և Փյունիկիայում իր տիրապետությունը ապահովելու համար: Բանակի հրամանատարությունը հանձնարարվեց Բագադատին, նրան հրամայվեց Սելևկիայի պաշարումը շարունակել:

Նրա մյուս կարգադրությունները վերաբերում էին իր մայրաքաղաքի պաշտպանությանը: Ծոփքում տեղաբաշխված զորքերի հրամանատար Միհրաբարզանին հրամայվեց ինչ գնով էլ լինի զսպել թշնամու առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ: Իսկ Միհրդատի ձեռքից առնելով 10.000 ընտիր հեծելազունը՝ Տիգրանը ուղարկեց այն Տիգրանակերտ՝ էվակուացնելու արքունիքն ու գանձարանը: Իր փոքրացած ուժերով Տիգրանը նետվեց դեպի Հայաստան՝ դեպի Տավրոսի լեռները, որտեղ մտադրվեց միավորել իր տերության ամբողջ ռազմական ուժերը՝ իր հպատակ թագավորների զորքերը, և դրանով իսկ թվական գերազանցության հասնել հակառակորդի նկատմամբ: Այդ որոշման մեջ առկա էր նաև քաղաքական հաշվարկը՝ կասեցնել մեծագույն վտանգի պահին հպատակ արքաների ձեռնպահ մնալը և ապահովել նրանց վրա իր վերահսկողությունը: Լուկուլլոսը այդ ժամանակ հասավ լուրջ հաջողությունների. նա համառ մարտում ոչնչացրեց Միհրաբարզանի զորքերին (մարտում առաջին շարքում կովելով ընկավ Միհրաբարզանը) և արդեն անխոչընդոտ հասավ Տիգրանակերտի դարպասներին, հռոմեացիները պաշարեցին Տիգրանա-



և թույլ տվեց նրան անխոչընդոտ դուրս գալ Հայաստանից: Արքան հեռուն էր տեսնում: Նա հաշվի առավ, որ միջազգային ասպարեզում ուժերի դասավորությունը դառնում է ի վնաս Հայաստանի, Սիրիայի հարուստ քաղաքները այս անգամ անցել են Հոմսի կողմը, Հոմսի կողմն են հակվել նաև Միջագետքի՝ Ադիաբենների և Օսրոյենների թագավորները: Իսկ Հոմսը, չհաշտվելով պարտության հետ, առավել մեծ ուժեր է պատրաստում Հայաստանի և Պոնտոսի դեմ ուղարկելու համար: Տիգրանը հարկ համարեց հաշտություն կնքել Հոմսի հետ և դրանով իսկ խուսափել կորստաբեր բախումից՝ Հոմսի նշանավոր զորավար Գնենու Պոմպեոսի 100000-անոց բանակի հետ: 67 թ-ի գարնան վերջերին Պոմպեոսը ջախջախեց Կիլիկիայի ծովահեններին և իր ուժերը կենտրոնացրեց Կիլիկիայում: Բնականաբար, Լուկուլլոսի զորքերի լիակատար ջախջախման դեպքում Տիգրանն իր համար կփակեր Հոմսի հետ հաշտության գալու որևէ հնարավորություն: Տիգրանի այս հեռատես, կշռադատված դիրքորոշումը նրա մերձավորներից ոչ բոլորն ընդունեցին: Գահաժառանգ Տիգրան կրտսերը՝ խոովահույզ և անկայուն խառնվածքի տեր մի երիտասարդ, և նրան աջակից դարձած Միհրդատ Եվպատորը պատերազմի շարունակման կողմնակից էին:

Տիգրանն իր զորքով կանգնած էր Ծոփքում՝ Եփրատի ափին, երբ նրա թիկունքում բռնկվեց որդու ապստամբությունը: Սկսված պատերազմում Տիգրանը ջախջախեց դավաճան արքայազնի ուժերը: Սակայն Հայաստանի ռազմաքաղաքական պառակտումը օգտագործեց հակառակորդը: Կիլիկիայից Պոմպեոսը ռազմական դաշինքի առաջարկով դեսպաններ ուղարկեց պարթևների մոտ՝ հրավիրելով նրանց առաջիկա պատերազմում հարձակվել Հայաստանի վրա արևելքից: Այսպիսով՝ դեռևս 92 թ. Հայաստանի դեմ

Հոմսի և Պարթևստանի միջև քննարկված ռազմական դաշինքի ծրագիրը 67 թ. վերածվեց սպառնալից իրականության:

Հոմեա-հայկական պատերազմի տարիներին օգտվելով ստեղծված իրադրությունից պարթևները գրեթե ամբողջությամբ կարողացան վերականգնել իրենց միասնությունն ու հզորությունը: Պարթևստանի թագավոր Հրահատ 3-րդը (70-58 թթ.) երազում էր այժմ Միջագետքի և Ատրպատականի վերագրավման, նաև Հայաստանի դեմ հաղթական պատերազմի մասին:

Հայաստանի դեմ պարթևների ծրագրերի իրագործմանը մեծապես նպաստեց դավաճան արքայազնը: Պարտությունից հետո նա փրկվեց՝ գալով պարթևների մոտ: Տիգրան կրտսերը անձամբ համոզեց Հրահատին ընդունելու Պոմպեոսի առաջարկը և արշավելու Հայաստան: 66 թ. գարնանը Պոմպեոսն ու Հրահատը անցան հարձակման: Հոմեացիները ներխուժեցին Պոնտոս և Փոքր Հայքում խորտակիչ պարտության մատնեցին Միհրդատին, իսկ պարթևների մեծաթիվ հեծելազորը Հրահատի և Տիգրան կրտսերի առաջնորդությամբ գրավեց Հյուսիսային Միջագետքն ու Ատրպատականը և ներխուժեց Արարատյան դաշտ՝ հասնելով մինչև Արտաշատի պարիսպները: Տիգրանը հասցրեց նահանջել պարթևների համար դժվարամատչելի լեռներ: Ներքին պատերազմից թուլացած Հայաստանի առջև ծառայող երկու ճակատով անհավասար ու կորստաբեր պատերազմ մղելու հեռանկարը: Մի թշնամական բանակ՝ Հրահատի 50000-անոց հեծելազորը, ասպատակում էր Արարատյան դաշտը և պաշարում Արտաշատը, իսկ մյուսը՝ Պոմպեոսի տասը լեգեոնը և օժանդակ ուժերը, պատրաստվում էին նույնպես ներխուժել և հայոց մայրաքաղաքի մոտ միանալ պարթևներին:

Այդ ճգնաժամային իրադրության մեջ

75 տարեկան Տիգրանը գործում էր սրընթաց, իր հակառակորդների համար անկանխատեսելիորեն: Նրան հաջողվեց կանխել նրանց: Հանկարծակի հարձակմամբ արքան ջարդեց Արտաշատը պաշարող պարթևներին: Պարթևական զորքերը դուրս քշվեցին Հայաստանից: Իսկույն ևեթ, արդեն որպես Հոմսի դաշնակիցների՝ պարթևների հաղթող և իր պետության լիիշխան տիրակալ Տիգրանը հաշտության բանակցություններ առաջարկեց Պոմպեոսին և միաժամանակ խզեց իր դաշինքը Միհրդատի հետ, որը Պոմպեոսից ջախջախվելուց հետո իր զորքերի մնացորդներով մտադիր էր անցնել Հայաստան: Իր աներոջ գլխի համար Տիգրանը մեծ գումար նշանակեց: Փոքր Հայքում սկսվեցին նախնական բանակցությունները Պոմպեոսի հետ: Հայոց արքան իր դեսպանների միջոցով համոզեց Պոմպեոսին, որ արևելյան Միջերկրածովքի երկրների տիրակալ դարձած Հոմսի համար ավելի վտանգավոր են հզորացած պարթևները, քան իր բնական սահմանների մեջ ամփոփված Հայաստանը: Պոմպեոսը համաձայնվեց Հայաստանի դեմ պատերազմական գործողություններ չսկսել: Հոմեական լեգեոնները, արդեն նախնական զինադադարի համաձայն, առանց դիմադրության հանդիպելու մոտեցան Արտաշատին, որտեղ և կնքվեց վերջնական հաշտությունը:

Արտաշատի համաձայնությամբ Հոմսը Տիգրանին ճանաչեց Հայաստանի թագավոր, նաև իր բարեկամ ու դաշնակից: Դրանով իսկ վերացվեց Հայաստանի դեմ ուղղված հոմեա-պարթևական ռազմական դաշինքը: Հոմսը ճանաչեց Հայաստանի տարածքային ամբողջականությունը՝ հայ ժողովրդի բնակության գլխավոր սահմաններում՝ Եփրատից մինչև Կուր գետը և Կասպից ծովը: Անձեռնմխելի մնացին Արտաշեսյանների գահաժառանգները, Պոմպեոսին մուծված տուրքի գումարը

Տիգրանը փակեց Ծոփքի արքաների գահաժառանգների հաշվին: Հայաստանը լիովին պահպանեց իր ռազմական ուժերը: Հաշտությունը Պարթևստանի դեմ ուղղված դաշինքի բնույթ ստացավ:

Այս ակնառու քաղաքական ձեռքբերումները ունեցել են մի յուրահատուկ նախապայման: Պոմպեոսը ուղարկվել էր Արևելք՝ Հայաստանի դեմ վճռական հաղթանակ տանելու նպատակով: Նա միշտ հաղթել էր իր մղած բոլոր պատերազմներում և Հայաստանին հաղթելուց հրաժարվելով՝ նրան խիստ անհրաժեշտ էր հաղթությանը փոխարինող, իր զորավարական փառասիրությունը բավարարող, Տիգրանի պարտությանը հավասարազոր մի գործողություն, որը Հայաստանը գրանցել թույլ կտար պատերազմում պարտված պետությունների շարքում: Ձեռք բերված համաձայնությամբ Տիգրանը հանդիսավոր հանդերձանքով, երիվար հեծած մեծակ եկավ Պոմպեոսի բանակատեղը և, երիվարից իջնելով, հրապարակորեն խոնարհվեց Պոմպեոսի առջև: Նախկինում Արևելքի հզոր տիրակալը՝ հաստատական ու անվեհեր զորականը, իր ինքնասիրությունն ու հպարտությունը զոհաբերեց հայրենիքի փրկության շահին, երկու ճակատով պատերազմի կանխման նպատակին: Դա թերևս Տիգրանի ամենամեծ սխրանքն էր:

Հոմսի հետ հաշտություն կնքելուց հետո հայոց արքան երբեք չէր կասկածում Հոմսի ապագա նվաճողական նկրտումների վրա: Հոմեացիներին նա շարունակում էր համարել Հայաստանի գլխավոր թշնամին: Ք.ա. 64 թ. Տիգրանը գաղտնի հաշտություն կնքեց պարթևների հետ, որը պատմական մեծ նշանակություն ունեցավ: Տիգրանը և Հրահատը որոշեցին վերջ դնել գրեթե կես դար տևած հայ-պարթևական հակամարտությանը: Նրանց հասկանալի էր, որ իրենցից մեկի

Ակատմամբ մյուսի հաղթանակը միայն կնպաստի հաղթողի հպատակեցմանը Հռոմին: Կողմերը գիտակցեցին իրենց փոխկախվածությունը Հռոմի առաջխաղացմանը դիմագրավելու գործում: Այսպիսով՝ Տիգրանը ուրվագծեց Հայաստանի քաղաքական գործելակերպը նոր միջազգային իրադրության մեջ, երբ Մերձավոր Արևելքը, չնայած իր քսանհինգամյա (93-69 թթ.) պայքարին, բաժանվեց Հռոմի և Պարթևական Իրանի միջև: Տիգրանը որոշեց վարել դիմակայող տերություններից միակ գործել կողմին՝ Պարթևական Իրանին աջակցելու քաղաքականություն այն գիտակցմամբ, որ ռազմաքաղաքական հավասարակշռության խախտումը Հռոմի կողմից հղի է ծանր հետևանքներով Հայաստանի անկախության համար: Հիմք դրվեց ապագա՝ Ք.ա. 64-մ.թ. 228թ. Հռոմի դեմ ուղղված հայ-պարթևական ռազմաքաղաքական համագործակցությանը:

Տիգրանը մահացավ 55 թ. վերջին 85 տարեկան հասակում:

Թեպետև Հռոմն ու Պարթևստանը հաստատեցին իրենց տիրապետությունը Մերձավոր Արևելքում, նրա գործունեության ավարտը բնավ պարտություն չէր նշանակում: 69-66 թթ. Հռոմն ու նրան դաշնակցած Պարթևստանը ձգտում էին առավելագույնին՝ Հայաստանի ջախջախմանը և վերացմանը՝ որպես պետություն: Տիգրան Մեծի գլխավորությամբ Հայաստանը հաղթանակ տարավ 69-67 թթ. Հռոմի դեմ ազգային պաշտպանական պատերազմում: Արքայի հմուտ և նկուն դիվանագիտության շնորհիվ Հայաստանը խուսափեց երկու ճակատով կորստաբեր պատերազմից և պահպանեց իր անկախությունն ու տարածքային ամբողջականությունը՝ Եփրատից մինչև Կուր և Կասպից ծով:

Տիգրան Մեծը անշուշտ հայոց պատմության մեծագույն և հերոսական դեմքերից է: Նրա գործունեությունը կազմեց կարևորագույն փուլ ոչ միայն Հայաստանի, այլև Արևելքի պատմության մեջ:

## TIGRANES THE GREAT

RUBEN MANASERYAN

### SUMMARY

The article presents a short overview of foreign policy of Armenian King Tigranes the Great (96-55 B. C.).

Tigranes's activity is being considered in the large context of international relations in Near East. Armenian king's main concern was to prevent the establishment of Roman and Parthian domination over Near East, around Armenia. He tried to realise these aims through unifying Armenia and Hellenistic Syria in an empire (the monarchic union in 83 B. C.). The hellenistic cities became the immediate stronghold of Tigranes' power in Syria.

Tigranes' greatness lay in the successful resistance to the Roman and Parthian invasions (69-66 B.C.) and in the preservation of independence and territorial entity of Armenia.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն

Մ Ե Ռ Ո Պ Ի Կ Ա

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ» ԹԵՄԱՅԻ ՌԻՍՈՒՅՈՒՄԸ  
ԳԳ հանրակրթական դպրոցի VII դասարանում

ՎԱԼԵՐԻ ՂԵՉՅԱՆ

Նկատի ունենալով, որ նոր և նորագույն պատմության VII-VIII դասարանների ուսուցիչներին հասցեագրված մեթոդական ձեռնարկը\* խիստ համառոտ է, նպատակահարմար ենք գտնում «Պատմություն» հանդեսի էջերում հրատարակել մեթոդական ավելի հիմնավոր և ընդարձակ ցուցումներ առանձին թեմաների մասին: Ցանկալի է, որ ուսուցիչները ևս արձագանքեն և դասագրքերի հեղինակներին հուշեն իրենց դժվարությունների մասին:

VII դասարանում նոր պատմության ուսուցման առաջին թեման ունի «Համաշխարհային պատմության նոր ժամանակները» խորագիրը: Այս թեման, ինչպես նաև «Պատմական զարգացման առանձնահատկությունները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին» թեման, առանցքային նշանակություն ունեն և կարելի է համարել ողջ դասընթացի ուսուցման համակարգի անկյունաքարը: Այն ունի ներածական պարամունքների բնույթ, և հենց դրանց ուսուցման հաջողությունից է կախված մնացած թեմաների տեսական յուրացումը և իմաստավորումը: Դա նշանակում է, որ ողջ դասընթացի ուսուցման ընթացքում ուսուցիչը պետք է հանդես բերի հետևողականություն և մատնանշված պատմական օրինաչափությունները ցույց տա առանձին երկրների պատմության օրինակով: Դասագիրքը հիմնականում տալիս է այդ հնարավորությունը:

Ծրագիրը հանձնարարում է այս թեմայի ուսուցումը կատարել երեք դասերի ընթացքում, որը բավարար է թվում աշակերտներին թե՛ փաստական, թե՛ տեսական մախնական գիտելիքներ տալու տեսակետից: Մեկ այլ տարբերակով նյութն ըստ դասերի կարելի է բաժանել հետևյալ կերպ.

\* Վ. Ղեչյան, Ա. Գյուլբուդաղյան, Ա. Նազարյան, Նոր և նորագույն պատմություն, VII-VIII դասարաններ, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, «Զանգակ 97», 2001թ., 64 էջ:

- Դաս 1. Ներածություն:
- Դաս 2. Աշխարհը նոր ժամանակների սկզբին:
- Դաս 3. Կապիտալիստական հասարակարգի ձևավորումը XVII-XIX դարերում:
- Դաս 4. Կյանքը նոր ժամանակներում:

Այսինքն՝ ուսուցիչը կարող է երեքի փոխարեն չորս ժամ հատկացնել այս նյութին՝ նկատի ունենալով, որ այն կարևոր է ողջ դասընթացի յուրացման համար: Ժամանակ խնայելու, ինչպես նաև ամբողջական պատկերացում կազմելու համար նպատակահարմար է ներածական դասը կազմակերպել հայոց պատմության հետ համատեղ:

**Ներածական դաս**

Այս դասի հիմնական խնդիրն է՝ աշակերտների մեջ առաջացնել սեր ու հետաքրքրություն դեպի պատմությունը: Այդ նպատակով պետք է վերհիշել և իմաստավորել նախորդ դասարաններում սովորած մարդկային հասարակության ձեռք բերած արժեքները, հիմնավորել հետագա դասերում մարդկության քաղաքակրթական նվաճումների իմացության անհրաժեշտությունը և արդիական նշանակությունը: Պետք է նկատի ունենալ, որ ներածական պարապմունքի հաջողությունը մեծ նշանակություն ունի ողջ ուսումնական տարվա համար, և նրա բովանդակությունը և մեթոդը շատ բանով կախված են ուսուցչի մեթոդական ունակությունից և գիտելիքներից: Ցանկալի է, որ այս դասն ուսուցիչն անցկացնի ուշագրավ գրույցի ձևով:

**Ներածական դասի գլխավոր հասկացությունները:** Պատմություն, մարդկային հասարակություն, երկիր, հասարակարգ, հասարակական զարգացում, մշակույթ, քաղաքակրթություն, տնտեսություն, սոցիալական հարաբերություններ՝ դասեր, դասակարգեր, ազգ (ժողովուրդ), պետություն, հին աշխարհ, միջին դարեր, ստրկություն, ավատատիրություն (ֆեոդալիզմ), կրոն, հեթանոսություն, քրիստոնեություն, մահմեդականություն (իսլամ), բուդդայականություն:

**Ուսուցման պարագաները** պետք է լինեն՝ քարտեզներ՝ աշխարհը XVII դարի կեսին, ժամանակակից աշխարհի քաղաքական քարտեզը (երկուսն էլ պատի), աշխարհը XVII-XVIII դարերում (դասագրքի առաջին էջի քարտեզը), «Նոր պատմություն» աշխատանքային տետրը 7-րդ դասարանցիների համար: Պատից պետք է կախված լինի «Մարդկության հասարակական զարգացման գլխավոր փուլերը» գծագիրը՝ դասագրքում եղածի նմանությամբ:

**Դասի անցկացման համար առաջարկվում է հետևյալ պլանը.**

1. Ի՞նչ է պատմությունը: Ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ հայ և մյուս ժողովուրդների պատմությունը:
2. Ի՞նչ ենք սովորել հայոց և համաշխարհային պատմությունից 5-6-րդ դասարաններում:
3. Ի՞նչ ենք սովորելու հայոց և համաշխարհային պատմությունից 7-րդ դասարանում:
4. Յոթերորդ դասարանի «Նոր պատմություն» և «Հայոց պատմություն» դասագրքերը: Ուսուցիչը կարող է այս պլանը մասնակի փոփոխության ենթարկել՝ նկատի ունենալով, որ ներածական դասը վերաբերում է նաև «Հայոց պատմության» դասընթացին:

1. Ուսուցիչն իր գրույցը սկսում է՝ դիմելով դասարանին, թե ինչ է ուսումնասիրում պատմությունը: Ուսուցչի օգնությամբ աշակերտներն ասում են, որ պատմությունը գիտություն է: Այն ուսումնասիրում է մարդկային հասարակության զարգացումը, առաջացումը, այդ գործընթացի էությունն ու առանձնահատկությունները: Կա համաշխարհային պատմություն, որն ընդգրկում է երկրագնդի բոլոր ազգերը և երկրներն ամբողջության մեջ վերցրած: Կա ընդհանուր պատմություն, որն առավելապես հասկացվում է որպես համաշխարհային պատմության առավել կարևոր և հանգուցային պահերը, որոնք մեծ դեր են խաղացել մարդկության ճակատագրում: Կա նաև պատմություն առանձին ազգերի, երկրների տարածաշրջանների, ինչպես նաև առանձնահատուկ երևույթների և իրադարձությունների:

Այնուհետև ուսուցիչը սահուն անցում է կատարում դեպի պատմության իմացության և իմաստավորման անհրաժեշտությունը: Ի՞նչ կտա մարդուն հայրենական և ընդհանուր պատմության իմացությունը: Ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արտահայտվելու, կատարելու դատողություններ և ապա կատարում ամփոփում: Նա շեշտում է, որ մարդը չի կարող լինել կրթված և գրագետ, առանց որոշակի պատմական գիտելիքների: Մարդը հասարակության մի մասնիկն է, ուստի և պետք է գիտելիքներ ունենա նրա զարգացման օրինաչափությունների մասին: Պատմությունը ժողովրդի հիշողությունն է. չգիտես անցյալը, չես կարող հասկանալ ներկան ու ապագան: Պատմություն չիմացողը նման է մոլորյալի, որը չգիտի, թե դեպի ուր է գնում ինքը, իր տոհմը, ազգը, երկիրը: Այսպիսով՝ պատմությունը դաս է անցյալի մասին՝ ներկայի համար:

Այնուհետև ուսուցիչը գրույցը տանում է այնպես, որպեսզի բացահայտի հայ և համաշխարհային պատմության առնչությունների, համամարդկային գործընթացներում սեփական ժողովրդի տեղի և դերի իմացության անհրաժեշտությունը: Աշակերտներին հարց է տրվում. հնարավո՞ր է արդյոք որևէ ազգի և երկրի մեկուսի գոյությունն աշխարհում: Ի՞նչ տխուր և աղետալի հետևանքներ է ունեցել առանձին ազգերի, երկրների և տարածաշրջանների մեկուսացումը համաշխարհային գործընթացից: Զրույցից երեխաները հասկանում են, որ ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում հարևան և հեռու երկրներում տեղի ունեցածի մասին գիտելիքներն օգնում են մարդուն, ազգին և երկրին ճիշտ ապրելու, կողմնորոշվելու ժամանակակից բարդ աշխարհում: Ավելի հանգամանորեն սովորելով հայոց պատմությունը, այլ ժողովուրդների պատմական անցյալից վերցնելով ուսանելի և արժեքավորը՝ դյուրին է դառնում մեր երկրի ներկա և ապագա կյանքի կերտումը, ինչին ձգտում է մեր ժողովուրդն այսօր:

2. Ներածական պարապմունքի տրամաբանական շարունակման համար աշակերտներն ուսուցչի օգնությամբ ուսումնասիրում են «Մարդկության հասարակական զարգացման գլխավոր փուլերը» գծագիրը: Նախ՝ դասագրքում բերվածի հիման վրա ճշտում են համաշխարհային պատմության ժամանակագրական շրջանակները: Այնուհետև՝ հարց ու պատասխանի միջոցով վերհիշում են նախնադարին բնորոշ մարդկանց ապրելակերպի գծերը, պետության առաջացումը, Հին Արևելքի, Հին Հունաստանի և Հին Հռոմի՝ անտիկ քաղաքակրթության առավել մեծ նվաճումները: Աշակերտները մատնանշում են հոտ - տոհմ - ցեղ - ժողովուրդ զարգացումը, մետաղի գյուտի հետևանքները, պետության և կրոնի դերը, ստրկության երևույթը, հունական պոլիսային քաղաքակրթության հասարակական և մշակութային արժեքները, հանրապետական և կայսերական Հռոմի անցած մեծ ուղին: Ուսուցիչը ուղղություն է տալիս աշակերտների մտածողության ընթացքին և անդրադառնում, թե ինչ մեծ ձեռքբերումներ եղան նույն ժամա-

նակաշրջանում Հայկական լեռնաշխարհում: Աշակերտները պետք է բերված օրինակներով կրկին համոզվեն, որ հին հայերի քաղաքակրթական նվաճումները (պետության ստեղծումը, երկաթի հայտնագործությունը և տնտեսության զարգացումը, քաղաքները, գիրը, կրոնական արժեքները, նյութական մշակույթը և այլն) հանդիսանում են հնագույն և անտիկ ժամանակներում մարդկության ձեռք բերած արժեքների մի զգալի մասը:

Համաշխարհային պատմության միջնադարյան ժամանակաշրջանի մասին խոսելիս զրույցը կազմակերպվում է նույն եղանակով: Աշակերտները վերհիշում են ավատատիրական հասարակության բնորոշ կողմերը, քրիստոնեական և մահմեդական աշխարհի առաջացումը, նրանց բախումները, բյուզանդական և արաբական մշակութային արժեքները, նոր արժեքների ստեղծումը Չինաստանում (թղթադրամ, տպագրություն, վառող, թնդանոթ, կողմնացույց), Հնդկաստանում (ճարտարապետություն և քանդակագործություն, հնդուիզմ): Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը հրավիրում է միջնադարյան քրիստոնեական աշխարհի ճգնաժամի և պառակտումների վրա, հիշեցնում Վերածննդի, Ռեֆորմացիայի, հումանիզմի արժեքների մասին, բացատրում նոր աշխարհընկալումը, աշխարհագրական հայտնագործությունները: Հենց այս հենքի վրա էլ նա հիմնավորում է նոր Եվրոպայի ծնունդը:

Վերհիշելով հայոց միջնադարյան պատմության ամենաէական պահերը՝ ուսուցիչն օգնում է աշակերտներին համոզվելու, որ դրանք սերտորեն շաղկապված են համաշխարհային պատմության զարգացումների հետ: Այդպիսիք են հայոց քրիստոնեական մշակույթի սկզբնավորումը և զարգացումը, առնչությունները Բյուզանդիայի և բախումները Արաբական խալիֆայության հետ, Բագրատունյաց հարստությունը, Կիլիկյան Հայաստանի առաջացումը, IX-XIV դարերի հարուստ մշակույթը և որպես քաղաքակրթությունների ճակատագրական բախման հետևանք՝ Հայաստանի անկումն ու միջնադարում:

3. Երբ աշակերտներն ի մի են բերում նախորդ դասարաններում ձեռք բերած գիտելիքները, և ընդհանուր պատկերացումն ամբողջական է դառնում, ինքնաբերաբար հարց է առաջանում. ի՞նչ ընթացք ունեցավ մարդկության հետագա պատմությունը: Ուսուցիչը, հիշեցնելով նոր Եվրոպայի ծնունդը, մատնանշում է, որ հետագա դարերում այնտեղ ձևավորվում է մի նոր հասարակություն, որն ընդունված է անվանել ինդուստրիալ քաղաքակրթություն: Նոր պատմությունն ինդուստրիալ քաղաքակրթության ձևավորման և զարգացման պատմությունն է: Հենց այդ պահին ուսուցիչը հանձնարարում է աշակերտներից մեկին կարդալ «Նոր պատմություն» և «Հայոց պատմություն» դասագրքերի առաջին էջերում զետեղված խոսքերը՝ հասցեագրված յոթերորդ դասարանցիներին, որը, անշուշտ, կշոյի երեխաների ինքնասիրությունը: Ցանկալի է, որ այն ընթերցեն աշակերտներից նրանք, ովքեր կարող են զեղեցիկ և արտահայտիչ կարդալ: Ուսուցիչը մեկնաբանում է դրանց բովանդակությունը և ընդգծում, որ արդի աշխարհում մարդկային հասարակությունը կառուցված է ինդուստրիալ քաղաքակրթության նվաճումների հիմքի վրա: Հետևաբար՝ առանց այդ արժեքների պատմության իմացության անհնար է լինել կրթված, բանիմաց և գործարար մարդ:

Մատնանշելով նոր պատմության ժամանակագրական շրջանակները՝ ուսուցիչը շեշտում է, որ Հայաստանը և հայ ժողովուրդն այդ հարյուրամյակներում ունեցել են երկու գերխնդիր: Առաջինը՝ ազատագրումն է օտար տիրապետությունից և կորսված պետականության վերականգնումը: Դրա համար նա մշտապես պայքարել է՝ դաշնակիցներ փնտրելով մեկ Եվրոպայում, մեկ էլ հյուսիսում՝ ի դեմս հզորացող Ռուսական կայսրու-

թյան: Երկրորդը՝ մասնատված, օտարի լծի տակ գտնվող մեր երկիրը և ժողովուրդը ձգտում էր հասնել դառնալ, յուրացնել արևմտյան քաղաքակրթական արժեքները: Աշակերտների մեջ սերմանվում է այն միտքը, որ չնայած ծանր կացությանը՝ մեր ժողովուրդը ստեղծել է քաղաքակրթական այնպիսի արժեքներ, որով կարող է հպարտանալ ցանկացած ազգ և ժողովուրդ:

4. Դասի մնացած մասում ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է 7-րդ դասարանի «Նոր պատմություն» և «Հայոց պատմություն» պաշտոնապես հանձնարարվող դասագրքերին: Նրանց փոխարեն հին և կամ այլ դասագրքերի օգտագործումը մերժելի է և վնասակար: Աշակերտները ծանոթանում են դասագրքերի կառուցվածքին, նրանց համար ընթերցվում են բաժինների և գլուխների խորագրերը: Հանձնարարություններ են տրվում դասագրքերի հետ վարվելու և դասերը սովորելու կանոնների մասին: «Նոր պատմություն» դասագրքի մասին խոսելիս նշվում է, որ բառերը և հասկացությունները բացատրված են թե՛ դասում և թե՛ դասագրքի վերջում բերված բառացանկում: Քարտեզները, փաստաթղթերը և նկարները մեծ մասամբ բացատրված են և պարզաբանված: Տերմինները բացատրված են հակիրճ և միայն այն իմաստով, ինչ դրանք ունեն դասագրքում: Ամփոփումները և ժամանակագրությունը տրված են ըստ բաժինների: Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս բոլոր այն երկրները, որոնց պատմությունը պետք է սովորեն սկսվող ուսումնական տարում: Վերհիշելով Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ աշակերտների ուշադրությունը հրավիրվում է այն երկրների վրա, որոնք նոր ժամանակներում ձեռք բերեցին մեծ նվաճումներ և մյուսների համեմատությամբ հզորացան:

**Դաս 1. Աշխարհը նոր ժամանակների սկզբին:**

Դասագրքի նյութի հիման վրա աշակերտները իմաստավորում են «Նոր պատմություն» հասկացությունը, բացահայտում Եվրոպայում հասարակական զարգացման գլխավոր արդյունքները XVI դարում, ինչպես նաև քաղաքական կարգերը նոր ժամանակների սկզբին: Դասի առանցքային խնդիրն է վեր հանել Եվրոպայի զարգացման մակարդակը XVI դարում, քանի որ հենց այնտեղ ձևավորվեց նոր՝ ինդուստրիալ քաղաքակրթությունը: Այս դասի յուրացումը կօգնի հեշտ հասկանալու նրա ձևավորման ընթացքը հետագա հարյուրամյակներում:

- Դասի ուսուցումը կարելի է կազմակերպել հետևյալ հաջորդականությամբ.
  - ա) Համաշխարհային պատմության երեք մեծ փուլերը.
  - բ) Նոր պատմության գլխավոր բովանդակությունը.
  - գ) XVI դարի զարգացման արդյունքները որպես նոր քաղաքակրթության ձևավորման սկիզբ.
  - դ) Քաղաքական կարգերը:

**Գլխավոր գաղափարները և հասկացությունները:** Համաշխարհային պատմության մեծ փուլեր, նոր պատմություն, ապրանքային արտադրություն, աշխատանքի արտադրողականություն, մանուֆակտուրա, բուրժուազիա, բանվոր, դրամ, շուկա, բիրժա (բորսա), մակլեր, փայտտիրական ընկերություն, մտավորականություն, բացարձակ միպետություն (աբսոլյուտիզմ), ազգային եկեղեցի, բողոքականություն:

- ա) Դասը սկսելով՝ ուսուցիչը նախ ամրապնդում է ներածական դասում ձեռք բերած

գիտելիքները և դասագրքին համապատասխան՝ դրանք ավելի իմաստավորում և հստակեցնում: Աշակերտներն իմանում են, որ մարդկային հասարակության բաժանումը երեք մեծ փուլերի կատարել են իտալացի հումանիստ պատմաբանները: Նրանց համոզմամբ՝ բարձր քաղաքակրթություն ստեղծվել է հին աշխարհում՝ Հունաստանում և Հռոմում: Հռոմի կործանումից մինչև իրենց ապրած դարաշրջանը՝ XV-XVI դարը, հումանիստները համարում էին խավարի և տգիտության ժամանակաշրջան, որը նրանք անվանեցին միջին դարեր: Մարդկության առաջադիմական զարգացմանը խոչընդոտելու մեջ մեղադրում էին կաթոլիկ եկեղեցուն:

Աշակերտներից մեկը կարող է հարց տալ. մի՞թե մինչև հումանիստները համաշխարհային պատմությունը բաժանված չէր փուլերի: Այդպիսի դեպքում ուսուցիչը բացատրում է, որ նման բան ավանդաբար եղել է անտիկ ժամանակներից ի վեր, երբ համաշխարհային պատմության ողջ ընթացքը բաժանված էր չորս ժամանակաշրջանի՝ ասորա-բաբելոնական, մեդիա-պարսկական, հունա-մակեդոնական և հռոմեական: Իսկ միջնադարը համարվում էր որպես Հռոմի պատմության շարունակություն, երկրորդ Հռոմ և Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրություն: Այս բաժանման հիմքում ընկած է այն ժամանակների եվրոպական պատմագիտությանը հայտնի համանուն քաղաքակրթությունների պատմությունը:

բ) Այնուհետև աշակերտների մեջ ուսուցիչն ամրապնդում է այն համոզումը, որ մարդկային հասարակությունը փոփոխվում է: Հասարակական հարաբերությունները ժամանակի ընթացքում փոփոխվում են՝ կախված մարդու պահանջները և աճից և նրանց թվաքանակի ավելացումից: Այդպիսի զարգացումը կարող է դարերով դանդաղել կամ արագանալ: Ջարգացումն արագանում է, երբ խաղաղ ժամանակները համեմատաբար տևական են լինում, և վերելք է ապրում քաղաքային կյանքը: Շեշտվում է այն միտքը, որ քաղաքները միշտ եղել են արիեստների, առևտրի և ընդհանրապես մշակույթի կենտրոններ: XIV-XVI դարերում այդպիսի քաղաքներ (Վենետիկ, Ֆլորենցիա, Ջենովա և այլն) շատ կային Հյուսիսային Իտալիայում: Հենց այստեղ սկզբնավորվեց հումանիզմը՝ մարդու նորովի արժեքավորումը, մարդկային բանականության և անհատականության փառաբանումը, հասարակական կյանքը և գործարարությունը, երկրային և աշխարհիկ լիարժեք կյանքով ապրելու գաղափարները, հարգանքը դեպի մշակույթը:

Այս արժեքները Իտալիայից տարածվեցին Եվրոպայի մեծ մասում, որով սասանվեցին աշխարհի մասին նախկին պատկերացումները, որ հազար տարուց ավելի տիրում էին միջնադարում: Ահա թե ինչու նման գաղափարների առաջին կրողները՝ հումանիստները, իսկ այսօր էլ շատ գիտնականներ, XVI դարը, երբ առավել ծաղկում ապրեց Վերածննդի մշակույթը, համարում են նոր ժամանակների սկիզբ: Հաջորդ դարերում «նոր ժամանակներ», «նոր պատմություն», «ժամանակակից պատմություն» հասկացությունները աստիճանաբար լայն տարածում են գտնում: Աշակերտների միտքը բևեռվում է այն երևույթի վրա, որ XVI դարից ի վեր սկսում է ձևավորվել մի նոր քաղաքակրթություն, որը շարունակվում է մինչև XX դարի սկիզբը: Գիտության մեջ այս նոր քաղաքակրթությունն ընդունված է համարել ինդուստրիալ կամ կապիտալիստական հասարակարգ: Գիտնականները հաճախ այն անվանում են նաև եվրոպական կամ արևմտյան քաղաքակրթություն՝ նկատի ունենալով նրա ձևավորման աշխարհագրական վայրը: Ուսուցիչն այդ մասին իր ասելիքն ամփոփում է՝ ընդգծելով, որ նոր պատմությունն ինդուստրիալ քաղաքակրթության կամ կապիտալիստական կացութաձևի սկզբնավորման և ձևավորման պատմությունն է: Գիշտ է, նոր պատմության ավարտի մասին նյութը դասագրքում տրված է 8-րդ գլխում: Այս դասում ուսուցիչը կարող է նշել միայն ավարտման

ժամանակը՝ աշակերտներին տեղեկացնելով, որ այդ մասին կսովորեն առանձին դասերում:

Երբ աշակերտները որոշ պատկերացում են կազմում նոր պատմության մասին, ուսուցիչը խնդիր է դնում պարզել, թե ինչու XVI դարը պետք է համարել ինդուստրիալ հասարակության ձևավորման սկիզբ: Ցանկալի է, որ ուսուցիչը հիշեցնի աշակերտներին VI դասարանում անցած «Միջին դարերի պատմություն» դասագրքի «XIV դարի ճգնաժամը» դասը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ դասի այս մասում աշակերտները պետք է յուրացնեն նոր հասկացություններ, որոնց մատչելի բացատրությունից է կախված նյութի յուրացման հաջողությունը: Այդ հասկացությունների մեծ մասը վերաբերում է տնտեսությանը: Աշակերտները պետք է համոզվեն, որ քաղաքակրթության տնտեսական հիմքը շուկայական տնտեսությունն է, ապրանքների արտադրությունը: Այսինքն՝ ի տարբերություն ավատատիրության, երբ արտադրանքի մեծ մասը սեփական սպառման համար էր նախատեսված, նոր հասարակությունում գրեթե ամեն արտադրանք ենթակա է վաճառքի: Կարևոր է, որ աշակերտները հասկանան արտադրության ընթացքը, ձեռներեցը (կապիտալիստը) ստեղծում է ձեռնարկություն՝ մանուֆակտուրա, վարձում մարդկանց (բանվորներ), արտադրված ապրանքը վաճառում շուկայում, գործարքներ կնքում բիրժայում (բորսայում), ստանում շահույթ, ընդարձակում արտադրությունը: Այդ ընթացքում նրան օգնում են միջնորդները՝ մակլերները, որոնց շնորհիվ հեշտանում է տնտեսական գործարք կնքելը: Աշակերտները պետք է մանուֆակտուրան՝ որպես կապիտալիստական ձեռնարկություն, տարբերեն միջնադարյան արիեստագործական արտադրությունից: Նախ՝ որ այստեղ առկա են վարձու աշխատանքը, բանվորը, որը կատարում է առանձին արտադրական գործողություն: Դա արագացնում է ապրանքի արտադրությունը և մեկ միավոր ժամանակում ավելի շատ արտադրում ու ավելի որակով, քան միջնադարյան արիեստանոցում: Դա էլ հենց արտադրողականության աճն է՝ ասենք, մեկ ժամում ավելի շատ և որակով արտադրելու կարողությունը: Ձեռներեց-կապիտալիստը (բուրժուան) հենց այդ ճանապարհով է ստեղծում սեփականություն, հարստություն, որը նրա մասնավոր գործարար կյանքն է:

Երբ աշակերտները հասկանում են կապիտալիստական արտադրության էությունը, ուսուցիչը մատչելի բացատրում է, որ փոխվում է նաև առևտրի բնույթը: Ի տարբերություն միջնադարի շուկայում հայտնվում է մեծ քանակությամբ ապրանք, հետևաբար առևտուրը դառնում է ամենօրյա, շուկաները՝ մշտական: Երկիրն ավելի է դառնում միասնական, քանի որ քաղաքի և գյուղի, դրանց տարբեր մասերի միջև տնտեսական կապերը խորանում են: Դրամի նախկին մեծ չափը փոքրացնում են, որը հեշտացնում է առևտուրը: Ապրանքների արտադրությունը նաև մեծացրեց առևտրի աշխարհագրությունը: Աշխարհագրական հայտնագործությունները նպաստեցին դրան, ծովային առևտրական ուղիները սկսեցին անցնել օվկիանոսներով, որի կենտրոնը դարձավ Եվրոպան: Քանի որ այդպիսի առևտրում մեծ դրամագլուխ էր պետք, առաջացան փայտտիրական ընկերություններ: Գիշտ է, դասագրքում բացատրված է այդ հասկացությունը, բայց ուսուցիչը կարող է որևէ պայմանական օրինակ բերել այդ մասին:

Դասի այս մասն ամփոփելով՝ ուսուցիչը բացատրում է, որ շուկայական տնտեսության ձևավորմանը զուգահեռ փոխվում է նաև բնակչության սոցիալական կառուցվածքը: Հասարակության մեջ սկսում են մեծ թիվ կազմել ձեռներեցները (բուրժուազիան, կապիտալիստները) և վարձու աշխատանքով ապրողները՝ բանվորները: Մտավորականների թվի ավելացումը պետք է նույնպես բացատրել շուկայական տնտեսությամբ, արտադրությունը գիտական դարձնելու պատմական անհրաժեշտությամբ:

Վերջում շեշտվում է, որ բոլոր այս նոր երևույթները, որոնք Եվրոպայում նշմարվում էին դեռևս XIV դարում, XVI դարից ի վեր ավելի հստակ և որոշակի դարձան, ուստի և այն կարելի է համարել ինդուստրիալ քաղաքակրթության ձևավորման սկիզբ:

դ) Դասի վերջին մասում ուսուցիչը պատմում է քաղաքական կարգերի մասին այն տեսանկյունից, թե դրանք որքանով նպաստեցին կամ խանգարեցին ինդուստրիալ հասարակության ձևավորման սկզբնավորմանը: Հենց այդ առումով պետք է պատասխան տրվի այն հարցին, թե ինչու առաջացան բացարձակ միապետական կարգեր՝ հակառակ Հռոմի պապի և կաթոլիկության, ինչու ամրապնդվեց պետության ազգային բնույթը: Աշակերտներն ուսուցչի օգնությամբ վերհիշում են յուրօրինակության առաջացումը և Ռեֆորմացիան Գերմանիայում, բողոքականությունը և նրա դրսևորումը տարբեր երկրներում: Այդ ամենն ամրապնդեց ազգային եկեղեցիների առաջացումը: Պետք է ասել, որ բողոքականությունն ընդհանուր առմամբ դարձավ ինդուստրիալ քաղաքակրթության հոգևոր հիմքը: Ըստ էության, աշակերտները մի անգամ ևս իմաստավորում են «պետություն» հասկացությունը՝ որպես հասարակության կազմակերպման և նրա ընդհանուր շահերը երաշխավորող հիմնարկ:

**Տնային աշխատանք:** Դասի ամփոփումից հետո ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին պատմել սովորել դասագրքի առաջին դասը, պատասխանել տրված հարցերին և դասագրքի քարտեզում գտնել դասում նշված երկրները:

**Դաս 2. Կապիտալիստական հասարակարգի ձևավորումը XVII-XIX դարերում:**

Դասի նպատակն է առաջարկվող նյութի հիման վրա ցույց տալ Եվրոպայում կապիտալիստական հասարակության ձևավորման և զարգացման հետագա ընթացքը XVII դարից մինչև XIX դարի կեսերը, ինչպես նաև նույն ժամանակաշրջանում այլ մայրցամաքների և երկրների անհավասարաչափ զարգացումը և դրա հետևանքները:

**Գլխավոր գաղափարները և հասկացությունները:** Կապիտալ, կապիտալի նախասկզբնական կուտակում, ցրված և կենտրոնացված մանուֆակտուրա, ֆաբրիկա և գործարան, արդյունաբերական բուրժուազիա և բանվորություն (պրոլետարներ), սահմանադրական միապետություն, ազգային, ժողովրդավարական պետություն, անհավասարաչափ զարգացում, գաղութային նվաճումներ:

Առաջարկում ենք դասի նյութի ուսուցման հետևյալ հաջորդականությունը.

- ա) Եվրոպայում կապիտալիզմի ձևավորումը.
- 1) նոր պատմության գլխավոր բովանդակությունը և կապիտալիստական տնտեսակարգի սկզբնավորումը (ուսուցման կապը նախորդ դասի հետ),
- 2) մանուֆակտուրայի հետագա զարգացումը,
- 3) կապիտալ և կապիտալի նախասկզբնական կուտակում,
- 4) արդյունաբերական հեղաշրջում,
- 5) արդյունաբերական բուրժուազիա և բանվորություն,
- 6) ազգային ժողովրդավարական (դեմոկրատական) պետություն,
- 7) սահմանադրական միապետություն:
- բ) Մայրցամաքների երկրների անհավասարաչափ զարգացումը.
- 1) տարբեր մայրցամաքների անհավասարաչափ զարգացման նկարագիրը,
- 2) գաղութային նվաճումները և հետևանքները,

3) գաղութների ազդեցությունը Եվրոպական կապիտալիզմի զարգացման գործընթացի վրա:

ա) Նախորդ դասի հետ ուսումնական կապն ապահովելու համար հարկ է աշակերտներին կրկին հիշեցնել նոր պատմության գլխավոր բովանդակությունը և նրա ժամանակագրական շրջանակները: Վերհիշելով կապիտալիստական տնտեսակարգի գլխավոր գծերը և սոցիալական տեղաշարժերը՝ ուսուցիչն աստիճանաբար անցում է կատարում դեպի նրա զարգացումը հետագա դարերում: Կրկին բացատրելով մանուֆակտուրայի էությունը որպես կապիտալիստական արտադրության խոշոր ձեռնարկություն (միջնադարյան արհեստանոցների համեմատությամբ)՝ խորացվում են աշակերտների գիտելիքները: Սկզբում եղել է ցրված մանուֆակտուրա, այսինքն՝ ապրանքային արտադրությունը ձեռներեցը (վաճառականը, հարուստ արհեստավորը և այլք) կազմակերպում է ոչ թե մի տեղում, մի շենքում, այլ հումքը բաժանում է տարբեր տեղերում գտնվող արհեստավորներին և գյուղացիներին, նրանց հետ կնքում գործարքներ ժամկետների և աշխատավարձի մասին: Այսպիսի գործողությունը ձեռներեցը կրկնում է մի քանի անգամ, մինչև որ ստանում է պատրաստի արտադրանքը: Այս բոլորը՝ մինչև XVI դարը:

Ցրված մանուֆակտուրաները գլխավորապես տարածված էին գյուղական վայրերում: XVII դարում Անգլիայում, Նիդերլանդներում և Ֆրանսիայում սկսում է գերիշխող դառնալ կենտրոնացված մանուֆակտուրան, երբ դրա համար քաղաքներում կառուցվում են հատուկ շենքեր, և արտադրությունը կազմակերպում մի տանիքի տակ: Նախորդ դասից աշակերտներն արդեն գիտեն, թե դա ինչպես է կատարվում: Մանուֆակտուրայի արտադրանք էին մահուղը, ապակին, շաքարը, թուղթը և այլն:

Նոր հասարակության մեջ գլխավոր սեփականության ձևը կապիտալն է: Ուստի և ուսուցիչը պետք է այս հասկացությունը բացատրի հանգամանորեն և մատչելի: Դասագրքում բացատրվածն ավելի հանգամանալի դարձնելու համար շեշտվում է, որ կապիտալը՝ որպես նոր շահույթ բերող սեփականություն, ավելի դժվար է պահելը և տնօրինելը, քան միջնադարյան սեփականության գլխավոր ձևը՝ ժառանգական կալվածքը: Կապիտալի գոյատևման և արտադրության ընդլայնման կարևոր պայմանը նոր շահույթն է, որը միշտ չէ, որ ստացվում է: Այստեղ կարևոր է աշակերտներին բացատրել նաև կապիտալի նախասկզբնական կուտակման էությունը, հատկապես նկատի ունենալով, որ դասագրքում այն բացակայում է: Շեշտվում է այն միտքը, որ ձեռներեցը որևէ գործ սկսելու համար պետք է ունենա դրամագլուխ, սեփականություն (հող, ոսկի և այլն): Այն ձեռք է բերվում գյուղացիների հողագրկման, առևտրից շահույթ ստանալու, այլ երկրների գաղութացման և կողոպուտների միջոցով: Նախասկզբնական կուտակման միջոցով ձեռք բերված այդ կապիտալը մեծ դեր է խաղում կապիտալիստական արտադրության հետագա կազմակերպման և ընդլայնման համար:

Այս բոլորն աշակերտների մեջ ամրապնդելուց հետո ուսուցիչն անցնում է «արդյունաբերական հեղաշրջում» հասկացության և նրա պատմական դրսևորման բացատրությանը: Նախ, բացատրվում է, որ արդյունաբերական հեղաշրջումն ունի երկու կողմ: Տեխնիկական, երբ ձեռքի աշխատանքը փոխարինվում է մեքենայի աշխատանքով, և մանուֆակտուրայի փոխարեն առաջանում է ֆաբրիկա և գործարան: Հասարակական, երբ աստիճանաբար մեծ սոցիալական ուժ են դառնում և ձևավորվում արդյունաբերական բուրժուազիան և բանվորությունը (պրոլետարիատ): Արդյունաբերական հեղաշրջման հետևանքներ են արտադրողականության աճը, ապրանքների առատացումը, ներ-



Պ Ր Պ Ա Ն Ա Մ Ա Ի Թ Յ Ո Ւ Ն

ինդուստրիալ քաղաքակրթությունը ձևավորվեց այստեղ: Ընդ որում, հենց դրա շնորհիվ հարյուրամյակների ընթացքում մարդկանց կյանքն աստիճանաբար գնում էր դեպի բարելավում: Իսկ աշխարհի մնացյալ մասերում, գլխավորապես Ասիայում և Աֆրիկայում, մարդկանց կյանքը մեծ մասամբ նախկինի պես մնում էր անփոփոխ: Նորամուծությունը և փոփոխությունն այդ տարածաշրջաններում կատարվում էր մեծ դժվարությամբ կամ եվրոպացիների ներթափանցման շնորհիվ:

Վերջում ուսուցիչն ամփոփում է թեման և աշակերտներին զգուշացնում, որ իրենց սովորած պատմական գործընթացներին նրանք ավելի հանգամանորեն կծանոթանան հաջորդ դասերին՝ Եվրոպայի և Ամերիկայի երկրների պատմությունը սովորելու ընթացքում:

**Տնային առաջադրանք:** Սովորել պատմել դասագրքի երրորդ դասը և կրկնել «Չամաշխարհային պատմության մոր ժամանակները» թեման: «Նոր պատմություն 7» աշխատանքային տետրում գրավոր կատարել նույն թեմայի համար նախատեսված հանձնարարությունները:

Ն. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ,  
ՆՈՎՀԱՆՆԵՍ ՄԻՔՈՒՋ  
ԶՈՒՂԱՅԵՅԻ, ԵՊՀ  
ՎՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,  
ԵՐԵՎԱՆ 2001, 271 էջ:

Գիրքը հրատարակվել է Գալուստ Գյուլբեկյան հիմնարկության հովանավորությամբ:

Ավելի քան երեք տասնամյակ է, որ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նրայիկ Միրզոյանը նախանձեղի նպատակասլացությամբ ու հետևողականությամբ ուսումնասիրում է և գիտական ու ընթերցող հասարակայնության սեփականություն դարձնում հայոց պատմության մեջ ազգային զարթոնքի դարաշրջանի, այն է՝ XVII-XVIII դարերի հայ փիլիսոփայական և հասարակական-քաղաքական միտքը՝ իր բազմակողմանի և բազմերանգ դրսևորումներով: Եվ, իհարկե, ամենևին էլ պատահական չափսի համարել, որ բազմերախտ գիտնականի ուշադրության կիզակետում են հայտնվել նախ և առաջ Նոր Ջուղայի սնուցած դպրոցին պատկանող հայ նշանավոր փիլիսոփաները, մասնավորապես Միսեոն Ջուղայեցին, Նովիաննես վարդապետ Մրթուզ Ջուղայեցին, Ստեփանոս Դաշտեցին և ուրիշներ:

Միանգամայն հասկանալի է, թե ինչու է պրոֆ. Ն. Միրզոյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում հայտնվել Նոր Ջուղան, որը Իրանի քարտեզի վրա հայտնվեց Շահ Աբբաս I-ի ձեռնարկած «մեծ գաղ-

թի» հետևանքով, երբ բռնի տեղահան արվեց Երևանի, Վանի, Ջուղայի, Ագուլիսի, Դաշուի և Հայաստանի շատ ուրիշ բնակավայրերի հայ ազգաբնակչությունը և նրա վաճառականական, և արհեստավորական դասերի հիմնական զանգվածը վերաբնակեցվեց Իրանի մայրաքաղաք Սպահանի հարևանությամբ կառուցված Նոր Ջուղայում:

Նոր Ջուղայի ստեղծմամբ Շահ Աբբաս I-ը հետապնդում էր Իրանի առևտուրն ու արհեստագործությունը զարգացնելու նպատակ: Այդ կապակցությամբ խիստ բնութագրական է Առաքել Դավիթեցու հետևյալ վկայությունը. պատասխանելով անհավատ հայերին հովանավորելու մեղադրանքներին՝ շահը ասում է. «Մի՛ վշտանայք և մի՛ մեղադրեք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հազիւ թե կարացի բերել զնոսա յայս յաշխարհ. ո՛չ թե վասն օգտին նոցա, այլ վասն օգտի մեր, զի աշխարհս մեր շինեսցի և ազգն մեր յաեցիցի» (Պատմութիւն Առաքել վարդապետի Դավիթեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 66): Եվ հարկ է նշել, որ նա հասավ իր այդ նպատակին: Արևելք-արևմուտք առևտրական առնչություններում խիստ մեծ էր Նոր Ջուղայի դերը: Պատահական չէր, որ անգլիական Արևելահնդկական ընկերության տարեգրության հեղինակ Ջոն Բրյուաը Նոր Ջուղայի հայ վաճառականներին համարում էր «մեր իմացած վաճառականներից ամենափորձվածները», որոնք իրենց «սեփական միջոցներով և վարկերով» են առևտրական գործառնություններ կատարում բոլոր գլխավոր համաշխարհային շուկաներում ու արտահանում «ամենաարժեքավոր ապրանքները»: Եվ դա ասված է այն ժամանակաշրջանի համար, երբ Նոր Ջուղան իր մայրամհան էր ապրում:





որ ռուսական կողմնորոշմանը զուգընթաց ու միաժամանակ ծագում է սեփական ուժին ապավինելու, զինված ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստվելու գաղափարը» (էջ 30), և նա կարևորում է Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների վառող պատրաստելու եղանակի նկարագրությունը, կարծես թե Հայաստանում չգիտեին վառող պատրաստելու եղանակը:

Բայց այստեղ մենք ուշադրությունը հրավիրում ենք հեղինակի այն դրույթի վրա, որ իբր թե մասնագետների ուշադրությունից վրիպել է «սեփական ուժին ապավինելու, զինված ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստվելու գաղափարը»: Ո՛չ, ամենևին էլ չի վրիպել և չէր կարող վրիպել, որովհետև հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրու և Պֆալցյան, և՛ Մոսկովյան ծրագրերում դրվել է այդ հարցը, որի մասին խոսել են Կ. Եզյանցից ու Լեոյից սկսած մինչև նվաաստ: Իսկ Հովսեփ Էմինի գործունեությունը այդ գաղափարի առավել բան ցայտուն դարձած վկայությունն է: Այնպես որ, Գրայի հարցում և ոչ մի վրիպում չկա:

Աշխատությունում հանդիպում են նաև մանր վրիպակներ, ինչպես վկայակոչված

էջերի անճշտություններ, կամ եզակի դեմքի փոխարեն հոգնակիի օգտագործում, որը աղավաղում է տեքստի իմաստը. այսպես, շահ Սուլթան Հուսեյնի ներկայությամբ ուրացող Յոհան Շեյխ Մումինը հարցնում է Հովհաննես Մրքուզին, «ինչո՞ւ չեք ընդունում մեր մարգարեին», տեքստում դարձել է «մեր մարգարեներին», մինչդեռ հայտնի է, որ իսլամի հետևորդները միայն մեկ մարգարե ունեն (տե՛ս էջ 28):

Հիշյալ մեր դիտողությունները չեն կարող ամենևին արժեզրկել քառորդ դարի տևողությամբ կատարված այն վիթխարի աշխատանքը, որի շնորհիվ պրոֆ. Ս. Ղ. Միրզոյանը ոչ միայն լույս աշխարհ է հանել 17-րդ դարի երկրորդ կեսի-18-րդ դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես վարդապետ Մրքուզ Ջուղայեցու՝ մեծ գիտնականի և հոյակապ հայրենասերի անխամրելի կերպարը, այլև հայագիտության ասպարեզում ստեղծել է մի աշխատություն, որն անվարան կարելի է անվանել նվաճում:

ՎԱՍԵՐ ԴԻԼՈՅԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՇԵԱՐ ՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դասագիրք IX դասարանի համար, Հին և միջին դարեր, 303 էջ:  
Դասագիրք X դասարանի համար, նոր և նորագույն ժամանակներ, 303 էջ, հեղինակային կոլեկտիվ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2001 թ.:

**Խ**որհրդային կարգերի փլուզումից և Հայաստանի անկախությունից հետո որոշակի փոփոխություններ կատարվեցին նաև կրթական համակարգում: Որոշ առումով հապշտապ և կտրուկ վերափոխումները բավականաչափ նոր խնդիրներ հարուցեցին և դժվարությունների առաջ կանգնեցրին: Այդ երևույթը դրսևորվեց նաև միջնակարգ դպրոցում՝ պատմության առարկաների դասավանդման հարցում: Եվ ընդհանուր, և հայոց պատմությունների ուսուցումը սկսվում է V դասարանում, իսկ առարկայի ամբողջ դասընթացը ավարտվում է VII դասարանում: Հետագա երկու տարիների ուսման համար չկար մշակված որևէ ծրագիր: Այդ պատճառով ավագ դպրոցում IX-X դասարաններում, պատմության առարկայի ուսուցումը երկար տարիներ բանավեճեր հարուցող խնդիր դարձավ:

Առաջարկ էր արվում չորս տարիների ընթացքում անցած դասընթացները կամ միայն հայոց պատմությունը մատուցել խորացված՝ առանցքային հիմնախնդիրներին անդրադառնալու եղանակով: Հանգամանք, որը աշակերտների մոտ կրկնության տպավորություն կստեղծեր և հետաքրքրություն չէր առաջացնի: Մեկ այլ մոտեցմամբ՝ նպատակահարմար էր ուսուցանել հայկական հարցի պատմությունը: Հակառակ տեսակետ պաշտպանողները գտնում էին, որ ոչնչով արդարացված չի լինի երկու տարի շարունակ աշակերտին ուսուցանել, նրա ուշադրությունը բնեռել միայն մեկ, թեկուզև կարևոր, խնդրի վրա:

Ի վերջո, առավել ընդգրկուն մոտեցմամբ նկատի են առնվել հետևյալ հանգամանքները: Մարդկային հասարակության զարգացման արդի ժամանակաշրջանը վերացրել, պատմության գիրկն է նետել տարբեր երկրների ու ժողովուրդների առանձնացված և մեկուսի գոյատևման հնարավորությունները: Գիտատեխնիկական հեղափոխությունը աշխարհի բոլոր երկրներին կյանքի բոլոր կողմերով կապել է մեկը մյուսի հետ: Հետևաբար՝ XXI դարի քաղաքացին հենց իր երկրի շահերին արդյունավետ ծառայելու մղումով պարտավոր է տեղյակ լինել մարդկության համաշխարհային զարգացման միտումներին: Այդ պատճառով միանգամայն արդարացված ու անգամ ողջունելի պետք է համարել հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում ներկայացնելու կատարված փորձը:

Մենք համամիտ ենք նոր դասագրքի հայցած խնդիրների ու նպատակների մասին աշակերտներին հասցեագրված խոսքի հետևյալ մոտեցումներին. «Այստեղ չեն կրկնվելու նախորդ տարիներին ձեր անցած բոլոր իրադարձությունները, փաստերն ու թվերը: Դրանք ձեզ քաջածանոթ են: Սույն դասագիրքը նպատակ ունի խորացնելու պատմության վերաբերյալ ձեր գիտելիքները, որպեսզի ընկալեք ավելի բարդ երևույթները, զարգացնեք ինքնուրույն մտածելու ձեր հմտություններն ու կարողությունները: Դուք ի գորու եք հասուն հայացքով իմաստավորելու պատմական երևույթները, ընկալելու դրանց տրամաբանական կապն ու օրինաչափությունները»:

Այստեղ իրավացիորեն նշվում է դասագիրքը ստեղծելիս աշակերտների տարիքային հասունացումը նկատի առնելու պարագան: Այդ նշանակում է, որ հեղինակները ջանալու են պահպանել կրթության շարունակությունը՝ պարզից դեպի նյութի բարդացումն ու խորացումը՝ աշակերտների աճին համապատասխան:

Ավելորդ չէ նշել, որ համաշխարհային պատմության համատեքստում առավել լավ են իմաստավորվում հայոց պատմության շատ իրողություններ, ինչպես V-VII դարերի մշակույթը, Վերածնունդը, լուսավորական շարժումը և այլ հիմնախնդիրներ:

Հիրավի, հայոց և համաշխարհային պատմությունների համակարգված ուսուցումը թույլ կտա հայ պատահիներին ճիշտ արժևորել և հասկանալ մեր ժողովրդի տեղն ու դերը համաարդկային արժեքների ստեղծման ու պահպանման համակարգերում:

Նմանատիպ դասագրքերը թույլ կտան մեր հասարակության յուրաքանչյուր անդամի դաստիարակել կուռ գաղափարախոսությամբ և մեկ ճշմարտությամբ, այն է՝ դառնալ XXI դարի հայ քաղաքացի՝ ինտեգրված համաշխարհային տնտեսական, քաղաքական, մշակութային առաջավոր զարգացումներին:

Արդեն մեկ կիսամյակից ավելի ուսումնասիրել ենք IX-X դասարանների պատմության դասագրքերը: Նշենք, որ դրանք մեծ մասամբ հաջողված են, և ներկա գրախոսությունը նպատակ ունի մատնանել հաջողությունները, ինչպես նաև քննել այն բացերը և հիմնախնդիրները, որոնք պետք է վերացվեն և լուծում ստանան հաջորդ հրատարակության ժամանակ:

### IX դասարանի դասագիրքն ունի երկու մեծ բաժիններ.

**Բաժին Ա** - Հին դարեր՝ գլուխ 1-8, որը կազմված է 35 դասից,

**Բաժին Բ** - Միջին դարեր՝ գլուխ 9-25՝ կազմված 50 դասից:

### X դասարանի դասագիրքն ունի 2 բաժին.

**Բաժին Ա** - Նոր շրջան (1640-1918 թթ.)՝ գլուխ 1-14, որում ներկայացված է 40 դաս:

**Բաժին Բ** - Նորագույն շրջան (1918-2000 թթ.)՝ գլուխ 15-25, որում ներկայացված է 36 դաս: Գրքի բաժինների վերջում տրված են ժամանակագրություններ: Պետք է ասել, որ փաստական նյութի մեծ մասը ճիշտ է ընտրված (IX դասարանի դասագրքի գլուխ 1, 5-25 և X դասարանի դասագրքի բոլոր գլուխները), հիմնականում ճիշտ են թեմաների դասավորությունը և շարունակականությունը: Տեսական հարցերը բացատրված են ամփոփ և հակիրճ: Հենց սրանից էլ բխում է այն մտահոգիչ հարցը, թե ինչպես են աշակերտները յուրացնում փաստական նյութը: Միանշանակ ասենք, որ տվյալ դասի յուրացման մակարդակը անառարկելիորեն կախված է նախորդ դասարաններում՝ նույն թեմայի յուրացման աստիճանից և դասավանդող ուսուցիչների գիտելիքներից ու հմտությունից: Բայց քանի որ V-VIII դասարաններում ուսուցման մակարդակը դեռևս բավարար չէ, IX-X դասարաններում առաջանում են լրացուցիչ դժվարություններ: Նոր դասագրքերի առանձին թեմաներ կարելի էր, թերևս, ավելի մանրամասնել (օրինակ՝ X դասարանի գրքի 6-րդ գլխի § 2-ը):

Փաստական նյութի ծավալը բավարար է, բայց ցանկալի կլիներ, որ յուրաքանչյուր գլխի վերջում տրվեր այդ գլխի դասերի ամփոփումը, իսկ բաժնի վերջում՝ տվյալ բաժնի ամփոփումը՝ զուգահեռներով, ապա՝ նոր ժամանակագրությունը:

IX դասարանի դասագրքում կան 10 քարտեզներ, իսկ X դասարանի դասագրքում 11 քարտեզներ: Քարտեզները շատ կարևոր դիդակտիկ նյութեր են, իսկ դպրոցների մեծ

մասն արդեն չունի քարտեզներ, քանզի եղածները, որ խորհրդային հրատարակություններն էին, արդեն մաշվել են, իսկ նորերը չկան: Ուստի հույս ունենք, որ նոր հրատարակվող դասագրքերում հաշվի կառնվի այս բացը, կան էլ լույս կտեսնեն IX-X դասարանների առանձին ատլաս-քարտեզներ, և հնարավոր կլինի երեխաների հետ աշխատել նաև թեմատիկ քարտեզների վրա:

Դասագրքերում հայոց և համաշխարհային պատմության գործընթացների առնչությունները տրված են, բայց ցանկալի է, որ դրանք ի մի բերված լինեն վերոնշյալ, թեմատիկ և բաժնի ամփոփումներում, որի շնորհիվ դրանք ավելի ըմբռնելի կդառնան: Կարծում ենք, որ հայոց և համաշխարհային պատմության առնչությունների վերլուծությունը և ուսուցումը պետք է դառնա IX-X դասարանների դասագրքերի գլխավոր խնդիրներից մեկը:

Դասագրքերում հայոց պատմության նյութերը տրված են հետևյալ կերպ. IX-ում՝ 85 թեմաներից 43-ը, իսկ X-ում՝ 76 թեմաներից 37-ը նվիրված են հայոց պատմությանը (161-ից՝ 80-ը): Թեմաների քանակը, մեր կարծիքով, բավարար է, սակայն, թերևս, նպատակահարմար կլիներ թեմաների վերջում տալ համապատասխան փաստաթղթեր և քաղվածքներ՝ պատմական այլ սկզբնաղբյուրների նյութեր՝ գլխավորապես առնչությունների վերաբերյալ:

Չնայած դասագրքերի նկարագրողունները, ընդհանուր առմամբ, բավարար են, ցանկալի է, որ գլուխ 2-4-ում լինեին նախնադարի փուլերը բնորոշող քարե գործիքների, կենցաղի, քարայրերի, ժայռապատկերների, էնեոլիթից-երկաթի դարն ընկած շրջանի գործիքների, ապա եգիպտոսի, Աքեմենյան Պարսկաստանի, Բիհիսթունի, Երվանդակյանների դամբարանադաշտի, Արտաշատի ավերակների, հունա-հռոմեական հուշարձանների և այլ նկարներ: Դրանք նույնպես դիդակտիկ կարևոր նյութեր են և զարգացնում են աշակերտների տեսողական տպավորությունները: Այդ նկարներից և վերոհիշյալ քարտեզներից մի որոշ մասը կա V-VIII դասարանների դասագրքերում, բայց ամեն անգամ նոր դասարան փոխադրվելիս աշակերտները դրանք հանձնում են և հաճախ մոռանում:

Ցանկալի կլիներ, որ լինեին Հայաստանի և այլ երկրների պետական կառույցների, ֆեոդալական նվիրապետության, ռեմտաների, բացարձակ և սահմանադրական միապետությունների, հանրապետությունների կառույցների գծապատկերները և դրանց համադրությունները:

Դասագրքերում ընդգրկված հարուստ նյութերի մատուցման մեջ կան նաև որոշ անճշտություններ: Օրինակ՝ «Նախնադար» թեմայում քարի դար, պղնձի-քարի դար, բրոնզի դար և երկաթի դար ստորաբաժանումները տրված են որպես «նախնադարի առանձին փուլեր» (էջ 17), իսկ գլուխ 3-ի § 1-ում («Առաջավոր Ասիան քաղաքակրթության արշալույսին») նշվում է, որ «Առաջին քաղաքակրթությունները ձևավորվեցին Ք.ա. IV հազարամյակում Առաջավոր Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում (էջ 27): Սա հակասություն է: Պալեոլիթում «վկայված է» ամուսնաընտանեկան հարաբերությունների և մայրիշխանության, տոհմերի մասին (էջ 19): Նեոլիթում (Ք.ա. IX-VI հազ.) խոսվում է մետաղագործության մասին (էջ 20), իսկ էջ 22-ում խոսվում է, որ առաջին պղնձե առարկաները գտնվել են Չոյունու-Թեփեսից (Ք.ա. VIII-VII հազ.): 5-րդ դասարանի դասագրքերում նախնադարի փուլերը (էջ 12-17) հազարամյակների շեղում են տալիս նոր դասագրքերում համապատասխան փուլերի հետ (էջ 17-38):

Նոր դասագրքերում տրված են մարդագույացման փուլերը (էջ 17-19): Չէ՞ որ արդեն հայտնի է պրոֆեսոր Ռիչարդ Ա. Սթրաթոնի գլխավորած Միդնեյի համալսարանի արշավախմբի՝ Տիբեթյան քարանձավում խոչկավոր մարդանման մումիաները, որոնց տարիքը անց է 4 մլն տարուց, և որոնք ուղղակիորեն մարդկանց նախնիներն են: Գեներ

նույնացման գերժամանակակից մեթոդները թույլ են տալիս ապացուցել, որ տեղի չի ունեցել կապի մարդացման գործընթաց: 1997 թ. առաջին անգամ անց են կացվել, այսպես կոչված, «նեանդերթալցու» ՊՆԹ-ների կառուցվածքի հետազոտությունները, և ապացուցվել է, որ նրանք երբեք չեն եղել մարդու նախնիները, այլ ապրել են երկրի վրա մարդկանց նախնիների հետ միաժամանակ: Նույնը կարելի է ասել նաև Քենիայի Տուրկան լճի մոտ կատարված պեղումների արդյունքների մասին:

Անհրաժեշտ էր նոր դասագրքերում տալ քարե մեգալիթյան գործիքներից անցումը միկրոլիթյան գործիքներին, խոսել արորի, լծկան եգի կիրառման և դրանց ժամանակի, գրչության ձևերի ու տեսակների էվոլյուցիայի մասին:

9-րդ դասարանի դասագրքում բաց է մնացել Ք.ա. 23-ից մինչև թեղքյան մշակույթ՝ Ք.ա. 21-18-րդ դդ. ընկած ժամանակաշրջանը (էջ 43):

Գլուխ 6-ի § 3-ում նշվում է, որ պարթևաց արքա Միհրդատ I-ը երկիրը վերածել է համաշխարհային տերության, իսկ 2 տող հետո նշվում է, որ «իրավիճակը փոխվեց Միհրդատ II-ի ժամանակ: Այս եռանդուն գահակալը վերակառուցեց պարթևական բանակը...» և այլն (էջ 89-90): Այսինքն՝ առկա են հակասական գնահատումներ:

Չայտնի է, որ միջազգային հանրության կողմից այսօր մեզ երաշխավորում են այլ չափանիշներ, այլընտրանքային ծառայություններ, կրթություն, դասավանդման և ուսուցման նոր մեթոդիկաներ: Սակայն պարզ է նաև, որ այսօր ուսուցիչը չի կարող երկու ճշմարտությամբ դպրոց ու դասարան մտնել: Սա վերաբերում է V-VIII դասարանների և IX-X դասարանների պատմության գրքերում առկա որոշ հակասություններին:

2000 թ. հայոց պատմության դասագրքերում	2001 թ. պատմության դասագրքում
Կիմերների և սկյութների արշավանքները՝ Ք.ա. 7-րդ դար (էջ 27)	Նույնը՝ VIII դար (էջ 49)
Սանատրուկ արքա՝ 88-110 թթ.	88-109 թթ.
Վաղարշ I՝ 117-140 թթ.	117-144 թթ.
Վաղարշ II՝ 185-198 թթ.	186-198 թթ.
Տրդատ II՝ 216-252 թթ.	216-256 թթ.
Տիրան՝ 338-350 թթ.	338-349 թթ.
Պապ՝ 368-374 թթ.	370-374 թթ.
Տրդատ III Աեծ՝ 298-330 թթ.	286- մոտ 330 թթ.
5-րդ դաս., էջ 59-61, 80, 132	էջ 108-111, 127
Սելջուկյան I արշավանք՝ 1047 թ.	1016թ.
II արշավանք՝ 1048 թ.	1021 թ. և այլն

Այսպիսի իրարամերժ փաստական տվյալները ոչ միայն դժվարին կացության մեջ են դնում ուսուցիչներին, այլև երեխաների մեջ առաջացնում են անվստահություն և թերահավատ վերաբերմունք:

IX դասարանի դասագրքում Ռուսաստանում կենտրոնացված պետության առաջացումը (Գլ. 18, § 3, էջ 235) կապել միայն արտաքին գործոնների հետ, ըստ մեզ, այնքան էլ արդարացված մոտեցում չէ: Կարծում ենք, որ կարելի է տալ ներքին պատճառները և երևույթը դիտել համակողմանի փոխկապակցվածության մեջ:

Մեթոդական առումով հաջողվածությունը մեծապես պայմանավորված է դասագրքերում առկա վերոհիշյալ թերությունների շտկման հետ: Դասագրքերի վերջում կարելի

է զետեղել տերմինների բացատրական բառարան, պարտադիր և լրացուցիչ գրականության ցանկ, դասերի վերջում եղած հարցերը պարզեցնել տվյալ թեմային խստորեն համապատասխանող մեթոդներով և լայն ընդգրկումով: Որոշ դեպքերում նկատվում է նաև համամասնության սկզբունքային շեղումներ: Այդ առումով ցանկալի է, որ հայոց պատմությունը տրվի ամբողջական մոտեցումով, որ այն կուլ չգնա ընդհանուր պատմությանը, այսինքն՝ ոչ թե ածանցվի, այլ համադրվի դրան: Մեթոդական ձեռնարկները մասամբ են բավարարում պահանջները: Չույս ունենք, որ IX դասարանում ոչ թե 9 ժամ, իսկ X դասարանում 18 ժամ (որից 10-ը՝ ողջ դասընթացի կրկնությունը) կհատկացվի կրկնությանը, այլ, ինչպես ասացինք, հաշվի կառնվեն թեմատիկ ամփոփումների, ինտերակտիվ ամփոփումների ժամաքանակը, այդ ամփոփումների ամենաեական և ուշագրավ պահերը: Ակնկալում ենք, որ մեթոդական ձեռնարկներում տեղ կհատկացվի ինտերակտիվ հնարների, դիդակտիկ նյութերի հետ աշխատելու մեթոդների և այլնի օգտագործման եղանակներին, սեմինարների թեմաներին, վերլուծական բանավեճերի հարցերին:

Ցանկալի է, որ մեթոդական ձեռնարկներում թեմատիկ ցուցումները կազմելիս խստորեն հաշվի առնվեն դասի տևողությունը և դասի ծավալը:

Անշուշտ, նոր ձեռնարկներում կան անհրաժեշտ ուղեցույց մտքեր, առանձին մտքերի և երևույթների վրա հանգամանորեն կանգ առնելու հղումներ և կրկնելու համար մատնանշված ցուցումներ: Դասագրքերի գլուխների զգալի մասը (Գլ. 5-8, 13-19, 21-ը, 22-25-ը (IX դաս.), X դասարանի դասագրքի համարյա բոլոր՝ գլուխները) գիտական առումով հաջողված են: Նոր դասագրքերը, անկասկած, դրական երևույթ են, սակայն չպետք է բավարարվել ձեռք բերածով:

Քաջ գիտակցում ենք, որ նոր դասագրքի ստեղծումը բնավ դյուրին գործ չէ, և անխուսափելի են խոցելի կողմերը, թերությունները և վրիպակները: Չասկանալի է, որ նոր դասագրքերի ստեղծումը համազոր է նոր պատմական հայեցակարգի և առանցքազապահարի մշակմանն ու արմատավորմանը: Անխուսափելի է նաև իրարամերժ կարծիքների, մոտեցումների ու տեսակետների բախումը: Չէ՞ որ մեր հասարակությունն էլ գտնվում է հակասական ու բարդ վերափոխումների փուլում: Ուստի և մենք նս ապահովագրված չենք չհիմնավորված գնահատումից և բնութագրումից: Սակայն մի բան պարզ է. IX-X դասարանների դասագրքերի ստեղծման ելակետը ճիշտ է: Միջնակարգ կրթության ավարտական փուլում դրանք կօգնեն աշակերտներին ճիշտ պատկերացում կազմելու մեր ժողովրդի և երկրի դերի և տեղի մասին համաշխարհային պատմության բարդ զարգացումներում: Չմոռանանք, որ սա այդպիսի դասագիրք ստեղծելու անդրանիկ փորձն է և դժվարին ստեղծագործական աշխատանք:

Լավատես ենք, քանզի հեղինակային կազմում ընդգրկված են Չայաստանի պատմագիտական մտքի լավագույն ներկայացուցիչներ, և համոզված ենք, որ հաջորդ հրատարակության մեջ հաղթահարված կլինեն սխեմատիզմի և ակադեմիզմի առանձին դրսևորումներ, նյութերը կհարստացվեն նոր քարտեզներով, նկարներով, ամփոփումներով և պատմական փաստաթղթերով, առանձին թեմաները կբեռնաթափվեն ավելորդ անուններից և քվեերից:

ԱԼԼԵԻՏ ԲՅՈՒՐԵՉՅԱՆ  
ՎԱՅՐԱՍ ՍԻՍՈՆՅԱՆ

Գ Ի Ր Բ

«ԱՄԵՆԱՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

N. Hovhannisian. The Armenian Genocide Armenocide, Yerevan, 2002, 108 p.

«Ամենացեղասպանական ցեղասպանություն՝ հայասպանություն» արտահայտությունը պատկանում է լիբանանյան արաբ պատմաբան Մուսա Պրենսին, որը ֆրանսերեն հրատարակել է «Անպատիժ մնացած ցեղասպանությունը՝ հայասպանություն» աշխատությունը. այն լույս է տեսել Բեյրութում 1967 թ.:

«Տաթև գիտակրթական համալիրը» (գլխավոր տնօրեն՝ Սուրատ Մկրտչյան) անգլերեն հրատարակել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն՝ հայասպանություն. պատմաբանները, նպատակները, հետևանքները» վերտառությամբ խիստ արժեքավոր գիրքը, որը հետապնդում է մեծապես արդիական, միաժամանակ ազնիվ ու անհրաժեշտ մի նպատակ՝ ծանոթացնել համաշխարհային հասարակայնությանը XX դարի առաջին անլուր և զագրելի ցեղասպանական ողբերգությանը, որը երկար ժամանակ և հանդիպելի կամեցնում էին մոռացության տալ, ինչպես որ ժամանակին մոռացության տվեցին եվրոպական մեծ հորջորջված տերությունները Հայկական բազմաշարչար հարցը: Գրքի խմբագիրն է ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը: Պրոֆ. Ն.Հովհաննիսյանի գրքի հրատարակումը ողջունելի երևույթ է, որովհետև վերջապես Հայաստանի Հանրապետությունը հրապարակ է հանում համաշխարհային հասարակայնությանը ուղղված անգլերեն մի աշխատություն, որը հանրամատչելի կերպով, համառոտակի և փաստարկված տալիս է հայ ժողովրդի սահմնկեցուցիչ ողիսականի հանդիչ պատմությունը: Գրքում կուռ տրամաբանությամբ և փաստարկված այն կարևոր միտքն է նաև զարգացվում, որ թուրքական բուլոր անցյալ ու ներկա իշխանությունները հայոց ցեղասպանության հարցում միմյանց իրավահաջորդներն են և հավասարաչափ պատասխանատու են հայասպանության համար: Հետևողական ու նպատակասլաց հակահայկականությունը բնութագրական է և՛ արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ II-ին, և՛ նրա ոճրագործ հետևորդներ երիտթուրք ազգայնամուլներին, և՛ հայոց հազարամյակների հայրենիքը յուրացրած քեմալական թուրքիային, և՛ ներկայիս թուրքական իշխանություններին, որոնք շրջափակման մեջ են պահում Հայաստանի Հանրապետությունը, չեն ճանաչում այն դե յուրե և անպատկառորեն ուզում են խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի հարցի պատմական և իրավական առումով արդարացի լուծումը: Եթե ներկայիս թուրքական իշխանությունները փրփրաբերան ժխտում են հայոց ցեղասպանությունը, ապա դրանով, կամաթե ակամա, Օսմանյան կայսրության հարազատ ու օրինական իրավահաջորդը լինելն են խոստովանում, հետևաբար և պետք է պատասխան տան նրա փոխարեն:

Հայկական ցեղասպանությանը միջազգային ճանաչում տալը, Հայկական դատը մեր ազգային զաղափարախոսության անկապտելի մասն են: Քեմալական թուրքիան և նրան սիրաշահող մեծ տերությունները, մասնավորապես Անգլիան և Ֆրանսիան, կարծում էին, թե Լոզանի խորհրդածողովը մեկընդմիջտ «թաղեց» Հայկական հարցը և հանցագործին արտոնեց հանգիստ ընթրշխնել իր ոճրագործության արդյունքները: Բայց կարելի՞ է

«թաղված» համարել Հայկական հարցը, եթե գոյություն ունի բազմամիլիոնանոց Հայկական սփյուռքը, որն օրինական պահանջատերն է իր բարոյական ու նյութական անլուր կորուստների, իր անպատկառորեն գողացված հայրենիքի, որտեղ դեռ յուրաքանչյուր քար հայկականությամբ է շնչում, երբ գոյություն ունեն հայկական քաղաքական կուսակցություններ ու կազմակերպություններ, որոնք մարտնչում են ոչ միայն հանում իրենց օրինական պահանջների բավարարման, այլև ջանում են ընթրնել տալ համաշխարհային հասարակայնությանը օսմանյան թուրքիայում կատարված հայասպանության ամբողջ ահավոր իմաստն ու նպատակը: Պատմական ճշմարտությունը ընթրնելու և երևան հանելու ողջ ընթացքը աներկբայորեն վկայում է, որ ոչ պատմության թուրքական լկտի ու անսամծ կեղծարարներին, ոչ էլ նրանց արտասահմանյան հովանավորներին ու վարծու խոսափողներին չի հաջողվի ժխտել կամ եղծել հայոց ցեղասպանությունը, որը Հայկական հարցի լուծման թրքավարի եղանակն էր:

Արտասահմանյան քաղաքագետների, իրավաբանների, պատմաբանների, ցեղասպանագետների վկայությունների հիման վրա և համեմատական զուգահեռների ու տարբերությունների համադրմամբ հրեական հոլոկոստի հետ՝ գրքի առաջաբանում պրոֆ. Ն.Հովհաննիսյանը հիմնավորում է հայկական ցեղասպանության իրողությունը և բերում է փաստարկներ, որոնք հիմք են տալիս խոսելու Օսմանյան կայսրությունում իրագործված «հայասպանության» մասին, այն է՝ հայասպանությունը կատարվել է հայոց հայրենիքում Արևմտյան Հայաստանում, իսկ հրեական հոլոկոստը՝ Գերմանիայում: Երկրորդ՝ հայասպանությունը կատարվել է եկվորների թուրքերի կողմից, որոնք միայն XI դարից են սկսել հայտնվել Մերծավոր Արևելքում: Ինչ վերաբերում է հրեաներին, ապա նրանք իրենք էին եկվորներ Գերմանիա-

յում: Այնուհետև, եթե ցեղասպանության հետևանքով հայերը կորցրին հազարամյակների հայրենիքը և սփռվեցին աշխարհով մեկ, ապա հրեաները, ընդհակառակը, հասան հայրենիքի վերստեղծման և հրեաների վերադարծին հայրենիք: Ուրեմն, հայասպանությունը հիրավի ամենացեղասպանական ցեղասպանությունն է:

Աշխատության առաջին գլուխը, որը կրում է «Հայաստանը դարերի միջով: Համառոտ պատմա-աշխարհագրական ակնարկ» խորագիրը, հնարավորություն է ընծեռում օտարալեզու ընթերցողին ծանոթանալու Հայկական լեռնաշխարհի հետ, որն ավելի քան 300 000 քառակուսի կիլոմետր տարածք է ընդգրկում, և որտեղ ընթացել է հայ ժողովրդի պետական, տնտեսական ու մշակութային կյանքը և համառոտակի ծանոթացնում է հայոց պատմական անցյալին:

Երկրորդ գլուխը՝ «Արևմտյան Հայաստանի նվաճումը Օսմանյան կայսրության կողմից», նկարագրում է թուրքական ցեղախմբերի հայտնվելը Հայաստանում և Մերծավոր Արևելքում և, ի վերջո, Արևմտյան Հայաստանում օսմանյան տիրապետության հաստատումը:

Երրորդ գլխում «Հայկական հարցը և նրա զարգացման փուլերը», հեղինակը հիմնավորում է Հայկական հարցի զարգացման երեք փուլերի առկայություն: Իբրև առաջին փուլ՝ նա դիտարկում է 1639թ. Կասր-ի Շիրիմի պայմանագրից մինչև Բեռլինի կոնգրեսն ընկած ժամանակաշրջանը, երբ այն ներքին ներօսմանյան հարց էր: Երկրորդ փուլը ներառում է Բեռլինի կոնգրեսից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածը, երբ Հայկական հարցը վերածվում է միջազգային հիմնահարցի և դառնում է Արևելյան հարցի անբաժան մասը: Երրորդ փուլը սկսվում է Առաջին աշխարհամարտով, երբ, առաջնորդվելով «Հայկական հարցի լուծման լավագույն եղանակը հայերի ֆիզիկական բնաջնջումն է» սկզբունքով, երիտթուրքական ղեկավարությունը

հրեշավոր դաժանությամբ իրագործեց հայասպանությունը:

Ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Օսմանյան կայսրության երեք միլիոն հայ բնակչությունից 2.5 միլիոնը կենտրոնացած էր Արևմտյան Հայաստանում, մի բան, որը չէր կարող չտագնապեցնել օսմանյան սուլթաններին, հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես էր ձգտում օտարամուտ տարրերի՝ քրդերի, իսկ XIX դ. նաև չերքեզների ու Բալկաններից գաղթած մուհաջիր թուրքերի հաշվին փոխել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Միաժամանակ օսմանյան իշխանությունները նորեկներին և բնիկ հայերին դիտավորյալ լարում էին միմյանց դեմ՝ հաճախակի հայերի կոտորածներ կազմակերպել տալով:

Ն.Հովհաննիսյանը շատ ճիշտ նշում է, որ հայկական նահանգներում մահմեդականներ բնակեցնելը երկու նպատակ էր հետապնդում, նախ՝ արհեստականորեն նվազեցնել հայերի թիվը, որպեսզի նրանք այլևս բացարձակ մեծամասնություն չներկայացնեն և, երկրորդ՝ առաջնորդվելով «բաժանիր և տիրիր» սկզբունքով, լարել նրանց հայերի դեմ՝ շեղելով ուշադրությունը օսմանյան վարչակարգից և նրա դեմ պայքարելուց: Հայերին հարաբերական փոքրամասնություն դարձնելու նպատակին էր ուղղված նաև օսմանյան վարչական միավորների հաճախակի փոփոխությունն այն իմաստով, որպեսզի հայկական նահանգների մեջ մտցվեն մահմեդականաբնակ շրջաններ:

Արան զուգահեռ՝ հայերը զրկված էին տարրական իրավունքներից իբրև քրիստոնյաներ: Իրավագրությունը հանգեցրեց հույների ապստամբությանն ու ազատագրմանը, 1831-1841 թթ. եգիպտական ճգնաժամին, բալկանյան սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին ու ազատագրմանը, Ջեթունի 1862 թ. հերոսամարտին և այլն: Այդ բոլորը ցույց էր տալիս Օսմանյան կայսրության

ռազմաֆեոդալական քաղաքական համակարգի ապրած ծանր ճգնաժամը, որն ընդգրկել էր համակարգի կյանքի բոլոր ոլորտները՝ պետական, քաղաքական, օրենսդրական, տնտեսական, ազգամիջյան, կրոնական և հոգևոր-մշակութային:

Նման համակողմանի ճգնաժամից, որը սպառնում էր կայսրության ամբողջականությանը և բուն իսկ գոյությանը, ելք էր պետք գտնել, որի անհամարձակ փորձը կատարեց օսմանյան կառավարող խառնախումբը՝ դիմելով մասնակի վերափոխումների քաղաքականության՝ այսպես կոչված թանգիմաթին, որի 1839 և 1856 թվականների զույգ ակտերն էլ դատապարտված էին մնալու թղթի վրա, որով հետև քրիստոնյաների՝ մահմեդականներին հավասար իրավունքներ ունենալու սկզբունքն ընդունելի չէր Օսմանյան կայսրության կրոնական մուլեռանդությամբ տոգորված պահպանողական տարրերին:

Ամփոփելով Հայկական հարցի զարգացման առաջին փուլը՝ պրոֆ. Ն.Հովհաննիսյանն իրավացիորեն նրա բովանդակությունը տեսնում է հետևյալում. պահպանել Արևմտյան Հայաստանի հողերը հայերի տիրապետության տակ, թույլ չտալ թուրքերին, քրդերին և չերքեզներին զավթելու այդ հողերը, չնայած որ նրանց այդ քայլը խրախուսում և հրահրում էր օսմանյան կառավարությունը: Հայերն իրավամբ այն կարծիքին էին, որ հողերի կորուստը կհանգեցնի հայերի վերացմանը, քանզի հողը միակ գրավականն է ազգային ինքնության պահպանման: Այդ դեպքում հնարավոր կլիներ նաև պահպանել Արևմտյան Հայաստանի հայկական ազգային կերպարը: Դրա համար անհրաժեշտ էին սոսկ տարրական դեմոկրատական իրավունքներ, այն է՝ անձի և ունեցվածքի ապահովության երաշխիք, մարդկային ու ազգային արժանապատվության, ընտանեկան ու ազգային ավանդույթների ու սովորությունների նկատմամբ հարգանք: Այս փուլում չէր դրվում վարչատարածքային ինքնակառա-

վարման կամ ինքնավարության որևէ պահանջ: Այսպիսով՝ ներկայացվող պահանջները խիստ չափավոր էին:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները ամփոփած Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի և ապա Բեռլինի պայմանագրի ստորագրմամբ Հայկական հարցը մտնում է իր զարգացման երկրորդ փուլը, որը հիմնականում համընկավ արյունոտ ռազմադի ու աշխարհայացքի տեր Աբդուլ Համիդ II-ի գահակալության տարիներին, որի կառավարումը ողբերգական եղավ Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք և քրիստոնյա ժողովուրդների համար: Հիշյալ պայմանագրերի 16-րդ և 61-րդ հոդվածներով հարցը միջազգայնացավ և մուտք գործեց իր ողբերգական հանգուցալուծման նախաշեմը:

Համաձայն Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի՝ Հայաստանում վերափոխումները պետք է անցկացվեին արագ, վեց ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև ռուսական զորքերի դուրսբերումը Օսմանյան կայսրությանը վերադարձվելիք հայկական տարածքներից, այսինքն՝ իբրև հայկական բարեփոխումների երաշխավոր հանդես էր գալու միմիայն Ռուսաստանը:

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը նույնպես խոսում էր բարեփոխումների մասին, բայց ոչ թե «Հայաստանում», այլ «հայաբնակ գավառներում», որոնց իրականացման վերաբերյալ Դուռը իբր թե պետք է ժամանակ առ ժամանակ տեղյակ պահեր մեծ տերություններին, որոնցից յուրաքանչյուրը, սակայն, առաջնորդվում էր սեփական շահագրգռություններով: Ըստ էության, ստացվում էր, որ բարեփոխումների իրականացման երաշխավոր չկար: Աբդուլ Համիդի կառավարությունը շատ լավ հասկացավ դա և շուտով անցավ հայ ժողովրդի նկատմամբ ահաբեկչության և զանգվածային կոտորածների քաղաքականության՝ 1890-ական թվականներից արդեն փաստորեն սանձազերծելով

հայ ժողովրդի ցեղասպանության քաղաքականություն, որը գրեթե անտարբերությամբ դիտվեց մեծ տերությունների և նրանց ղեկավարների կողմից:

Պրոֆ. Ն.Հովհաննիսյանը նշում է, որ այս երկրորդ փուլում Հայկական հարցի լուծման հետևյալ հնարավոր եղանակները կային, որոնք բոլորն էլ մնացին տեսության բնագավառում. ա) ռեֆորմների անցկացում հայկական վեց նահանգներում՝ երբեմն նաև հավելելով Տրապիզոնի նահանգը: Հեղինակի հիմնավորված կարծիքով՝ Հայկական հարցի լուծման այս եղանակն ուներ մի շարք առավելություններ: Առաջինը և կարևորը այն էր, որ օսմանյան կառավարությունն ընդունում էր, որ կայսրությունում հայերի դրությունը ծանր էր, որ հիրավի կար Հայկական հարց, որը պետք է լուծվեր: Այնուհետև, լուծման այդ եղանակը ընդունելի էր բոլոր երեք կողմերի համար էլ, այսինքն՝ հայերի, Օսմանյան կայսրության և մեծ տերությունների և այն, որ ռեֆորմները վերաբերում էին հիմնական հայկական նահանգներին: Բայց փաստ է նաև, որ ռեֆորմները կյանքի կոչելու տեսակետից իրական լծակներ չկային, որովհետև մեծ տերությունները բավարարվում էին միայն բանաձևեր ընդունելով, իսկ թուրքական կողմը վարում էր երկերեսանի քաղաքականություն՝ մի կողմից հրապարակայնորեն ընդունելով ռեֆորմների կարիքը, իսկ մյուս կողմից էլ հրահրելով և կազմակերպելով կոտորածներ: Ըստ էության, ռեֆորմների ուղիով Հայկական հարցը լուծելու եղանակը վերածվեց կոտորածների միջոցով հարցը լուծելու եղանակի:

Հայկական հարցի լուծման մյուս եղանակը կայսրության ապակենտրոնացումն էր՝ ազգային ծայրագավառներին լայն իրավունքների, անգամ ինքնավարության շնորհումը: Այդ տեսակետն էին զարգացնում Աբդուլ Համիդի զարմիկ արքայազն Սաբահեդդինը և 1912 թ. Կահիրեում արաբների հիմնադրած «Լամարքազիա» («Ապակենտրոնացում») կուսակցու-

թյունը, որի հիմնական պահանջն էր կայսրության ոչ թուրքական վիլայեթներին ինքնավարության տրամադրումը: Իրականացման դեպքում սա կարող էր լինել Չայկական հարցի լուծման լավագույն եղանակներից մեկը:

Եվ, վերջապես, երրորդ եղանակը «Լեռնային Լիբանանի մոդելն» էր, ըստ որի՝ սուլթանի կողմից մեծ տերությունների հավանությամբ նշանակվում էր քրիստոնյա կառավարիչ, իսկ երկիրը վայելում էր վարչական ինքնավարություն: Չայեթը պահանջում էին ավելի չափավոր ինքնավարություն, քան Լեռնային Լիբանանին էր: Ահա այս «մոդելն» էր, որ կյանքի պետք է կոչվեր 1912-1914 թվականներին: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի դիմումի հիման վրա ռուսական կառավարությունը ներկայացրեց բարեփոխումների նախագիծ, ըստ որի՝ նախատեսվում էր հայկական վեց վիլայեթները միավորել մեկ հայկական պրովինցիայի մեջ, որի նահանգապետին պետք է նշանակեր սուլթանը հինգ տարի ժամանակով եվրոպական տերությունների համաձայնությամբ: Բացի այդ, կարևոր էր նաև, որ ցրվելու էին համիդիե գնդերը, արգելվում էր հայկական հողերում Բալկաններից գաղթած մահմեդականների բնակեցումը:

Այս անգամ ևս տերությունների վերաբերմունքը տարբեր եղավ նախագծի նկատմամբ: Անգլիան և Ֆրանսիան սկզբունքորեն ընդունեցին այն, բայց ակտիվ աջակցություն ցույց չտվեցին Ռուսաստանին, մինչդեռ Եռյակ Դաշինքը և, հատկապես Գերմանիան, հանդես եկավ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման ծածկման պահանջով, որպեսզի տապալի ռուսական նախաձեռնությունը: Չնայած համառ դիմադրությանը՝ Ռուսաստանը ի վերջո հասավ այն բանին, որ բավականին սկզբունքային զիջումների գնով ստորագրվեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որով Արևմտյան Չայաստանը բաժանվելու էր եր-

կու գոտիների, որոնց կառավարիչները պետք է օտարերկրացիներ լինեին, որոնք նշանակվելու էին սուլթանի կողմից եվրոպական տերությունների հանձնարարությամբ: Սակայն այն այնպես էլ չիրագործվեց, քանզի վրա հասավ Առաջին աշխարհամարտը և հայասպանությունը:

Գրքի 4-րդ գլխի խորագիրն է՝ «Չայկական ցեղասպանությունը՝ հայասպանությունը»: Լիովին պետք է համաձայնվել պրոֆ. Ն.Յովհաննիսյանի այն բացատրության հետ, որ նա տալիս է 1915 թ. և հետագա տարիների հայասպանական իրադարձություններին: «1915 թ. ցեղասպանությունը,- գրում է նա,- ամենևին էլ պատահական կամ անսպասելի մի բան չէր: Այն տրամաբանորեն բխում էր թուրքական սուլթանների և, ավելի ուշ, երիտթուրքերի նախորդ տասնամյակների, եթե ոչ դարերի ընթացքում վարած գազանային, ազգայնամոլ և արյունախում քաղաքականությունից հանդեպ ոչ թուրք ազգությունների, ներառյալ հայերին: Դա առանձին անհատների քաղաքականություն չէր, այլ պետական պաշտոնական քաղաքականություն...» (Էջ 64):

Ն.Յովհաննիսյանը գտնում է, որ Օսմանյան կայսրության փտած էությունը միանգամայն ճիշտ է լուսաբանել ժամանակակից եզիպտացի մտածող և պատմաբան պրոֆ. Մուհամմադ Շակիկ Ղարբալը, որն ընդգծել է, որ Թուրքիան չէր հենվում նոր գաղափարների վրա, այլ շարունակում էր նախապատվություն տալ պատերազմների, նվաճումների և բռնությունների ուղուն: Այնուհետև, երբևէ չի պատահել, որ օսմանյան իշխողները գոնե փոքր-ինչ փոխեն իրենց քրիստոնյա քաղաքացիների՝ ռայաների կացությունը, հույսի մի թույլ նշույլ տան նրանց: Այդ իշխողների հաստատ համոզումն այն էր, որ ռայան պիտի մնա ռայա: Նման քաղաքական վարքագիծը չէր կարող չվերածվել ողբերգության քրիստոնյա ժողովուրդների համար, ի դեմս հետապնդումների, բռնությունների,

կոտորածների, ցեղասպանության և դրանով իսկ կայսրության անկմանն ու կործանմանն ինքնըստինքյան: Նման անատոմիա ունեցող երկրի համար ցեղասպանությունը բնական մի երևույթ էր և կիրառվեց արևմտահայերի նկատմամբ:

Ժամանակի ընթացքում Օսմանյան կայսրությունում ձևավորվեց թուրքերի, քրդերի, չերքեզների սպանությունների ու կոտորածների մեջ թրծված ու հմտացած մի հոծ խավ: Դա մի տեսակ մասնագիտություն էր նրանց համար, ապրելաձև, անօրինական ճանապարհով հարստանալու անսպառ աղբյուր: Միաժամանակ դա միջոց էր որոշակի տեղ ապահովելու օսմանյան պետական նվիրապետության մեջ: Այդ յուրահատուկ խավը հայասպանության նախաձեռնողների և աջակիցների բնորոշ երևույթներից է:

Ամենայն իրավամբ հեղինակը ուշադրություն է հրավիրում այն ուշագրավ և տխուր հանգամանքի վրա, որ ոչ թուրք ազգությունների հետապնդումներին ու կոտորածներին թուրք ժողովուրդն այնպես էր սովորել ու վարժվել, որ դրանց դեմ չէր ընդվզում, այլ դիտում էր իբրև սովորական, ինքնըստինքյան բնական մի երևույթ: Միանգամայն հասկանալի է, որ նման մի երկրում շատ հեշտ էր սանձագերծել հետադիմական, տգետ ու արյունուշտ ուժերը և իրագործել կոտորածներ ու ցեղասպանություն: Օսմանյան կայսրության անատոմիայի մասնագիտական հետազոտությունը թույլ է տալիս մեզ մակաբերել, որ վերջինս ծնում էր հանցագործություն ու ցեղասպանություն, ուստի տիպաբանորեն կարող է լիովին համարվել «ցեղասպանական պետություն»:

Դեպի կոտորածներ ու ցեղասպանություն միտված օսմանյան պետական համակարգը համապատասխան տեսական հիմնավորում տվեց հայասպանության հրահրմանն ու իրագործմանը: Նախնական փուլում շրջանառության մեջ դրվեց օսմանականության հայեցակարգը, որի

համաձայն՝ կայսրության բոլոր մահմեդական և քրիստոնյա ազգությունները՝ թուրքերը, արաբները, քրդերը, հայերը, հույները, ասորիները, սլավոնները և այլն, հայտարարվում էին օսմանցիներ և պետք է կազմեին միացյալ մեկ օսմանյան ազգ: Իրավացիորեն հեղինակը նշում է, որ օսմանականությունը թերևս համաձուլման առաջին հրապարակային մանիֆեստն էր: Բայց ոչ թուրք ժողովուրդները իսկույն պատկերացրին, թե ինչ սպառնալիք է պարունակում օսմանականությունը, և միասնաբար հանդես եկան ու տապալեցին այն:

Չեթագայում՝ երիտթուրքերի իշխանության գլուխ գալուց հետո, օսմանյան «տեսաբաններն» ասպարեզ նետեցին թուրքականություն-թուրանականություն տեսությունը, որն ավելի վտանգավոր դուրս եկավ, առավել ևս, որ դարձավ պաշտոնական տեսություն:

Թուրքականությունը երկու երես ունի. մեկը շրջված է դեպի ներս, դեպի Օսմանյան կայսրության բոլոր ազգությունները: Նրա գերնպատակն է քաղաքական, ռազմական և սոցիալական առումով բարենպաստ բարոյաիդեալական մթնոլորտ ստեղծելը՝ բոլոր մահմեդականներին ու քրիստոնյաներին թուրքերի վերածելու համար: Եվ, որ եկանն է, ոչ միայն թուրք հռչակելու, այլև բռնի թուրք դարձնելու, թրքացնելու: Ընդ որում, թուրքացումը պետք է իրականացվեր երեք փուլով, այն է՝ մահմեդականների և քրիստոնյաների բռնի թուրքացում, միաժամանակ քրիստոնյաների բռնի մահմեդականացում, որից հետո էթնիկական գտումներ, որը ենթադրում է հրաժարվող բոլոր էթնիկական խմբերի տեղահանություն և, վերջապես, ամբողջ էթնիկական խմբերի և ժողովուրդների վերացում, այսինքն՝ ցեղասպանություն: Այս քաղաքականության նպատակն էր ստեղծել «մաքուր» կամ «զուտ» թուրքական պետություն՝ հիմնված ըստ էության ռասիստական մոտեցման վրա, որը ենթադրում է թուրքական էթնոսի գերազանցությունը: Երկրորդ

նպատակն էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, կանխել նրա գալիք մասնատումը:

Թուրքականության տեսության հակադարձ երեսն ուղղված էր կայսրության սահմաններից դուրս գտնվող, այն է՝ Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Ղրիմի, Պովոլժիեի և այլ վայրերի թյուրքալեզու ժողովուրդներին: Գաղափարն էր ստեղծել «Թուրանական մեծ կայսրություն», որը կտարածվեր Արևելյան Միջերկրականից մինչև Արևելյան Սիբիր և Չինաստան: Այս ցնորամիտ ծրագիրը, որ դեռ այսօր էլ փայփայում են որոշ թուրք գործիչներ, համաթուրքականության միջուկն է, իսկ նման ծավալապաշտական բաղձանքները լուրջ վտանգ են տարածաշրջանի երկրների, հատկապես Ռուսաստանի և Իրանի կենսական շահերի համար: Այն խիստ մեծ վտանգ էր Հայաստանի համար, քանզի վերջինս ընկած էր համաթուրքականության ճանապարհին: Հայերի առջև ծառայել էր դիլեմա՝ կամ ընդունել թուրքականությունը, կամ վերանալ նրա ճանապարհից: Այստեղից էլ հստակ է դառնում, թե ինչու էր երիտթուրքերին պետք հայասպանությունը:

Մեկ ուրիշ գործոն ևս կար, որով պայմանավորված էր հայասպանությունը:

Ու, որքան էլ պարադոքսային թվա, նշում է պրոֆ. Ն.Հովհաննիսյանը, Բալկանյան ժողովուրդների ազատագրումն էր թուրքական լծից: Բայց եթե Բալկանները ծայրամաս էին, ապա այլ էր Արևմտյան Հայաստանը, որը համարվում էր Փոքր Ասիայի սիրտը: Արևմտյան Հայաստանի կորուստը կնշանակեր ոչ միայն կայսրության փլուզում ու անկում, այլև հարցականի տակ կդնել նույնիսկ բուն թուրքական պետության գոյությունը: Եթե դրվեր այդ հարցը, ապա, թուրք գործիչների մտայնությամբ, խիստ դժգույն կլիներ Թուրքիայի ապագան: Ահա ինչու էր թուրքին պետք հայասպանությունը: Եվ Առաջին աշխարհամարտը երիտթուրքերին ընծայեց երկար սպասված հարմար առիթը՝

կենսագործելու իրենց դիվային ծրագիրը: Բոլոր նախադրյալները կային դրա համար. կար պետական համակարգ, որն ունակ էր կիրառելու բռնություններ և զանգվածային արյունալի կոտորածներ և մեծապես փորձված ու վարժված էր իրահանգելու և կազմակերպելու դրանք, կար համապատասխան տեսություն (թուրքականություն և համաթուրքականություն), համապատասխան մեխանիզմ և նպաստավոր միջազգային իրադրություն:

Այսպիսիք էին ընդհանուր գծերով XX դարի առաջին ցեղասպանության հայասպանության նախադրյալներն ու պատճառները:

Մեկ ուժ կար միայն, որ ի վիճակի էր միջամտել և կանգնեցնել երիտթուրքերին: Այդ ուժը թուրքերի դաշնակից Գերմանիան էր, որը առաջնորդվելով իր աշխարհաքաղաքական շահերով՝ չարեց այդ: Այսպիսով՝ խրախուսված ներքին ու արտաքին նպաստավոր պայմաններից՝ երիտթուրքերի առաջնորդներ Թալեաթը, Էնվերը և Ջեմալը, որոնք արդեն գործել էին մեկ հանցանք՝ պատերազմի բոցերի մեջ նետելով երկիրը, կատարեցին նաև երկրորդ դժոխային հանցագործությունը՝ հայասպանությունը հայերի հազարամյակների հայրենիքում:

Ելնելով կայսրությունը թուրքացնելու իթքիհադ վե թերաքը-ի Սալոնիկի 1911 թ. համաժողովի որոշումից՝ պատերազմը բռնկելուց անմիջապես հետո ներքին գործոց նախարար Թալեաթի ստորագրությամբ բոլոր նահանգապետերը գաղտնի հրահանգ ստացան մինչև վերջին մարդը հայերին ոչնչացնելու մասին: Այդ նպատակով ստեղծված Թեշքիլաթը մահուսեն (Հատուկ կազմակերպությունը) լիովին արդարացրեց իրեն ցեղասպանության գործում:

Այնուհետև պրոֆ. Ն.Հովհաննիսյանը նկարագրում է բուն հայասպանությունը: Հատկանշական է, որ սկզբնապես փոքր խմբերով կոտորեցին բանակ զորակոչված

հայ տղամարդկանց, որպեսզի հայերին զրկեն հնարավոր զինական ուժերից: Այդպես ոչնչացվեցին 60 հազար հայ զինվորներ մի ամբողջ պատկառելի թվաքանակով բանակ: Այնուհետև ոչնչացվեց հայ մտավորականությունը, որից հետո հերթը հասավ անպաշտպան ու անղեկավար մնացած կանանց, երեխաներին ու ծերերին, այն էլ պատերազմական պայմանների նկատառումներով տեղահանության պատրվակով:

Պրոֆ. Ն.Հովհաննիսյանը ընդգծում է, որ հայ տարագիր բեկորներին անցկացնելով արաբական անապատներով՝ երիտթուրքերը հետապնդում էին երկու նպատակ. առաջինն այն էր, որ նրանք համոզված էին, որ սովահար, հիվանդ ու հյուծված հայերը չեն դիմանա դժոխային պայմաններին և կուլ կզնան անապատներին:

Հիրավի, տասնյակ հազարավորների համար այդպես էլ եղավ: Երկրորդ՝ երիտթուրքերը կարծում էին, որ իսլամական արաբական ծայրագավառները թշնամաբար կդիմավորեն քրիստոնյա հայերի տարագիր կարավանները և կկոտորեն նրանց: Բայց այդ հարցում նրանք չարաչար սխալվեցին: Հեղինակը ցույց է տալիս, որ արաբները մարդկային լավագույն վերաբերմունք դրսևորեցին տարագիր հայերի նկատմամբ: Եվ միանգամայն իրավացի է հեղինակը, երբ ընդգծում է, որ եթե չլիներ արաբ ժողովրդի, նրա ազգային ու կրոնական ակնառու դեմքերի և առանձին անհատ պաշտոնյաների մարդասիրական մոտեցումը, հայերի կորուստները շատ ավելի մեծ ու ծանր կլինեին: Պրա վառ վկայությունն է նաև այն, որ Առաջին աշխարհամարտից հետո Միրիայում, Լիբանանում, Իրաքում, Հորդանանում և Եգիպտոսում կազմավորվեցին հայկական պատկառելի համայնքներ, որոնք հարատևում են առ այսօր:

Հեղինակը իրավացիորեն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ չնայած ռազմական գրաքննությանը և խստագույն միջոցառումներին, որպեսզի

պատերազմի ընթացքում լուրեր չտարածվեին, ամբողջ աշխարհն իմացավ երիտթուրքերի ձեռքբերով կատարված հայասպանության մասին, և որ, ըստ էության, դիտվեց իբրև հանցագործություն մարդկության դեմ:

Կարծում ենք, որ միանգամայն ճիշտ է վարվում պրոֆ. Ն.Հովհաննիսյանը, գետնողելով Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների 1915 թ. մայիսի 13-ի համատեղ պաշտոնական հայտարարության լրիվ տեքստը, որով հայկական կոտորածների պատասխանատվությունը դրվում էր Բ. Դաշն վրա: Համաձայն ենք լիովին նաև հարգարժան պրոֆեսորի այն դիտարկմանը, որ անգլոֆրանս-ռուսական համատեղ հայտարարությունը վերնագույն, անվիճելի և աննախադեպ կարևորության փաստաթուղթ է: Եվ այդ միտքը նա հիմնավորում է հետևյալ միանգամայն ճշգրիտ իրողություններով: Պրանց մեջ առաջինն այն էր, որ հիշյալ հայտարարությունը 20-րդ դարի թերևս առաջին փաստաթուղթն էր, որը դատապարտում էր մեկ այլ կառավարության և նրա անդամներին կատարած հանցագործության համար: Երկրորդ՝ հայտարարության բովանդակությունը, տրամաբանությունը և բերված վկայությունները, ըստ էության, կատարված հանցանքը դատապարտում են իբրև ցեղասպանություն, թեև այդ բառը, հասկանալի պատճառներով, չի օգտագործված, որքանով որ այն պաշտոնական շրջանառության մեջ է դրվել 1944 թվականին: Երրորդ՝ փաստաթղթում ընդգծված է այն կարևոր միտքը, որ հայասպանությունը ոչ միայն հանցանք է հայերի նկատմամբ, այլև ողջ մարդկության ու քաղաքակրթության: Հետևաբար՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազըմը, Բեհեդդին Շաքիրը և մյուս երիտթուրք ղեկավարները մարդկության և քաղաքակրթության նկատմամբ ոճրագործներ են: Նման կարևոր պաշտոնական փաստաթղթի ճշմարտացի արժևորումը տեղին է, քանզի հայ պատմագրության մեջ սովոր-

րություն է եղել մշտապես քամահրել այդ արժեքավոր փաստաթուղթը, բայց պրոֆ. Ն.Յովհաննիսյանի գնահատականը ճիշտ է և մեծապես տրամաբանված:

Այնուհետև պրոֆ. Ն.Յովհաննիսյանը վկայակոչում է, թե ինչպես են բնութագրել և դատապարտել 1915 թ. հայկական ցեղասպանությունը Հռոմի Բենեդիկտոս XV պապը, մահմեդական աշխարհի մի այնպիսի անվիճելի հեղինակություն, ինչպիսին Մեքքայի շեյխի Յուսեյն իբն Ալի ալ-Յաշիմին և ուրիշներ:

Ամփոփելով հայկական ցեղասպանության դաժան ու տխուր հետևանքները պրոֆ. Ն.Յովհաննիսյանը նշում է, որ հայասպանությանը զոհ գնացին ավելի քան 1.5 միլիոն հայեր, հարյուր հազարներ տարագրվեցին բռնի կերպով և սփռվեցին աշխարհով մեկ, իսկ հայերի բնօրրանը զրկվեց իր բնիկ գավազներից: Ոչնչացվեցին բյուրավոր պատմամշակութային հուշարձաններ, հայերը կորցրին Յայկական լեռնաշխարհի 9/10 մասը: Ճշմարիտ է հեղինակը, երբ գրում է. «Հայերի և մյուս ազգությունների ցեղասպանությունը իր կնիքը դրեց կայսրության վրա ինքնըստինքյան, քանզի այն հեռացավ պատմության թատերաբեմից իբրև ցեղասպանության հայրենիք և ցեղասպանական պետություն: Այն մաս իր բացասական կնիքը դրեց ժամանակակից Թուրքիայի միջազգային վարկանիշի և հեղինակության վրա իբրև Օսմանյան կայսրության ժառանգորդի: Հատկապես որ այսօրվա Թուրքիայի ղեկավարությունը համառորեն ժխտում է ցեղասպանության փաստը» (էջ 97):

Վերջաբանում հեղինակը անդրադառնում է հայկական ցեղասպանության ճանաչման գործընթացին, զարգացման ներկա իրականություններին:

Աշխատության մեջ, ցավոք, տեղ են գտել որոշ վրիպումներ և սխալներ: Այսպես, էջ 68-ում կարդում ենք, որ «Թուրանական մեծ կայսրությունը պետք է ընդգրկեր «Վիթսարի տարածք» Փոքր Ասիայի

արևելյան ափերից մինչև Արևմտյան Սիբիր և անգամ Չինական սահման»: Փոքր Ասիան արևելյան ափեր չունի, հավանաբար պետք է լիներ՝ «Արևելյան Միջերկրականից մինչև...» և այլն: Էջ 61-ում և այլուր, խոսելով Եռյակ դաշինքի մասին, իբրև նրա անդամներ հեղինակը հիշատակում է Գերմանիան, Ավստրոհունգարիան և Թուրքիան, մինչդեռ Թուրքիան կամ, ավելի ճիշտ, Օսմանյան կայսրությունը, միայն պատերազմի ժամանակ է դաշնակցել Կենտրոնական պետություններին: Երրորդ անգամ եղել է Իտալիան, որը Դաշինքից հեռացել է միայն 1915 թ. և միացել Անտանտին: «Թեշքիլաթը մահուսեն» դարձել է «Բեշքիլաթը մահուսեն» (էջ 75): Ժամանակի Գերմանիայի կանցլեր Բեթման-Յոլվեգի ազգանունը անգլերենում տառադարձված է Golweg, որը միշտ չէ, պիտի լինի Holweg (էջ 90): Էջ 96-ում կարդում ենք. «Արևելյան Հայաստանում և ամբողջ Օսմանյան կայսրությունում կոտորվեցին 1.5 միլիոն հայեր»: Ակնհայտ է, որ սա վրիպակ է, պետք է լինի «Արևմտյան Հայաստանում»:

Ամփոփելով մեր խոսքը պրոֆ Ն.Յովհաննիսյանի գրքի մասին՝ պետք է ընդգծենք ևս մեկ անգամ, որ հեղինակը հրապարակ է հանել անգլալեզու ընթերցողի համար մի մեծապես կարևոր ու թարմ աշխատություն, որտեղ մանրակրկիտ ջանասիրությամբ և համակողմանի տրամաբանված փաստարկումներով տալիս է հայոց դժխեմ ցեղասպանության պատճառները, պատմությունը և հետևանքները: Իր մատչելիությամբ, տրամաբանական կուռ կառուցվածքով, համոզականությամբ, այն մեծարժեք լուծա է ցեղասպանագիտության բնագավառում:

ՎԱԼՏԵՐ ԴԻԼՈՅԱՆ

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

<b>Ավետիսյան Մարտ Ասատուրի</b>	ՀՀ ՊԿՊԱ-ի աշխատակցուհի
<b>Բայրուրոյան Վահան Առաքելի</b>	ԵՊՀ-ի Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Դիլոյան Վալտեր Արտաշեսի</b>	ԵՊՀ-ի ընդհանուր պատմության ամբիոն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Խաչատրյան Ժենյա Կամսարի</b>	ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու
<b>Խառատյան Ալբերտ Արմենակի</b>	«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Հայրունի Աշոտ Նորայրի</b>	«Հ. Աճառյան» համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու
<b>Հարությունյան Ավետիս Հմայակի</b>	Խ. Աբովյանի անվան ՀԳՄԻ, հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու
<b>Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի</b>	ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Ղազախեցյան Վաղդիմիր Նահապետի</b>	ԳԱԱ պատմության ինստիտուտի խորհրդային հասարակության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Ղլեչյան Վալերի Գուրգենի</b>	Խ. Աբովյանի անվան ՀԳՄԻ ընդհանուր պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների դոցենտ
<b>Մանասերյան Ռուբեն Լևոնի</b>	ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր
<b>Մելքոնյան Աշոտ Աղասիի</b>	ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր
<b>Միրզոյան Սոնյա Սուրենի</b>	Պատմության կենտրոնական պետական արխիվի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու
<b>Մուրադյան Պարույր Մամբրեի</b>	ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<b>Պողոսյան Սամվել Անդրանիկի</b>	Խ. Աբովյանի անվան ՀՄՊԳ-ի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ
<b>Սիմոնյան Վահրամ Ռուբենի</b>	թիվ 120 դպրոցի պատմության ուսուցիչ
<b>Վիրաբյան Ամատունի Սասունիկի</b>	պրոֆեսոր, ՀՀ Արխիվային գործի վարչության պետ, պատմական գիտությունների դոկտոր
<b>Քյուրքչյան Ալբերտ Հայրիկի</b>	Խ. Աբովյանի անվան ՀՄՊՀ-ի Ռուսաստանի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր
<b>Քոսյան Արամ Վաղարշակի</b>	ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր

94  
m-30

h2

